

Արա Մարկոսյան

Ռ-ԱԳ-ԵՈՍ
ԱՎԳ-ԱԼԲԵԳ-ՅԱՆ

Էջեր կյանքի և գործի

ԵՐԵՎԱՆ 2006

9(092)
ՎՐ-37

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Արա Մարկոսյան

ԹԱԴԵՈՍ
ԱԿԴԱԼԲԵԳՅԱՆ
Էջեր կյանքի ու գործի

4067

Երևան 2006



Նվիրվում է

**Թադեոս Ավդալբեգյանի
ծննդյան 120 ամյակին
(1885-2005)**

ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ԹՅՈՒՆ

Խմբագրի առաջաբանը	7
Հայերեն «Կապիտալի» մասին	19
I-Եզակի թարգմանությունը	20
II-Առաջադրված խնդիրն ու միջավայրը	22
III-Միանձնյա թարգմանիչը	24
IV-... եղևի և մեկը	25
V-Ելակետի բնութությունն ու հազվագյուտ I հատորը	27
VI-Քնահատման շափանիչը	30
VII-Կասկածելի շափացույցը	39
VIII-Բեկում տերմինաբանության մեջ	43
IX-Հետադարձ հայացքն ու հետքն թաց քայլերը	47
X-... «պետք էր հայացնել»	50
XI-... «հին ու նոր լեզուների անհամար քաղվածքներ»	52
XII-Էվոլյուցիոն թռիչք	56
XIII-Վիժակցված նմուշահատն ու նսեմացված հանձարը	59
Վերարտադրության թեորիան	60
I-Պարզ վերարտադրություն (պ/վ)	61
II-Ընդլայնված վերարտադրություն (ր/վ)	82
«ԻՇՄԱՏԱԿԱԳՐԱՆԹՅՈՒՆՆԵՐԸ	94
«Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան»	134
Հավելված	
Հայերեն «Կապիտալի» ձեռագրերի գործոցում	145
Խորհրդակցություն կուսիքում	146
Կուսիքի թարգմանիչների խորհրդակցության կարողացված զեկուցման առաջաբանը	149
«Կապիտալի» II ու III, հատորների հայերեն թարգմանության ու տերմինաբանության հարցերից	152
«Բառարարդումներ» բաժնի նախաբանը	156

Բառարարդումներ	
«Կապիտալի» II ու III, հատորներում	158
Հայերեն տնտեսագիտական տերմինաբանության կարևոր նվաճումներից մեկը	164
Դարձվածքներ «Կապիտալում»	166

Արաբայա Ավդալբեգյան

«Կապիտալի» III հատորի հայերեն թարգմանության և տպագրության պատմությունից	
1947թ. ապրիլի 8	170
1947թ. հոկտեմբերի 20	171

«Zur Kritik»-ի տխուր պատմությունը

174	174
-----	-----

Մեջբերումներ նամակներից

175	175
Դիմումներ	
ՀՄԽՍ Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին	180
Գ. Մարքսի «Բաղաբատնեություն րենադատության շուրջը» գրքի հայերեն հրատարակության մասին զեկուցման ԹԵԶԻՄՆԵԲ	181
Կուսերաթի նախագահությանը	183
В редакцию газеты «ПРАВДА»	185
«Zur Kritik» համեմատական ցանկ	188

Резюме	192
--------------	-----

Zusammenfassung	196
-----------------------	-----

Summary	200
---------------	-----

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ

տպագրված աշխատությունները	205
---------------------------------	-----

Անվանացանկ	212
------------------	-----

Խմբագրի առաջաբանը

20-րդ դարի հայ մտավորականության փայլուն համաստեղության մեջ իր արժանի տեղն ունի ականավոր գիտնական, հասարակական գործիչ, Հայաստանում բարձրագույն կրթության սկզբնավորողներից մեկը՝ Թադևոս Ավդալբեգյանը:

Հայ նոր սերունդը, ցավոք, շատ բան չգիտի մեծատաղանդ այդ մարդու, նրա գիտական խիզախումների մասին: Բայց ափսոս: Հայ տնտեսագիտական մտքի ականավոր ներկայացուցիչ, պատմագիտական ու բանասիրական մեծարժեք հետազոտությունների հեղինակ, գիտական տեսքտերի խորթափանց մեկնաբան, թարգմանչական արվեստի խոշոր վարպետ, պարկեշտ ու ազնվագույն քաղաքացի,- ահա այն բնորոշիչները, որոնցով ժամանակակիցները արժևոգորում էին նրա վաստակն ու մարդկային արժանիքները:

Թադևոս Հայրապետի Ավդալբեգյանը ծնվել է 1885թ. Պարսկաստանի Մակու քաղաքում, որտեղ և ստացել է սկզբնական կրթությունը, ապա 1895թ. րնդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Ուշիմ ու հետաքրքրասեր պատանին հենց սկզբից աչքի է րնկնում իր աշխատասիրությամբ ու ինքնուրույն դատելու կարողություններով: Բոլոր առարկաները նրա համար հետաքրքիր էին, բայց հատկապես արտակարգ րնդունակություններ էր դրսևորում լեզուների և հասարակագիտական առարկաների ոլորտներում: Օտար լեզուներից նախընտրել էր գերմաներենը և ուսումնառության տարիներին այնպես էր տիրապետել այդ լեզվին, որ զարմանք էր առաջ բերել շրջապատում:

Ճեմարանն ավարտելուց հետո 1907-1913թթ. Թադևոսը ուսուցչություն է անում Մեծ Ղարաբիլիսա գյուղում: Այդ տարիներին էլ սկսվում է նրա գրական-ստեղծագործական կյանքը: 1913թ. նա տպագրության է հանձնում Միքայել Նաբանդյանի մասին աշխատությունը, որը րնչական մարմինների կողմից բռնագրավվում է տպարանում, իսկ հեղինակը դատի է

տրվում «պետական ու հասարակական կարգը տապալելու փորձ անելու» մեղադրանքով: Խուսափելով ռուսական կանոնադրման հետևանքներից, նա անցնում է Պարսկաստան, որտեղից վերադառնում է ցարիզմի տապալումից հետո:

1918-1919թթ. Ավդալբեգյանը Հայաստանի սոցիալ-դեմոկրատական խմբակցության անդամ էր և նույն հոսանքի «Վայժ» թերթի խմբագիր:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ավդալբեգյանը նշանակվում է նորաբաց Պետհրատի գիտա-մարքսիստական բաժնի վարիչ: Հրատարակչության առաջին գիրքը լինում է Կարլ Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության Ստեփան Շահումյանի թարգմանության հրատարակումն իր խմբագրմամբ և առաջաբանով: Այնուհետև նրա խմբագրությամբ այստեղ լույս են տեսնում ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ աշխատություններ, հիմք է դրվում մարքսիզմի դասականների հատորային գրականությանը:

Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) պաշտոնաթերթի 1921թ. հոկտեմբերի 16-ի համարում տպագրվել էին Հովհ. Թումանյանի, Թադ. Ավդալբեգյանի, Լևոնի, Գևորգի Գևորգյանի, Տիգրան Հախումյանի և ուրիշների հողված-կոչերը սովի ու համաճարակի ճիրաններում գալարվող հայ ժողովրդին շուտափույթ օգնություն կազմակերպելու մասին:

Թ.Ավդալբեգյանն իր «Pro Armenia-Հայաստանի համար» հողված-կոչում գրում էր.

«Անհրաժեշտ է թողնել արտասահմանի կաֆեներում բազմած հեռավոր հայրենիքի համար քաղաքական դեղատոմսեր ու պարտիզանական դավադրություններ կազմելու սովորությունը, որի հետևանքները կրում է Լեհիի մեջ գտնվող ժողովուրդը միայն... պետք է հողալ ավերակ Լեհիի առունների ու ճանապարհների, ծխնելույզների ու հանքահորերի, Լեհրագործական դպրոցների ու տեխնիկական ճեմարանների, կուլտուրական տնտեսությունների ու սպիտակ ածուխի մասին (րնդգծումը մերն է):-Հ.Ս.) Կարճ՝ պետք է մտածել ու տրնել Լեհիի տնտեսական վերածնության համար, որ մի ժողովրդի հասարակական ու քաղաքական գործության պատվանդանն է կազմում»:

Այս խոսքերը չեն դառնում սոսկ մերկապարանոց դեկլարացիա թղթի վրա, այլ նրա գրչի տակից դուրս են գալիս

«Ներկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից ու նրանց գործնական հետևանքները», «Նոր Բայազդի հին առուններն ու շրջակայքի ոռոգման հեռանկարները», «Արարսի հնադարյան հունն Արարատյան դաշտում», «Ջրի կոփը Հայաստանի մեջ IX դարում», «Հայաստանում բամբակագործության վերականգնման և րնդլայնման 5-ամյա պլան (1924-1929թթ.)» և այլ գուտ գործնական նշանակության պատմաբանասիրական աշխատությունները:

Հատկանշական են այստեղի գուգադրություններ՝ «պատմությունից» և «հետևանքները» «հին առուններն» ու «հեռանկարները», «հնադարյան հունն» ու «ներկա ու գալիք ծրագրերը» և այլն, որոնց իմաստը անցյալի Լեհրային մնացուկներն այսօրվա պահանջներին ծառայեցնելու խնդիրն էր: Ջրային օբյեկտների՝ գետերի, առունների ցամաքած հին ու հնադարյան հունները պատրաստի ջրանցքներ են, որոնք նյութական շնչին ներդրումներով կարող են լրացնել ջրային ֆոնդի պակասը սակավաջուր Հայաստանում: Բացի այդ IX դարում ջրի կռվի ու VII դարում Սեանա լճի մասնակի դատարկման պատմական փորձերն այսօրվա ոռոգման նպատակներով կարող են օգտագործվել:

«Մեր հին առունները պետք է դադարեն հնության հուշարձաններ լինելուց և դառնան կենդանի կյանքի գործունե կրակներ: Հին առունները մեր ոսկեհանքերն են Լեհրի Լեհ-սին»,- շեշտել է գիտնականն ակնարկներից մեկի Լեհրակացության մեջ:

Բսանական թվականների առաջին տարիներին Ավդալբեգյանը դասախոսական աշխատանք է կատարում Երևանի նոր բացված Պետական համալսարանում և ուսումնական այլ հաստատություններում:

1922թ. Երևանի պետական համալսարանի հասարակագիտական և գրական-պատմական ֆակուլտետներում նա կարդում է հայ հասարակական մտքի պատմություն ու տնտեսական զարգացման պատմություն առարկաները, միաժամանակ վարում է հասարակագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը: Ամիսներ հետո նրան րնտրում են համալսարանի վարչության անդամ:

Հանրապետությունում ղեկավար կադրերի խիստ պակասը լրացնելու նպատակով 1923-ին Երևանի համալսարանին կից բացվում է առաջին բանվորական ֆակուլտետը

(բանֆակ), ուր կրթությունն պիտի ստանային իրենց գործունեությամբ աչքի բնկած պրակտիկ աշխատողներ: Բանֆակի ուսումնական բաժնի վարիչ է նշանակվում Թ.Ավդալբեկյանը:

Տանրապետության կուսակցական աշխատողների որակավորման բարձրացման համար Երևանում բացվում է կուսակցական դպրոց և Թ.Ավդալբեկյանը 1925թ. հրավիրվում է կարգալու տնտեսագիտության հիմունքներ դասընթացը:

Այդ տարիներին լիովին զբաղվում է Թ.Ավդալբեկյանի դասախոսական փայլուն տաղանդը: Անառարկելի փաստերով ու կուս տրամաբանությամբ հագեցած դասախոսությունները նրան բերեցին հզոր ինտելեկտով և հռետորական վառ տաղանդով օժտված մարդու համբավ: Դրան գումարվում էին մարդկային բարձր արժանիքները. նա ուսանողության սիրված դասախոսն էր:

Բարերախտաբար ամբողջությամբ պահպանվել ևն Թ.Ավդալբեկյանի դասախոսությունների կոնսպեկտները, որոնք, իրենց բովանդակությամբ խիստ հետաքրքրական են: Պահպանվել ևն նաև մի շարք ուսանողների գրանցած Թ.Ավդալբեկյանի դասախոսությունները՝ «մեր անփոխարինելի դասախոսին» և նման մակագրություններով:

Նրա կազմած տնտեսագիտական առարկայի կուրսը տարիներ շարունակ օրինակելի դասընթաց է եղել կուսակցական դպրոցներում և այսօր էլ հետաքրքրություն է ներկայացնում իր ոչ ստանդարտ մոտեցումներով, հանրահայտ իրողությունների նորովի և ինքնատիպ մեկնաբանություններով:

Այս դասախոսություններն ու կոնսպեկտներն առ այսօր սպասում են իրենց հետազոտողին:

1926թ. Թաղևոս Ավդալբեկյանը աշխատանքի անցավ Տայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտում և ամբողջովին նվիրվեց գիտությանը: Նորաբաց այդ գիտական օջախը, ըստ էության, Արմֆանի նախատիպն էր, որն իր հերթին նախորդել էր Տայաստանի գիտությունների ակադեմիային: Մինչև 1930թ. կեսերը լինելով այդ ինստիտուտի երկրորդ (հասարակագիտական) սեկտորի անդամ, Ավդալբեկյանը միաժամանակ հաստատության գիտաբարտուղարն էր:

1930թ. հետո, մինչև կյանքի վերջը, Ավդալբեկյանը, որպես ազատ պրոֆեսորայի տեր, զբաղվել է միայն գրական-գիտական աշխատանքով:

Ստեղծագործական կյանքի երեսուն տարիների ընթացքում (1907-1937) Թաղևոս Ավդալբեկյանը հայրենական գիտությունը հարստացրել է անանց արժեքներով, որոնք վերաբերվում են պատմագիտության, գրականագիտության, հնագիտության, վիմագրության, հայ կրոնի պատմության, հայ աղանդների պատմության, հայ ճարտարագիտության պատմության, տնտեսագիտության բնագավառներին:

Ավդալբեկյանի գրական-գիտական երկերն ընդգրկում են մեր ժողովրդի գոյության երկարատև մի ժամանակաշրջան, սկսած վաղնջական շրջանից մինչև գիտնականի կյանքի ապրած տարիները: Այդ երկասիրություններից յուրաքանչյուրն արդյունք է հեղինակի լուսավոր մտքի շողարձակման՝ միշտ լինելով նոր խոսք գիտության մեջ:

Ավդալբեկյանի մտքի զանձներից հիշատակենք միայն մի քանիսը. «Միհրը հայոց մեջ», «Խորենացու “Պատմության” ժամանակաբանության սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ», «Նոր Բայազդի նորագյուտ սեպագիրը ու նրա հնագիտական միջավայրը» ուսումնասիրությունները, Արովյանի, Նալբանդյանի, Մուրացանի, Թումանյանի և այլոց ստեղծագործությունների գիտա-վերլուծական բնությունները և տասնյակ այլ մշակումներ:

Այս բոլորով հանդերձ, այնուամենայնիվ, Թաղևոս Ավդալբեկյանի հետաքրքրությունների գլխավոր առարկան կազմել է տնտեսագիտությունը: Այս բնագավառում նա ուսումնասիրություններ է կատարել երկու ուղղությունով՝ Տայաստանի տնտեսական զարգացման պատմություն և տնտեսական տնտեսագիտություն (քաղաքատնտեսություն):

Տայաստանի տնտեսական զարգացման պատմության տարբեր խրթին հարցեր իրենց լուսաբանումն են գտել «Տայ շինականի ու գեղջկուռու աշխատավարձը հինգերորդ դարում», «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17-18-րդ դարերում ու 19-րդ դարի սկիզբներում», «Բահրան ու մյուլքը 17-18-րդ դարերում ու 19-րդ դարի սկիզբներում», «Տաս, սակ ու բաժ» և տնտեսագետի բազմաթիվ ուրիշ բարձրարժեք երկերում:

Ուսումնասիրությունների երկրորդ ուղղությունը՝ տնտեսական տնտեսագիտությունը (քաղաքատնտեսությունը) Թ.Ավդալբեկյանին զբաղեցրել է 20-ական թվականների կեսերից: Այդ ժամանակ է ստեղծվում վերաբարտադրության տեսու-

թյան վերաբերյալ Ավդալբեգյանի հրատարակած ակնարկա-
շարր, որը պետք է հիմք դառնար վերարտադրության՝ այդ
հույժ բարդ և առավել պրակտիկ նշանակության ամբողջական
թևոքիայի ստեղծման համար: Այստեղ շոշափվում էին այն
տարիներին խորհրդային տնտեսագիտության առջև ծառայած
կարևորագույն հարցեր, այդ իսկ պատճառով Ավդալբեգյանը
նշված սերիան հրատարակեց օուսերեն խորհրդային գիտա-
կան կենտրոնների մասնագետներին և րնթևրցողներին մատ-
չելի լինելու համար: Այն նախատեսված էր ոչ միայն հետա-
զո ուսումնասիրությունների տեսական պատմանդանի
ստեղծելու համար, այլ հենց գործնական քայլեր անելու նպա-
տակով: «Մեկ գործնական քայլը տաս տեսությունն արժև»,- այս
նշանարանով է ստեղծագործել նա ողջ կյանքում:

30-ական թվականների սկզբից Թադևոս Ավդալբեգյանը
հիմնովին նվիրվեց մի գործի, որը նրան բերելու էր շխամբող
համբավ: Այդ գործը Կարլ Մարքսի վիթխարածավալ երկի՝
«Կապիտալի» հայերեն թարգմանությունն էր:

Հայաստանի կոմկուսի կենտկոմը 1931թ. որոշում է րն-
դունում, որով հանձնարարում է մարքսիզմ-լենինիզմի ինս-
տիտուտին և կուսերատին ձևոնամուխ լինել «Կապիտալի»
հայերեն թարգմանությանը:

Հենց սկզբից ծագեց այն հարցը, թե ո՞ր լեզվից պետք է
կատարվի թարգմանությունը՝ օուսերենի՞ց, թե՞ գերմաներե-
նից: Որոշվեց համաշխարհային տեսական տնտեսագիտական
գրականության գլուխգործոցը թարգմանել սկզբնական բնա-
գրից՝ գերմաներենից:

Երբ վրա հասավ թարգմանիչների րնտրության հարցը,
կարծիք հայտնվեց, որ իդեալական կլիներ, եթե «Կապիտալը»
թարգմանվեր ոչ թե տարբեր անձնավորությունների, այլ մեկ
թարգմանչի կողմից: Եվ բոլորի հայացքը սնևովեց Թադևոս
Ավդալբեգյանին: Նա էր, որ կարող էր միայնակ կատարել այդ
վիթխարածավալ և գերպատասխանատու աշխատանքը:

Օտար, հատկապես եվրոպական, լեզուների տերմինների
հայացման և հայ նոր տերմինների ստեղծման ուղղությամբ
նախահեղափոխական շրջանում, հատկապես հայ մամուլի
կողմից, որոշ գործ արդեն արվել էր: Դրանում առանձնապես
նկատելի էր «Մշակ» թևրթի դերը: Խորհրդային իշխանության
առաջին տարիներին այդ խնդիրը մտավ պետական քաղաքա-
կանության ոլորտ, ուստի և 1920-1930թթ. զգալի աշխատանք

տարվեց Կուսերատում, Գիտության և արվեստի ինստիտու-
տում: Ստեղծվեցին նույնիսկ տնտեսագիտական բնույթի բա-
ռարաններ, որոնցից հիշատակելի է Մ.Տևր-Տոճակիմյանի
«Ռուս-հայերեն առևտրա-հաշվապահական տերմինների բա-
ռարանը», (Երևան, 1927թ.), որը, սակայն, շատ նեղ շրջանակ
էր րնդգրկում կամ Հ.Աձառյանի և Հ.Տոճիանիսյանի «Ռուս-
հայերեն իրավաբանական բառարանը», որի տնտեսագիտա-
կան տերմինները վերցված են Թ.Ավդալբեգյանի թարգմանած
Ա.Ի.Տյումենևի «Աշխատանքի պատմությանը» կից տերմինա-
բանական բառտևրից: Նշված տարիներին այդ գործի առա-
ջատարը եղել է Թ.Ավդալբեգյանը: Նա ստեղծել է «Ռուս-
հայերեն տնտեսագիտական տերմինաբանական բառարանը»
(Երևան, 1964), որ պարունակում է 25 000 արտահայտություն
և հետևյալ դիսցիպլիններով. ա) քաղաքատնտեսություն, բ) ֆի-
նանսագիտություն, գ) հողային հարց ու հողաշինություն, դ)
կոոպերացիայի տեսություն, ե) ապրանքագիտություն, զ)
վիճակագրություն, լ) տնտեսության պատմություն:

Մինչև 30-ական թվականները հրատարակված տնտեսա-
գիտական բառարաններն ավելի շատ պատմական-բացատրա-
կան բնույթի էին, մինչդեռ նույն ժամանակաշրջանում Թ.Ավ-
դալբեգյանի կազմած բառարանն ու բառտևտրը արդեն թարգ-
մանական-տերմինաբանական են:

1931 թ. հոկտեմբերին Ավդալբեգյանը ձևոնամուխ եղավ
«Կապիտալի» թարգմանությանը, զուգրնթաց շարունակելով
տերմինաշինական լարված աշխատանքը: Դա անխուսափելի
էր, քանի որ տերմինների եղած շտեմարանը այլևս չէր համա-
պատասխանում հրատարակչական-տպագրական գործի վե-
րելքին: Անհրաժեշտ էր մեկուսի հայերեն տերմիններից
ստեղծել այնպիսի համակարգված տերմինաբանություն, որը
համապատասխաներ հայերենի լեզվաշինության պատմական
ավանդույթներին, միաժամանակ բավարեր արագ զարգացող
հասարակական հարաբերությունների, տնտեսության, գի-
տության, գրականության ու արվեստի պահանջներին: Այլ
խոսքով պետք էր ստեղծել հայերեն գիտական լեզու: Այդ առա-
քելությունը նույնպես բաժին րնկավ բառարանագետ-տերմի-
նաբան Թ.Ավդալբեգյանին:

Հատուկ ստեղծված տերմինաբանական հանձնախում-
բը, ուր րնդգրկված էին հանրապետության տերմինաբանա-
կան րնագավառի բոլոր մասնագետները, պարբերաբար

րննարկում էր Թ.Ավդալբեգյանի կազմած տերմինաբանական աղյուսակները, որոնք արժանանում էին ամենաբարձր գնահատականի:

1937թ. հուլիսի 10-ին «Կապիտալի» թարգմանությունն ավարտվում է: Մկսված գործը դրանով իսկ ամբողջանում է շուրջ 6 տարում:

Տիրափ տիտանական աշխատանք:

«Կապիտալի» առաջին արկու հատորները հրատարակվեցին թարգմանչի կենդանության օրոք, առաջին հատորը՝ 1933-ին (Մուսիբատ, Երևան, 765 էջ), երկրորդ հատորը՝ 1936-ին (Մուսիբատ, Երևան, 510 էջ):

Միայն տարիներ հետո Մուսիբատը տպագրեց «Կապիտալի» նրա թարգմանած երրորդ հատորի առաջին (1947) և երկրորդ (1949) գրքերը:

«Կապիտալի» հայացումը օրինական հպարտության զգացում էր առաջ բերել Հայաստանի մտավորականության շրջանում: Հանրապետության պարբերական մամուլը բարձր գնահատեց չգերազանցված գործը: «Կապիտալի» գերմաներեն բնագրից կատարած փայլուն թարգմանությանը խանդավառությամբ արձագանքեցին հայ մշակույթի բազմաթիվ նշանավոր գործիչներ:

Թվում էր, թե հանրապետության իշխանությունները ևս իրենց գնահատանքի խոսքը կասեին հայ մտքի քանրարավոր երախտավորին, նրան կարժանացնեին իրեն հասնող օրինական փառքին: Բայց ավա՜ղ:

Ամբողջ երկրի վրա իջել էր 1937 թվականի մղձավանջը, որը շրջանցեց նույնիսկ «Կապիտալի» թարգմանչին:

Երևանի բանտում, ինչպես հետագայում վկայել են բանտախցի նրա բախտակիցները, Լենինի վերջին ֆիզիկական ու հոգևոր խոշտանգումների, բանտարկյալն իրեն պահել էր խիզախաբար, մատնություն չանելով որևէ մեկին:

Այանքից հեռացավ խոշոր գիտնականը և անմրցելի թարգմանիչը: Անմեղ նահատակը ընդամենը 52 տարեկան էր:

Հայ մշակույթը անժամանակ կորցրեց իր մեծ մշակին: Դեռ ինչև՛ր կարող էր երկնել նրա լուսավոր ուղևորը:

. . .

Պարտը ենթ համարում հատկապես նշել Թադևոս Ավդալբեգյանի կյանքի երդվյալ ընկերուհու՝ Արաբսյա Կանայան-Ավդալբեգյանի անօրինակ սխրանքը՝ գիտնականի վիթխարի արխիվի իղևալական պահպանումը դժվարագույն և վտանգալից պայմաններում, որից մի թուղթ անգամ չի պակասել և որի շնորհիվ այսօր հնարավոր է դառնում հրապարակել Թ.Ավդալբեգյանի անտիպ հոդվածներն ու փաստաթղթերը:

Զգաստորեն գնահատելով ամուսնու գիտական և հասարակական գործունեության կարևորությունը, Արաբսյա Ավդալբեգյանը սեփական օրինակով սրբության զգացում է ներշնչել ժառանգներին՝ Թ.Ավդալբեգյան-գիտնականի և մարդադարացու նկատմամբ: Նա ժառանգների համար գրեց օրագրեր, որտեղ մանրամասնորեն գրանցեց ամուսնու կյանքի ու ստեղծագործության տարեգրությունը՝ հրապարակ հանկուղ պատմական բազմաթիվ անհայտ էջեր և գործիչների դիմանկարներ:

Թ.Ավդալբեգյանի շորս զավակներից յուրաքանչյուրն րնտրեց կյանքի ուրույն ճանապարհ՝ րստ սեփական նախասիրությունների: Ավագ դուստրը՝ Մեղան շնորհաշատ բուսաբան էր, աշխատում էր Մատենադարանում, որդան կարմրի և թավուտ վիկի վերաբերյալ ակնարկների հեղինակ էր, որդին՝ Մարտիրոս ճարտարապետ էր, համամիութենական մրցույթի դափնեկիր, որն անհայտ կորավ Հայրենական մեծ պատերազմում, մյուս դուստրը Մայիս Ավդալբեգյանն էր՝ ճանաչ-

* Հայաստանի կոմկուսի կենտրոնի կուսպատմության ինստիտուտը, որի տնօրենը տողերիս հեղինակն էր, 1985թ. սկզբներին դիմեց կենտրոն՝ առաջարկելով որոշում ընդունել վերահրատարակելու Թ.Ավդալբեգյանի թարգմանած «Կապիտալի» բոլոր հատորները: Շատ շանցած ընդունվեց համապատասխան որոշում և ինստիտուտը ձեռնամուխ եղավ դրա կատարմանը: 1987թ. վերջերին բոլոր հատորները պատրաստ էին վերատպագրման, բայց սկսված արցախյան շարժման և դրան հաջորդած Հայաստանի անկախացման պայմաններում հարցը հանվեց օրակարգից:

* 1985 թվականին Թ.Ավդալբեգյանի ծննդյան 100 ամյակի կապակցությամբ ՀԿԿ կենտրոնի կուսպատմության ինստիտուտի կազմակերպած հուշ երեկոյին, ինչպես և ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների միավորված գիտական նստաշրջանում ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի ղեկավարության և մի շարք գիտաշխատողների կողմից առաջարկներ եղան տնտեսագիտության ինստիտուտը Թ.Ավդալբեգյանի անունով կոչելու մասին: Այդ առաջարկներն անհետևանք մնացին՝ վերադաս մարմինների ունեցած րադարական նկատումների պատճառով:

ված բանասեր-գրականագետ, Լրկար տարիներ Եղևյալ Լ ՆՍՄՏ
ԳԱ Մ.Արևոյանի անվան գրականության ինստիտուտի հայ և
միջնադարյան գրականության բաժնի վարիչ, հեղինակել և
արժևարժող աշխատություններ՝ «Խաչատուր Ալաշանցի»,
(1958), «Գրիգորիս Աղթամարցի» (1963), «Նայ գեղարվեստա-
կան արձակի սկզբնավորումը» (1971), «Նայսմավորը՝ ժո-
ղովածուները և նրանց պատմագիտական արժևորը» (1982):
Վերջապես կրտսեր զավակը՝ Արևիկ Ավդալբեկյանը
նշանավոր Լրամիջոց-դաշնակահարուհի է, Նայաստանի
հանրապետության վաստակավոր արտիստուհի:

Ընթերցողին ներկայացվող աշխատության մեջ Ա.Մար-
կոսյանը բացահայտում է հիմնականում Լրևը խնդիր. 1) Ի՞նչ
ջանքեր ու զոհողություններ պահանջվեց Ավդալբեկյանից
հսկայածավալ «Կապիտալի» թարգմանության համար և ինչ
ցուցանիշներով հայերեն «Կապիտալը» ազգային նշանակու-
թյունից զատ վերածվեց թարգմանությունների գերազանց
օրինակի, 2) ո՞րն է մեծ տնտեսագետի ներդրումը վերարտա-
դրության տեսության մեջ և 3) ո՞րն է նրա «Տնտեսական
զարգացման թևորի» գիտակարգի կուրյունը:

Առաջին դեպքում Ա.Մարկոսյանը ցույց է տալիս «Կա-
պիտալի» թարգմանության հանգամանքները Նայաստանում,
մի շարք լուսաբանություններ են տրվում որոշ հարցերի՝
թարգմանչի րնտրության, առաջադրված խնդիրների, սկզբ-
բնադրյուրի, համեմատական շափանիշների և այլնի մասին,
որոնք սկզբունքային և կարևոր մանրամասներ են պարունա-
կում կատարած գործը զնահատելու համար:

Վերարտադրության տեսության հարցերում Ա.Մարկոս-
յանը վեր է հանում ավդալբեկյանական գիտական մշակում-
ների նշանակությունը քաղաքական տնտեսագիտական մտքի
զարգացման տեսակետից: Նա բացահայտում է Ավդալբեկյանի
նոր մոտեցումները, մասնավորապես ցույց է տալիս, թե մարք-
սյան պարզ և ընդլայնված վերարտադրությունների տեսու-
թյան մեջ ինչ շնորհիվ հարցեր է բնություն առև և առաջար-
կել իր լուծումները, կատարել լրացումներ տեսության գլխա-
վոր օրենքներում:

Նեղիմակը հատկապես կանգ է առնում Թ.Ավդալբեկյա-
նի կազմած նոր սխեմաների վրա, բացահայտելով դրանց
գործնական նշանակությունն ու արժևոր մարքսյան վերար-
տադրության տեսության հարցերում:

Տեղին է նշել, որ բազմաթիվ անգամներ արդարացի զար-
մանը և թերահավատություն է հայտնվել, թե ինչպե՞ս էր
հնարավոր բնագրից «Կապիտալ» թարգմանել առանց Գևրգա-
նիայում լինելու և գերմանական կրթություն ստանալու:
Իրական պատասխանը ոչ պակաս զարմանալի ու անհավատա-
լի է թվում՝ «Գեորգյան ճամբարում Ստեփան Կանայանից
ուսանածն ինքնուրույնաբար կատարելագործելով»: Բայց Լր-
նել հարց չի ծագել, թե ո՞րտեղ է Թ.Ավդալբեկյանը սովորել
տնտեսագիտությունն այն աստիճան, որ կարողացել է իրա-
կանացին Մարքսի մի շարք անկատար մտահղացումները:

Ինչպես ասվեց, Թ.Ավդալբեկյանը մասնագիտորեն հրմ-
տացել էր միքանի բնագավառներում և գիտակարգերում: Ինչ
խոսք այս աստիճան ծավալվելու դեպքում թվում էր թե, պետք
է տուժի հետազոտման խորությունը, բայց Թ.Ավդալբեկյանի
առնչությունը ստացվել է միանգամայն անսպասելի պատկեր:
Որ բնագավառն էր որ վերցնենք՝ Թ.Ավդալբեկյանի ներդրումը
կարևորագույնն է կամ կարևորագույններից:

Ընդ որում յուրաքանչյուր բնագավառում Թ.Ավդալբեկ-
յանն ընդհմախոսում է այդ բնագավառների առաջին դեմքե-
րին. վերարտադրության թևորիայում Ռ.Լյուբսկիերից ու
Կ.Մարքս, խորենացիագիտության մեջ՝ Ն.Մանանդյան ու Ա.
Գուտշմիտ, լեզվագիտության մեջ՝ Ն.Աճառյան, ճարտարակ-
տության պատմության մեջ՝ Թ.Թորամանյան, հայոց պատմու-
թյան հարցերում՝ Լևոն, իսկ տնտեսական զարգացման թև-
որիայում՝ համաշխարհային դեմքերի մի համաստեղություն:

Տիրավի զարմանահրաշ Լրևույթ էր Ավդալբեկյանը:

Ա.Մարկոսյանի գրքում ընթերցողը հետաքրքրությամբ
կկարդա Մարքսի տնտեսական զարգացման տեսության վե-
րաբերյալ Ավդալբեկյանի հասարակական տնտեսակարգերին
նվիրված լջերը, որոնք բացահայտում են թե ինչպիսի պարզա-
բանումներ է մտցրել տնտեսագետը մարքսիստական տնտե-
սական զարգացման տեսության մեջ: Այստեղ շատ բաներ
այսօրվա ընթերցողի համար կլինեն հայտնություններ, ինչ-
պես օրինակ՝ Կ.Մարքսի ու Ֆ.Էնգելսի տարաձայնություննե-
րը հասարակական տնտեսակարգերի թվաբանակի հարցում:

Նևտաքրքրական են նաև «քաղաքատնտեսություն» գի-
տակարգին նվիրված լջերը, որոնք դարձյալ նորություններ
են այսօրվա ընթերցողի համար:

4067



Անդրադառնալով Կ.Մարքսի «Քաղաքատնտեսության
բննադատության շուրջը» աշխատության Ավդալբլայանի
թարգմանության ողիսականին, գրքի հեղինակը փաստաթղթ-
երի վկայակոչումներով բացահայտում է խորհրդային պե-
տական ապարատի որոշ ղեկավար մարմինների ղեմ մեծ գիտ-
նականի անգոր ընդվզումները: Գրքի այդ էջերը ծանր զգա-
ցումներ են առաջ բերում ընթերցողի մեջ:

Ա.Մարկոսյանը ներկայացնում է Մարքսի «Կապիտալի»
թարգմանության հետ առնչվող անհայտ էջեր, Լրևան է հա-
նում թարգմանչի արվեստի սկզբունքների մինչ այժմ անտես-
ված կողմերը, հայտնաբերում առանձնահատկությունները:

Գրքում ընթերցողը կհանդիպի անձանոթ կամ քիչ հայտ-
նի ուրիշ հետաքրքրական դրվագների ևս:

Համոզված ենք, որ Արա Մարկոսյանի Լրկար տարիների
ջանքերի արդյունք սույն ուսումնասիրությունը հետաքրքրու-
թյամբ կընդունվի ոչ միայն հասարակագետների, այլև ընթեր-
ցող լայն շրջաններում:

Հայերեն «Կապիտալի» մասին

Հայերեն «Կապիտալի» մասին

I

Շատ են խոսել հայերեն «Կապիտալի» մասին, բայց քիչ են ասել:

Այս խոսքը չափազանցություն չէ, որովհետև առ այսօր միակողմանիորեն խոսել են հայերեն «Կապիտալի» լոկ ազգային նշանակության մասին, այն էլ ոչ լրիվ և ուշադրություններից իսպառ վրիպել և ազգայինից դուրս այն արտակարգ փաստը, որ աշխարհիս ավելի քան 50 լեզուներով կատարված թարգմանությունների միջից հայերեն «Կապիտալը» *համաշխարհային* ցուցանիշով օժտված նմուշահատերից է (уникум)¹:

Նթև ռուսերեն «Կապիտալը» նշանավոր է **պատմականորեն**, որպես անդրանիկ օտարալեզու թարգմանություն, եթև ֆրանսերեն ու անգլերեն թարգմանությունները հանրահայտ են իրենց գիտական հեղինակավորությամբ՝ մեկը Մարքսի անմիջական մասնակցությամբ՝ մյուսն Լեգևիսի աշախուրջ հսկողությամբ իրականացած թարգմանություններ, ապա հայերեն «Կապիտալի» ցուցանիշը բուն **թարգմանչական** մեծագործությունն է՝ մեկն էլ այն նրկու թարգմանություններից իրագործված *միանձնյա թարգմանչի*² Թ ա դ և ո ս Ա վ դ ա լ լ ք և գ յ ա ն ի ձևերով: Մյուսն է Ա. Սանդլերի շվեդերեն թարգմանությունը, բայց հայերեն «Կապիտալը» մի շարք առավելություններ ունի սրա համեմատությամբ՝ իր գիտական նախադրյալներով:

Եվ ոչ միայն այդ:

«Կապիտալը» մայրենի լեզվով բնթերցող ազգերից բնդամենը 1/3-ն ունեն *ամբողջական* կամ *անամբողջական* բնագրից կատարված թարգմանություն: Մոտավորապես կեսն

ունեն *տարբեր լեզուներից* թարգմանված *ամբողջական* «Կապիտալ» և միայն մեկ տասնյակ ազգեր ունեն բնագրից-*ամբողջական*³ նրկու առավելագույն պահանջները բավարարող թարգմանություն:

Այս տասնյակի միջից հայերեն «Կապիտալն» առավել գտնվում է ոչ միայն բնագրից, այլև լավագույն խմբագրումից ու լավագույն հրատարակությունից կատարված թարգմանությամբ, ոչ միայն ամբողջական, այլև անդրանիկ թարգմանությունների շարքում առանց բացթողումների և ոչ թև նրկու, այլ միանգամից չորս՝ 1) բնագրից կատարված, 2) ամբողջական «Կապիտալի», 3) անդրանիկ թարգմանությամբ, 4) միանձնյա թարգմանիչ ցուցանիշներով՝ ա) *մարքսիստ արդյունք*, բ) *միմիստ պայմաններում*, գ) *անհատական իրագործմամբ*:

Այսպիսի տվյալներով օժտված չէ ոչ մի թարգմանություն հայերենից բացի:

Ամենաաչքի բնկնող երևույթն այս փաստերի շարքում, իհարկե, «միանձնյա թարգմանիչ» գործող անձն է, որը մեկ դեմքում միավորել է «անդրանիկ» первопроходец-ի և «բնագրից-ամբողջականի» արդյունքներով բարձրագագաթներ покоритель-ի ցուցանիշները: Այս միավորումն այլ միավորումների արդյունք է, որ դարձյալ չափազանցություն, առավել ևս՝ նորություն չէ, այլ հայտնի օրինաչափության լրացուցիչ հաստատում, որ Ավդարբեգյանը մեկ դեմքում միավորել է մի քանի մասնագետների և բոլորը՝ բառիս բուն իմաստով:

Սույն ուսումնասիրության հեղինակը նպատակ ունի մանրամասն անդրադառնալ նշված և առնչվող այն հարցերին, որոնք առ այսօր մնացել են թերի պարզաբանված, բայց պահանջում են լիակատար պարզաբանում, բացահայտելով կատարվածի իրական մասշտաբն ու նշանակությունը: Առ այսօր հարատևած թերացմանն անշուշտ նպաստել են ժամանակների քաղաքական վերիվայրումները, որոնց հետևանքով փաստերի մեծ մասն արհեստականորեն մատնվել է անտեսման կամ լավագույն դեպքում արժանացել է ի միջի այլոց հիշատակման: Այնինչ հայերեն «Կապիտալն» իր ազգային բացառիկ արժևերով և թարգմանությունների մեջ առանձնահատուկ դեպք լինելով, պահանջում է նույնպես առանձնահատուկ, ինչպես թարգմանիչն է գրել՝ «*աշախուրջ վերաբերմունք*»:

Այստեղ փորձ է կատարվում հայերեն «Կապիտալ» ազգային երևույթը դիտարկել լայն խորապատկերի վրա:

¹ Այսպիսի եզրակացության մենք համոզել ենք իմանվելով նախկին Խորհրդային Միության Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտում կենտրոնացած, «Կապիտալի» լուրջ լեզուներով կատարված թարգմանությունների, լուրջ հրատարակություններից ստացված փաստերից: Մեզ համար անմասնակի լեզուների տվյալները բավել ենք ինստիտուտի գրադարանի գրքերի տխուրասթերթերի մուսերեն թարգմանություններից:

² Երկրա հրատարակությունը շնանարեճներու նպատակով «Կապիտալի» թարգմանությունների վերաբերյալ տվյալների մեր կազմած համեմատական աղյուսակը չենք ներկայացնում:

Լսենք թարգմանչի խոսքը:

Ի՞նչ է «Կապիտալը»:

«Մարդկային ստեղծագործ մտքի ամենամեծ կերտվածքներից մեկը,- գրել է Թ.Ավդալբեկյանը,- որ օվկիանի պես ծփում է մեծափառ՝ փիլիսոփայական, պատմական, տնտեսագիտական ու քաղաքական խորախոր բովանդակությամբ, ծանրալուրջ կոռուստության ու շառաչուն կրգիծանքի մեջընդմեջ հերթափոխությամբ, շարադրանքի բարձրորակ պատկերավորությամբ, հին ու նոր լեզուների անհամար քաղվածքներով ու վերջապես լեզվի շեքսպիրյան- ու նույնիսկ գերագանցող հարստությամբ»²:

Սա «Կապիտալն» է:

Ի՞նչ է նշանակում «Կապիտալի» թարգմանությունը:

«Գործը վիթխարի պահանջներ էր առաջադրում,- գրել է թարգմանիչը: - Այն պահանջում էր թևորիական ծավալուն իրազեկություն, լեզվաշինարարության փորձառու ձիրք, տերմինաբանական սիստեմ կազմելու ջնորհք, ոճի ու պատկերի նուրբ հոստատություն, բարեխիղճ գործի արմատացած սովորություն ու ոչ պակաս կարևորը - ծանրակիր աշխատանքի անդրդվելի տոկունություն»³:

Այսպիսով է, որ մասնագիտական բարձրագույն ու բազմակողմանի պահանջներից զատ թարգմանիչն աչքաթող չի արել, այլ հասուն կշռտել է զուտ մարդկային բարոյա-հոգևորանական առանձնահատուկ կոփվածքի գործոնները, որ կարող են վճռորոշ լինել այդ օրինակ ձևարկման համար:

Վերջապես, ահա, թե ինչ էր նշանակում «Կապիտալի» հայերեն թարգմանությունն կամ ինչ էր պահանջվում իրենից անձամբ:

«Այլ ազգերի թարգմանիչների համեմատությամբ հայ թարգմանչի խնդիրը բարդանում էր երև ընդ, ավելադիր հանգամանքներով: 1) Մինչդեռ, օրինակ ռուս թարգմանում էր մրջակված ու բյուրեղացած մի լեզվով, հայ թարգմանիչը պետք է թարգմաներ անմշակ ու ժամ առ ժամ կերպարանավորվող լեզվով՝ ստեղծելով հազարավոր նորանոր բառեր ու արտահայտու-

թյուններ. 2) մինչդեռ ռուսը ձևորի տակ ուներ տնտեսագիտական պատրաստի տերմինաբանություն, հայը պետք է առաջին անգամ մի հայտարարի բերեր և լրացներ տնտեսագիտական հայերեն ամբողջ տերմինաբանությունը. 3) մինչդեռ նույն ռուսը տերմինաբանության մեջ արմատական բեկում անելու կարիք չուներ, հայ թարգմանիչը կանգնած էր հասունացած ու անճողղաբերի պրոբլեմի հանդեպ՝ ազատագրել հայերեն տնտեսագիտական ամբողջ տերմինաբանությունը ռուսական տերմինաբանության տարագից ու այն ձևավորել բուն գերմանական տերմինաբանության համաձայն»⁴:

Արիչ անդրանիկ թարգմանիչ կարող էր միանգամայն բավարարվել (և այդպես էլ եղել է) լուրջ թարգմանության մինիմումով, առանց ստանձնելու ազգային բնոյժանություն լեզվամշակույթի արդիականացման խնդիրներն, իսկ Ավդալբեկյանն, ինչպես տեսնում ենք, հայտնվելով ռուսաստանի բացահայտ պակտորի (дефицит) պայմաններում, թարգմանությունից բացի ստանձնել էր ժամանակի առաջադրած պահանջների իրականացումը՝ հայերեն գիտական լեզվի մշակում, տնտեսագիտական ամբողջական տերմինաբանության ստեղծում և տերմինաբանական ռեֆորմի անցկացում:

Այս էր նաև բովանդակում «անդրանիկն» ըստ ամենայնի: «Կապիտալ» ունենալու անհրաժեշտության՝ ժամանակի հրամայական պահանջը և առկա ռուսաստանի միջև վիճարկաբարի պահանջներին՝ գումարվել էին միջավայրի «նոր ավելադիր հանգամանքներն», ուստի պետք է հաղթահարվելն անասելի դժվարություններ:

Ահա այսպիսի խնդիրներ էին միանգամից բարդվել Ավդալբեկյանի ուսերին, որոնց դժվարության աստիճանն ինքը բաջ գիտակցում էր:

«Տինգերորդ դարից սկսած հայ թարգմանչական գրականության հանդեպ այսպիսի հսկայական ու դժվարին խնդիր չէր դրված եղել»⁵, - իրավացիորեն գրել է նա:

Եվ, այդուհանդերձ, «պետք էր հայացնել... «Կապիտալը»»⁶, - հաստատականորեն պարտավորվել էր նա:

² Թադ. Ավդալբեկյան. Մեծալուրջ գործին աչալուրջ վերաբերումը, «Կապիտալի» թարգմանության արթիվ գրախոսականների պատասխան հոդվածաշար, Երևան, 1935թ. (անտիպ), էջ 2, Հայաստանի արդյունաբերության (այսուհետև ՀԱԱ), ֆոնդ 393, ցուցակ III, գործ № 21:

³ Նույն տեղում, էջ 2:

⁴ Նույն տեղում, էջ 2-3:

⁵ Նույն տեղում, էջ 2:

⁶ Նույն տեղում, էջ 2:

Նկատելի էր արդյոք, թե՞ ոչ, բայց Թ. Ավդալբեգյանը լռում է, որ այլ ազգերի թարգմանիչների համեմատությամբ հայ թարգմանիչի խնդիրը քարոզացել էր 4-րդ ավելադիր հանգամանքով: Տայ թարգմանիչը միայնակ պետք է հաղթահարեր դարերում շահաչաղրված ու աշխարհում շիրագործված խնդիրը: Փորձը ցույց էր տվել և ապացուցվել էր, որ «Կապիտալի» թարգմանությունն անհատ մարդու ուժերից վեր՝ հավաքական ուժերի, նույնիսկ մեկից ավել սերնդի գործ է: Համարյա բոլոր լեզուներով թարգմանիչներից յուրաքանչյուրը, չնչին բացառությամբ, կատարել է «Կապիտալի» քիչ մասի թարգմանությունը՝ մեծ մասը թողնելով գործընկերներին: Նամանավանդ անդրանիկ թարգմանիչներից շատերը հաղթահարել են թարգմանության նախնականը, բնականաբար գեղջ պահանջներով՝ մեծաբանակ բացթողումներով, տերմիններն անթարգմանելի թողնելով և այլն, որ հետագայում կրկին անդրադառնալու պահանջ են առաջացրել:

Դա է օրինաչափականը:

Հայերեն թարգմանիչ Թ. Ավդալբեգյանը հաստատված օրենքների մեջ բացառություն է, որ անդրանիկ պայմաններում ստացել է ոչինչ կամ համարյա ոչինչ, բայց մեկընդմիջտ հարցը սպառել է՝ Լվոյուցիոն զարգացման բնականոն ընթացքը թողնելով ժամանակին:

Տեսնաբար հայ թարգմանիչ կատարածն, ի տարբերություն իր օտարազգի գործընկերների, ունի որակական այլ ցուցանիշ: Եթե յուրաքանչյուրի արածը փուլային (этап) նշանակության նպաստ է, ապա հայ թարգմանիչ գործը դարակազմիկ (эпоха) ջրջադարձ է: Նշանակում է և՛ լեթ, օրինակ, «Կապիտալի» առաջին հատորի ռուսերեն 4-րդ թարգմանությունը՝ Ստեպանովի գլխավորած եռանդամ խմբի համատեղ ուժերով, որակվել է իբրև «научный подвиг»-գիտական սխրանք, ապա հայ միանձնյա թարգմանիչ 3 հատոր՝ 4 գրքի անդրանիկ թարգմանությունը, հայերեն գիտական լեզվի ու տնտեսագիտական տերմինաբանության ստեղծումն առանց չափազանցության պետք է որակել որպես «արտակարգ սխրանք» - чрезвычайный подвиг:

Ինչու՞ Ավդալբեգյանը ...

Ընչ առաջ ասել ենք, «այդ միավորումն այլ միավորումների հետևանք է», այն միավորումների, որ ուրիշ ազգերի մեջ իրականացվել են հավաքական ուժերով և բազմանդամ խմբերով: Հայերեն «Կապիտալի» կապակցությամբ նույնպես կազմված է Լոկոյի խումբ՝ մտավորականության սերուցքից, ի դեմս գերմանական կրթությունն ստացած Հայկ Գյուլիբեխյանի, ակնազոր մասնագետներ Ներսիկ Ստեփանյանի ու Նշան Մակինցի՝ որպես թարգմանության խմբագիրների: Թարգմանության Լքուպերտներ են նշանակված Լոկոյ Լվրոպական կրթությամբ գիտնականներ Արշավիր Մելիքյանն ու Հայկ Ազատյանը, գերմաներեն բնագրի հետ համեմատող վերահսկիչ սրբագրողն է Լոկոյ Նրվանդ Տեր-Մինասյանը: Հետաքրքրական է, որ «Կապիտալի» գրաշարն ու շարվածքը սրբագրողն է Լոկոյ ապագա մեծանուն արվեստարան Գառնիկ Ստեփանյանը: Մա շատ կարևոր և պատասխանատու գործ էր «Կապիտալում» կիրառվող մի քանի լեզուների տառատեսակների շարվածքն ապահովելու համար:

Ինչպես տեսնում ենք՝ հայ գիտական մտքի կաճառ:

Թարգմանիչի հարցում, սակայն, ընտրություն տեղի չի ունեցել: Լռությամբ կատարվել է ինքնըստինքյան հասկանալի բնական ընտրանք, որովհետև հանրահայտ էր, որ Թ. Ավդալբեգյանն է «թևորիական ծավալուն իրազեկությամբ» զինված գիտնական-տնտեսագետն ու մարքսիզմի տեսաբանն, ում մատչելի է «Կապիտալի» հաղթահարումը: Նա է Լեյկու կարևորագույն տեսությունների հմուտ մասնագետը՝ «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան»⁷ ուսումնասիրության և «Վերարտադրության թևորիան»⁸ ակնարկաշարի հեղինակն ու տասնյակ սխեմաների ստեղծողը: Նշենք, որ Պետերստի գիտա-մարքսիստական բաժնի վարչի պաշտոնում նրա ձևորով Լին խմբագրվել, գրախոսվել, մամուլում լուսարանվել բազմաթիվ տնտեսագիտական նորույթներ ու թարգմանություններ:

⁷ Թայ. Ավդալբեգյան, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան, Ս. Իրատ, Էրևան, 1925, Բիրատ, Էրևան, 1926:

⁸ Թայ. Ավդալբեգյան, Золото в схемах простого воспроизводства, Эривань, 1929; К вопросу о золоте в схемах простого воспроизводства, Эривань, 1930; Издержки обращения в схемах простого воспроизводства, Эривань, 1930; Основные гипотетические схемы расширенного воспроизводства, Эривань, 1931; Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства, Эривань, 1932.

Գարձյալ նա էր փորձված այն թարգմանիչը, որի ձևերով հայերեն էին թարգմանվել Կ.Մարքսի «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը»⁹, Ռ.Լյուբսևմուրցի և Ֆր. Մերինգի «Կ.Մարքսի «Կապիտալի» համառոտ շարադրանքը»¹⁰, Լենինի «Իմպերիալիզմը ...», «Նոր տնտեսական քաղաքականությունը», «Սոցիալիստական հեղափոխությունն ու լուսավորության խնդիրները», «Պարենիարկի մասին» աշխատությունները¹¹, Տյումենի «Աշխատանքի պատմությունը»,¹² Միխայլսկու «Քաղաքատնտեսությունը»¹³, Դերոբինի «Քրիստոս, Գարվին, Մարքս»¹⁴, Շուլցի «Մարքսն ու Լենինսն իրենց մանկավարժական առարկաներում»¹⁵ և այլն:

Վերջապես Լիի Պ.Ավդալբեզյանն էր հայոց լեզվի խորագիտակ լեզվաշինարարն ու բառարանագիրը, որ զլիավորել ու հեղինակել էր Երկհատոր «Ռուս – հայերեն նոր բառարանը»,¹⁶ ստեղծել «Ռուս–հայերեն տնտեսագիտական տերմինաբանական բառարանը»,¹⁷ Տյումենի «Աշխատանքի պատմությունը» թարգմանությանը կից բառատետրը, հեղինակակցել և խմբագրել էր Տ.Աճառյանի, Տ.Տոփանյանի, Ե.Տեր-Մինասյանի, Վ.Փոթեյանի¹⁸ բառարաններին ու լեզվաբանական ձևանարկներին:

Բոլոր առումներով նա էր, որ մեկ դեմքում միավորել էր տնտեսագետին, թարգմանչին, հայերենագետին և այլ ամենն, ինչ հրամայարար պահանջում էր «Կապիտալի» թարգմանությունը:

Ահա թե ինչու նա և ոչ այլ ոք:

Մրանը ևն первопроходец-поборитель միավորման այն նախադրյալները, որ ուրիշ ազգերի մեջ միավորվել էին խմբերով ու հիմնարկներով: Տայաստանում հասունացել էր «Կապիտալ» ունենալու պահանջն ու, փառք Աստուծո, այստեղ գործում էր

Լվրոպական կրթությամբ պատրաստված մտավորականների և գիտնականների փայլուն համաստեղություն, որն իր մեծանպաստ ավանդն էր ներդրել հայրենիքում մարքսիզմի պրոպագանդման գործում: Կարող ենք հիշատակել Յ.Խանգադյանի, Գ.Տեր-Միմոնյանի, Գ.Ջաղերյանի, Ա.Խոնդկարյանի, Պ.Արևլյանի, Մ.Գեորգյանի, Խ.Ավդալբեզյանի, Ե.Տեր-Մինասյանի, Մ.Ջաբարյանի, Ա.Այվազյանի, Ս.Կասյանի, Վ.Փոթեյանի, Կ.Վարդանյանի, Տ.Գաղանի, Վ.Ավագյանի, Ռ.Գուլբանյանի, Վ.Ղազանչյանի և այլոց անունները: Բայց նկատված է ևղևի, որ “հայ մտավորականների և բարձրորակ թարգմանիչների այս պատկանելի փառանջում մեկը և Լենին էր ... բացառիկ սխրանք է կատարել”¹⁹: Ուշադրություն՝ ոչ թե հավասարների մեջ լավագույնը կամ առավել կարողն, այլ բոլորից գատ կանգնեցված, արտակարգ մեկը, “որն իր տաղանդով ու գերազանց ջանասիրությամբ բացառիկ սխրանք է կատարել”:

Ահա թե ինչու “միանձնյա”, որովհետև ... “եղել է մեկը”:

V

Գործի հաջողության գրավականներից մեկը ճիշտ կլակետն է՝ սկզբնաղբյուրի ընտրությունը:

«Կապիտալի» առաջին հատորը Մարքսի ձևերով շարադրված և կենդանության օրոք հրատարակված միակ հատորն է, որ հանդիսանում է նրա տնտեսական ուսմունքի հիմքը: Պատահական չէ, որ «Կապիտալի» Երկու խմբագրիչների՝ Լենգլսի և Կաուցկու²⁰ նշանավոր աշխատությունները նվիրված են հենց այս հատորին, բայց զարմանալիորեն ամենից շատ տարրնթերցումներ ունի դարձյալ նույն՝ առաջին հատորը և ահա թե ինչու:

Մարքսի ու Լենգլսի օրոք սույն հատորը գերմաներեն հրատարակվել է 4 անգամ՝ Երկուսը Մարքսի օրոք 1867 և 1872 թվականներին, որոնցից ընձյուղվել է ֆրանսերեն, կարևոր է ասել, համահեղինակային խմբագրության թարգմանությունը՝ 1872-1875 թթ., այնուհետև Երրորդը՝ 1883թ. Լենգլսի խմբագրած գերմաներեն–ֆրանսերենի կոնցենտրատ հրատարակությունը, վերջապես 1890թ. չորրորդ հրատարակությունը, որի տարբերու-

⁹ Թարգմանվել և խմբագրություն է հանձնվել 1925-ին, հրատարակվել է 1932թ. Երևանում:

¹⁰ Երևան, 1924թ.:

¹¹ Բոլորը հրատարակվել են Վաղարշապատում, Երևանում, Մոսկվայում 1922, 1925, 1926, 1929, 1930, 1931թթ.:

¹² Ունեցել է երեք հրատարակություն Երևանում և Լենինականում 1924, 1925, 1927թթ.:

¹³ Երևան, 1928:

¹⁴ «Երեք», հանդես, Երևան, 1924թ., №4-5:

¹⁵ Երևան, 1928:

¹⁶ 1, II հատորները Երևան, 1933, 1935 թթ.: Մյուս հեղինակներն էին Պ.Ստոնիկյանը և Տեր-Մինասյանը և Վ.Փոթեյանը:

¹⁷ Երևան, 1964թ.:

¹⁸ Ռուս – հայերեն իրափարանական բառարան (Տ. Աճառյանի և Տ. Տոփանյանի հետ համատեղ), Երևան, 1924թ. և Վ. Փոթեյան, Ռուս – հայերեն աշխատանքային բառարան (Ե. Տեր-Մինասյանի և Վ. Փոթեյանի հետ), Երևան, 1931թ.:

¹⁹ Վ.Ղազանչյան. Մարքսիզմի դասականների թարգմանիչը, «Լենինյան ուղիով» հանդես, Երևան, 1985, №12:

²⁰ Ֆ. Լենգլս. “Կարլ Մարքսի «Կապիտալի» I հատորի կոնսպեկտը”, Կ. Կաուցկի. “Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը”:

թունը նախորդներից՝ 1887թ. անգլերեն հրատարակության օրինակով, անգլերեն քաղվածքները բնագրով մեջբերելու սկզբունքն է, որն իրականացրել է Մարքսի կրտսեր դուստր և անգլերեն թարգմանիչ Մամուկ Էվելինգի կինը՝ Էլենոր Մարքս - Էվելինգը:

Ըստ հետազոտող Ա.Լ.Լոնտեի, Մարքսի ու Էնգելսի թողարկումներից յուրաքանչյուրի տարրնթերցումները մյուսների համեմատությամբ հաշվվում են հարյուրներով²¹: Ըստ 1937 թվականի «Կապիտալի» ռուսերեն հրատարակության առաջարանի, գերմաներեն 2-րդ (Մարքսի վերջին:-Ա.Մ.) և 4-րդ (Էնգելսի վերջին:-Ա.Մ.) հրատարակությունների միջև տարրնթերցումները գերազանցում են 1000-ից: Ֆրանսերեն ու գերմաներեն 4-րդ հրատարակությունների միջև տարրնթերցումների թիվը հասնում է մի քանի հարյուրի²²:

Այսպիսով, «Կապիտալի» 4-րդ հրատարակությունը ստացվել է բնագրով քառակի գտված, գերմաներեն - ֆրանսերենի մաղով անցկացված և անգլերենով թորված լավագույն հրատարակություն:

Արդյունքը՝ Մարքսի շարադրանքով, Էնգելսի խմբագրությամբ «Կապիտալի» I հատորի 4-րդ հրատարակությունն էլ տալուն է:

Բայց կա նաև 5-րդ՝ Կաուցկու խմբագրած «Կապիտալի» «ժողովրդական» կոչված հրատարակությունը (1914թ.), որն, ըստ խմբագրի խոստովանության, «նշանավորում է ոչ թե գիտական առաջընթաց, այլ առավել հանրամատչելիություն ...», ուստի տևական մակարդակով անշուշտ գիջում է Էնգելսի խմբագրածին:

Թ.Ավդալբեգյանն ամենից բարձր է գնահատել I հատորի հատկապես 4-րդ հրատարակության գիտական արժեքն ու «Կապիտալի» թարգմանությունն իրականացրել է գերմաներեն 4-րդ հրատարակության 10-րդ վերատպությունից: Մյուս հատորները, լինելով Մարքսի հետմահու հրատարակություններ, գերմանացի աշակերտների խմբագրական ու հրատարակչական խնդիրներից և հայերեն են թարգմանված նույն հրատարակությունից (K. Marx, «Das Kapital», 1922, BBI, II, III₁, III₂, Hamburg):

Ի տարբերություն իր օտարազգի գործընկերներից շատերի, Ավդալբեգյանը չի գայթակղվել ոչ Կաուցկու «ժողովրդական»,

ոչ Մարքսի 2-րդ հրատարակություններով, ոչ էլ ֆրանսերեն թարգմանությամբ, որն Ա.Մ.Լիբյանը հորդորել է հաշվի առնել, իսկ հետագայում մեղադրել այդպես չլինելու պատճառով²³: Այս սկզբնաղբյուրներից կատարված թարգմանությունների մեծ մասն ապագայում կատարելագործվել է 4-րդ հրատարակության հետ համապատասխանեցվելով, ինչից մեկնել է հայերեն «Կապիտալը»: Վերջինս անդրանկությամբ հանդերձ սկզբնաղբյուր վերցնելով գիտության *վերջին* խոսքը, հայտնվել է զարգացման *վերջին* փուլում, որով կոմպենսացրել է պատմական «մեծ ուշացումը»²⁴ մյուսների համեմատությամբ: Կոմպենսացրել է նաև այն, որ հետնորդներին ապահովագրել է հետագարձ հայացքներից ու հետընթաց քայլերից՝ գործողություններին այսուհետև միջոտ առաջընթաց ուղղություն տալով:

Սկզբնաղբյուրի բնութայունը թարգմանչի առաջին նշանակալից բայն էր և հայերեն «Կապիտալի» գիտական անանց արժեքի նախապայմանը:

Այսպիսով՝ հայերեն «Կապիտալը» գերազանցում է բոլոր բնագրից շիրականացված թարգմանություններին իր *հարազատությամբ սկզբնագրին* և բոլոր 4-րդ հրատարակությունից չկատարված թարգմանություններին իր *գիտական մակարդակով*:

Թարգմանական առումով հետաքրքրական է, որ սույն հատորի թարգմանությունների մեծ մասն իրականացվել է 3,4 անգամ 7 ու նույնիսկ 10 թարգմանիչների միասնական ուժերով: Եթե մատնանշենք «Կապիտալի» I հատորի միանձնյա թարգմանչի օրինակ, ապա այդ սակավաթիվ թարգմանությունները կամ ա) բնագրից չեն արված, կամ բ) առնվազն երկրորդ թարգմանությունն են, կամ էլ գ) թարգմանված են «Կապիտալի» Կաուցկու «ժողովրդական» հրատարակությունից²⁵: Այս երեք պահանջներին բավարարող, այն է՝ ա) բնագրից, բ) գիտական (Էնգելսի) խմբագրությունից, գ) անդրանիկ թարգմանության, դ) *միանձնյա* թարգմանչի օրինակ՝ **հայերեն «Կապիտալը»** հնարավոր է՝ դարձյալ երկուսից մեկն է աշխարհում,²⁶ հետևապես **հազվագյուտ է I հատորից սկսած**:

²¹ Տե՛ս «Պրոլետար», (Թիֆլիս), 1933թ., հոկտեմբերի 30, № 251.
²² *Է.Մարքս* «Կապիտալ», I հատ., Երևան, 1933թ., հայերեն հրատարակության առաջարանը.
²³ Այս հրատարակության և ֆրանսերեն թարգմանության խառնուրդից է կառուցված Ա.Մանդելի շվեդերեն վերոհիշյալ թարգմանության I հատորը Տե՛ս *K. Marx*, Kapital, Bd. I, Stockholm, 1930, էջ XVIII, թարգմանչի առաջարանը.
²⁴ Այդպիսի նմուշներից է «Կապիտալի» Օլյոտի փուլորի ֆիններեն թարգմանության երկու հատորներից I հատորը (Տե՛ս *K. Marx* «Pääoma», Helsinki, 1913:)

²¹ *А. Леонтьев*, О новом издании „Капитала“, „Большевик“, М., 1933, №№ 10-11:
²² *К. Маркс*, Капитал, т. I, Москва, Партиздат, 1937г.

Գործը գնահատելու գլխավոր պայմանը՝ ճիշտ շափա-
նիշն է:

Տայերեն թարգմանությունն արժևրավորելու ամենահե-
ղինակավոր և նպատակահարմար շափանիշը «Կապիտալի» ռու-
սերեն թարգմանությունն է:

Նախ՝ լինելով առաջին օտարալեզու թարգմանությունը,
ռուսերենն ունի ամենալայն ժամանակագրական սահմաններ՝
1872-1988թթ., ուստի՝ ամենամեծ պատմական փորձը:

Այնուհետև՝ այս թարգմանություններն իրականացրել
են բարձրորակ թարգմանիչներ և մարքսիզմի խոշոր տեսարան-
ներ, որոնց համագործակցել է ականավոր գիտնականների մի
կաճառ, ինչը չի կարելի ասել ուրիշ շատ լեզուներով կատարած
թարգմանությունների մասին:

Եվ երրորդ՝ ռուսաց լեզվի մատչելիության առումով հայ
ընթերցողի համար:

Վերոհիշյալ «Մեծալուրջ գործին աշալուրջ վերաբեր-
մունք» անտիպ հոդվածաշարում Թ.Ավդալբեգյանը նույնպես
դիմում է Ստեփանով-Սկվորցովի դեկավարած խմբի կատարած
թարգմանության հետ համեմատությանը²⁷: Այս թարգմանու-
թյունը վերջինն ու լավագույնն է, որն իր որակի շնորհիվ հրա-
պարակից վտարել է նախորդ բոլոր թարգմանություններն, իսկ
հետագայում, կատարելագործվելով ու ճշգրտվելով, երկու ան-
գամ գետեղվել է Մարքսի-Էնգելսի բազմահատորյակներում և
առանձին գրքերով հրատարակվել մի շարք անգամներ՝ հասնե-
լով մինչև 1988թ.

Բերում ենք մի մեծ հատված «Մեծալուրջ գործին աշա-
լուրջ վերաբերմունք» երևյալ մասից բաղկացած հոդվածաշարից:

«Չննենք, օրինակ, հետևյալ ցանկը, որում բերված են
նմուշներ «Կապիտալի» I հատորի տարբեր բաժիններից՝ կողմ -
կողմի առաջընթաց նախ գերմաներենը, հետո հայերեն թարգ-
մանությունը 1933 թվի հրատարակությունից, ապա ռուսերենը
1909-ի ու 1935-ի հրատարակություններից: Տալով մեզ ներքին
սկզբին գրված թվանշանները ցույց են տալիս համապատասխան
հրատարակության էջերը:

(Տե՛ս Առաջին ցանկը էջ 32)

Այս ցանկից երևում է, որ լավագույն ընդունելության
արժանացած ռուսերեն չորրորդ հրատարակությունն ունեցել է
մի շարք մասնակի սխալներ, վրիպումներ ու բացթողումներ,
որոնք վերացված են հետագայում միայն. հիշյալները շտկված
ենք տեսնում, օրինակ, 1935-ի հրատարակության մեջ: Բայց
1909-ի ռուսերեն հրատարակությունը շատ ավելի մեծ բացթո-
ղումներ է ունեցել, քան ցույց է տալիս վերևի ցանկը: Ահա մի
քանի նմուշ ավելի ընդարձակ բացթողումներից:

(Տե՛ս Երկրորդ ցանկը էջ 34)

Բերված մոտ երեք տասնյակ նմուշները չեն սպառում
այն բոլոր սխալները, վրիպումներն ու բացթողումները, որ
ունեն Ստեփանովի թարգմանության առաջին հրատարակու-
թյունը: Մրանց վրա մենք ներքևում ավելացնում ենք մի շարք
նոր նմուշներ էլ, որոնք սակայն առանձնացված են հատուկ
նկատառումով:

Մինչդեռ վերևի ցանկերը նշում էին 1909-ի հրատարա-
կության այնպիսի վրիպումներ, որոնք շտկված են հետագայում,
ներքևի նմուշները երևան են հանում Ստեփանովի թարգմա-
նության այնպիսի թերություններ, որոնք մինչև օրս էլ հարա-
տևում են նրա նորագույն հրատարակությունների մեջ:

Ահա շատ ավելի բազմաթիվ օրինակներից էլի մոտ մի
երեք տասնյակն ամենավերջին, ութերորդ, 1935 թվականի հրա-
տարակությունից:

(Տե՛ս Երրորդ ցանկը էջ 36)

Կարելի է նշել մինչև 1935թ. հրատարակությունը հարա-
տևած ավելի ընդարձակ բացթողումներ էլ. օրինակ.

(Տե՛ս Չորրորդ ցանկը էջ 35)

²⁷ Թարգմանող խմբի մյուս անդամներն էին Ա. Բոգդանովը և Վ. Բազարովը:

Գերմաներեն (1922թ.)

Տարերեն (1933թ.)

Լատներեն (1909թ.)

Բուսերեն (1935թ.)

97	desto mehr kann er verkaufen	100 այնքան ավելի նա կարող է ծախել	98 тем больше он может купить	81 тем больше он может продать
221	die eine nach der andren, an Wescheitagen	224 իրար հետևելից հերթափոխվելու օրերում	223 одна за другой по очереди	186 в дни ломки смет одна за другой попеременно
226	ihren schmalen deutschen Nacktlaffern	228 արանց գերմանացի այն նեղախոյա ցամաքաշերտին	227 их плавающие подгосюки	189 их жалкие немецкие подгосюки
294	mehr Kapitalauslage	295 կապիտալի ավելի մեծ ծախ- սում	295 меньшая затраты капитала	247 большая затраты капитала
329	Spezifizierung der Arbeitsinstrumente	331 աշխատագործիքների մաս- նագիտացում	329 специализирует разделение труда	276 специализация орудий труда
337	obgleich nicht von denselben Fabrikanten	338 բնե ոչ նույն այն գործա- րանատերերի կողմից	337 мота и теми фабрикантами	282 хотя и не теми фабрикантами
337	zum Schmieden von mule und trostle Spindeln	338 mule-իւս trostle-ի իրիկներ դար- բներու	337 для изготовления различных веретен	282 для изготовления веретен к мюльям и тросильными машинами
342	wird von derselben Arbeitsmaschine verrichtet	343 պատրաստվում է միևնույն աշխատանքանայի միջոցով	342 производятся одной и той же машиной	286 производятся одной и той же рабочей машиной
377	den Kapitalisten zwingt	342 կապիտալիստին հարկա- դրում են (ստանաները)	376 побуждает работать	314 побуждает капиталиста
432-3	müssen die Schuhe ausziehen, auch im Winter	435 ստիպված են լինում ոտնա- մաները հանելու նաև հիմառը	431 должны снимать башмаки	362 должны снимать башмаки даже зимую

488	in einem variablen Wertprodukt	492 մի փոփոխուն արժեքային արդյունքի մեջ	485 в переменной стоимости	407 в переменной вновь произведённой стоимости
517	dies Stücklohnsystem, so vorteilhaft für den Kapitalisten	521 հատկապարհի այն սխեմանը, որ այնքան ձեռնտու է կապիտալիստին	515 эта система поштучной платы	433 эта система поштучной платы столь выгодная для капиталиста
538	Was aus den Grundrenten	543 ի՞նչ կլինե՞ր հողատնտա- ների վիճակը	537 что станется с земельными собственниками?	452 что станется с земельной рентой?
540	in das «moralische Workhouse»	545 բարոյական աշխատանե- րում	539 в моральном рабочем доме	453 в моральном рабочем доме
546	die einzige Bedingung für gegenwärtige Aneignung	550 միակ պայմանն է հիմա յուրա- ցնելու համար	545 единственным условием присвоения текущего присвоения	458 единственным условием для текущего присвоения
551	irrigie Auffassung seitens der politischen Oekonomie	556 սխալ բնորոշումը բարդա- տնտեսության կողմից	550 ошибочное понимание экономических условий	463 ошибочное понимание политической экономии
570	trotz dieser Gleichheit	574 սակայն շնայած այս հավա- սարոյանքի	568 и однако	478 однако, несмотря на это равенство
578-9	Einer aus der untersten Klasse	583 մեկնաստորինն դասակար- գից մի մարդ	578 кто - либо	487 кто - либо из низшего класса
614	die Zunahme der besteuerten Renten von Land	618 հողից տրած հարկերի մեծե- րաների մեծ	612 увеличение обложенной налогом ренты	517-8 увеличение обложенной налогом земельной ренты
724	durch den Asienvertrag das Privilegium abzwang	731 ասիայի (ստրկաբաժանումի- րան) դաշինքով արտոնու- թյուն կորցվեց	720 вынуждена по договору азиато привилегии.	610. вынуждена по договору азиато (договору привилегии)

Երրորդ ցանկ

Գերմաներեն (1922թ.)

Տայերեն (1933թ.)

Ռուսերեն (1909թ.)

Ռուսերեն (1935թ.)

170	Er ist der einzige Originalwert, der innerhalb dieses Prozesses entsteht, der einzige Wertteil des Produkts, der durch den Prozeß selbst produziert ist	173	նա միակ ինքնուրույն արժեքն է, որ ծագել է այս արդյունքի ներսում, արդյունքի միակ արժեքային, որ արտադրվել է հենց այս արդյունքի շնորհիվ	172	շուրիքի արժեքը հատկապես	144	Это – единственная новая стоимость, возникшая в этом процессе, единственная часть стоимости продукта, произведённая самим этим процессом
191	dessen Ruf in umgekehrtem Verhältnis zu seinem Verdienst steht	193	որի հռչակը հակառակ հարաբերակցան է շուր մատուցած ծառայության նկատմամբ	193	շուր նի	162	репутация которого стоит в обратном отношении к его заслугам
340	diese Hindernisse schwinden täglich mehr	341	այս արգելքներն օրեօր շրտանում են ավելի ու ավելի	340	շուր նի	284	такие препятствия с каждым днём всё больше устраняются
341	dessen Kräftepotenz ganz unter menschlicher Kontrolle steht	342	որի ուժական կարողությունն ամբողջովին ենթակա է մարդկային վերահսկողությանը	341	շուր նի	285	действия которого находятся всецело под контролем человека
370	Es ist in der Tat himmelschreitend, dass einer unserer Leute überhaupt jemals die Fabrik verlässt	371	իրոք աղաղակող անարդարություն է, որ ընդհանրապես մեր մարդկանցից մեկը երբևիցե բողոքում է գործարանը	369	շուր նի	309	да это – вопиющее дело, если кто –нибудь из наших людей когданибудь посядет фабрику
418	Gute Löhne konnten damals verdient werden	420	այն ժամանակ կարելի էր լինում լավ վարձեր վատասակել	417	շուր նի	349	тогда можно было получить хорошие заработки
502	alle Arbeit erscheint als bezahlte Arbeit	507	ամբողջ աշխատանքը թվում է վճարված աշխատանք	500	շուր նի	421	Всякий труд представляется оплаченным трудом
506	ohne Variation im Preise der Arbeit	511	շնայած, որ աշխատանքի գնի մեջ փոփոխություն չի կատարվել	504	շուր նի	424	без всякого изменения в цене труда

Գերմաներեն (1922)

Տայերեն (1933)

Երրորդ ցանկ

Ռուսերեն (1909)

Ռուսերեն (1935)

Ռուսերեն (1988)²⁶

181	4 Pfd. per Stunde und Pferdekraft	183	ժամում ու ձիու ժին 4 ֆունտ	182	4 фунта на час и рабочую силу	152	նույնը պահված է անփոփոխ
218	seine Lebensansgabe täglich	220	նրա կյանքի օրական ծախսումը	219	его жизненную задачу*	183	նույնը
273	algebraische Zusammensetzungsformel	275	րադարձություն հանրահաշվական ֆորմուլան	274	алгебраическую формулу	220	նույնը
289	ein Teil der Arbeitsmittel	290	աշխատանքիցոցների մի մասը	290	часть средств производства	242	նույնը
306	vermänniglicht die Arbeitswerkzeuge	307	րականացնում է դարձնում աշխատագործիքները	306	умножает рабочие инструменты	256	նույնը
339	die revolutionierte Dampfmaschine	340	հեղափոխված շոգեմեքենան	339	революционизировавшая паровая машина	283	նույնը
404	ein Tapetenfabrikant	406	մի պատաստագործարանատեր	402	один фабрикант	337	նույնը
515	fruchtbarste Quelle	520	ամենատակավի մի աղբյուր	513	обильнейший источник**	431	նույնը
516	Unterverpachtung der Arbeit	520	աշխատանքը ենթազարկմամբ	514	перепродажа труда посредникам	432	նույնը

²⁶ Ավիստրալացի ցանկին մեկ կցում ենք «Կառնախառն» 1988 թվականի րուսերեն, արատարարության ևս օրինակները, որտեղ 1935 թվականի արատարարության նիջն հետո մտացվ են անփոփոխ (ՍԼԻ.)

* Ըստ Երրորդ ցանկին անուշադրություն Ausgabe (= ծախսում) բառը կարդալով է Aufgabe (= խնայիր):

** Ըստ Երրորդ ցանկին Frucht (= ան, ստված) բառը կարդալով է Frucht (= ստույգ խնայիր):

539	durch Entleerung von Wert und Kapital	543	արժեքի ու կապիտալի դատարկվելու միջոցով	538	пустыи обесценивая капиталом	452	նույնը	
548	Uebervorteilung des Verkäufers	552	ծախողին հաջրի մեջ խաբարկը	547	обман продавца	460	նույնը	
565	dem Ackerbauelohnern auszahlen	570	ներկրագործական օրում շուկաներին վճարում էին	564	выплата	475	նույնը	
573	Urpflister Jeremias Beniam	578	Նախարարների երեմիա բենիամ	572	Еремия Бениам	482	նույնը	
608	der tiefste Niederschlag	613	ամենաուտորին դիրտը	607	нижний слой	573	նույնը	658 նույնը
624	Blodstellung geschlechtlicher Noektheit	628	անբավական մերկություն գուցադիրում	622	нелюбов	526	նույնը	673 նույնը
636	ein ganz kahles Zimmer	641	մի դափ-դատարկ սենյակում	633	совершенно голыйя комната ***	535	նույնը	
652	das erdrückende Uebergewicht der Tatsachen	656	ճնշող գերակշռությունն այն իրողությունների	648	факты	548	նույնը	697 նույնը
691	angrenzenden Landlord	698	առիճանակից լորդերը	687	дворяны	582	նույնը	737 նույնը
693	treibhausmäßig förderte	699	ջերմոցային եղանակով արտադարձը	688	был главным средством ускорить	583	նույնը	738 նույնը
701	den Vagabunden ihre Kinder wegzunehmen	707	բախտաբաշխիկից խլելու սրտ երեխաներին	696	отнять у раба его детей	593	նույնը	

***) լուս թարգմանիք Kahl (= բացարձակ, դատարկ) խաբարկը ազգ. է. Kahl (= լուրս, անտրո)

702	Landsreicher und Vagabund	708	դատարկապորտ ու բախտաբաշխիկ	697	Бродяга	591	նույնը	746 նույնը
709	zur Bestellung des Bodens	715	հողը մշակելու համար	704	для его земли	597	նույնը	753 նույնը
714	Fabriken und Armenhäuser	721	գործարաններ ու արքատանիքներ	710	фабрики и рабочие дома	601	фабрики и рабочие дома	

****) Լուս թարգմանիք Armenhäus (= արքատանից) խաբարկը ազգ. է. Arbeitshaus (= աշխատատուն եր)

XXIII Gerade das Gegenteil ist in derselben gesagt. [Mit fetter Schrift]	XXXVI Երա մեջ ճիշտ հակառակն է ասված: [թավ տպատառով]	XXXV Ես իսկ այսու թյունը պակասում է, ունի մի ինչիսկ չկարող եմ արժանանալ:	XXVII Ամբողջ հատվածը պակասում է:
482 [Obige Stellen sind nach der französischen Ausgabe des «Kapitel» übersetzt - D.H.]	486 [Վերևի հատվածները թարգմանված են «Կապիտալի» փրանսերեն հրատարակության համաձայն, Յ. Է.]	479 Ամբողջ հատվածը պակասում է:	402 Ամբողջ հատվածը պակասում է:
661 (1 acre = 40,49 Aren oder 1,584 preussische Morgen).	661 (1 ակրը = 40,49 ար, կամ թև 1,584 պրուսական օրովաթև):	657 Ամբողջ հատվածը պակասում է:	556 Ամբողջ հատվածը պակասում է:

Վերոգրյալն անհերքելիորեն ապացուցում է հայ ընթերցողի համար նորություն հանդիսացող այն դրույթը, թե «Կապիտալի» I հատորի ռուսերեն չորրորդ թարգմանությունն անզամ գերծ չի որոշ սխալներից, վրիպումներից ու բացթողումներից, և այս դրույթը ճիշտ է նրա ոչ միայն առաջին (1909թ.) հրատարակության, այլ նույնիսկ ամենավերջին, ութերորդ (1935թ.) հրատարակության վերաբերմամբ:

Եվ այնուամենայնիվ Ստեպանովի այս թարգմանությունը մինչև հիմա էլ համարվում է ռուսերեն ամենալավ թարգմանությունը:

Այս համեմատությունը կարելի է շարունակել տասնապատիկ չափերով և տասնապատիկ չափերով տարբերություններ մատնանշել, բայց տվյալ սահմաններում ակնհայտ է, որ հայերեն 1933-ին հրատարակված «Կապիտալի» I հատորի թարգմանությունը գերծ է ռուսերեն 1909-ի հրատարակության մոտավարապես 60%, 1935-ի 30%, 1988-ի 9 ուղղվելիք սխալներից, այսինքն իրենից առաջ ու հետո 80 տարվա ընթացքում շտկված մի քանի տասնյակ թերություններից:

VII

Այժմ հարևանցիորեն անդրադառնանք Ստեպանովի թարգմանության ու հրատարակությունների պատմությանը, որն անչափ հետաքրքրական է, լի անսպասելի անակնկալներով և իբրև հայերենի թարգմանության չափանիշ ընդունելիս անհրաժեշտ է հաշվի առնել:

Այդ թարգմանությունը պետք է բաժանել երկու պարբերաշրջանի՝ մինչ -1937(1909-1935) ու հետ - (1937-1988):

Չնայած այս թարգմանությունն, ինչպես ասվել է, լավագույնն է ու նոր փուլ է ազդարարում «Կապիտալի» ռուսերեն թարգմանությունների պատմության մեջ, բայց, խոսելով առաջին խմբի մասին, պետք է ասել, որ շնայած թարգմանական մատնանշած սխալների առավելագույն թվին, և գերմաներեն բնագրից բազմաթիվ շեղումներին, ամենազերադասելին այնուամենայնիվ, մնում է 1909 թվականի հրատարակությունը:

Ահա թե ինչու:

Բանն այն է, որ սկսած 2-րդ՝ 1920 թվականի (Խորհրդային ժամանակաշրջանի առաջին) հրատարակությունից, սույն թարգմանությունը հիմնվում է Կառուցված խմբագրած

«Կապիտալի» վրա, որն, իր հերթին, հիմնվելով գերմաներեն 2-րդ հրատարակության ու ֆրանսերեն թարգմանության վրա, նշանակալից չափով հետևելով գնացել 3-րդ, 4-րդ հրատարակությունների գիտական առաջընթացից, 15 տարով գործվել է նախալեզվային փուլ: Արդյունքը՝ Ստեփանովի թարգմանության 2-րդ հրատարակությունը ստացվել է գերմաներեն «Կապիտալի» նախկին հրատարակության և ժողովրդականացրած խմբագրության լավագույն թարգմանությունն, որը մի կողմից առաջադիմում է թարգմանական որակով, բայց նահանջում գիտական մակարդակով:

1937-ի հրատարակությունը (խմբագիրներ՝ Վ.Ադորատսկի, Մ.Սավկև, Ա.Ստեցկի) շրջադարձային պետք է լիներ, որը համեմատվելով գերմաներեն 4-րդ հրատարակության հետ ազատվելու էր Կաուցկու միջամտությունից: Բայց արդյո՞ր այդպես է: Իրո՞ք հրաժարվել են Կաուցկու խմբագրությունից, թե՞ հայտնելով հանդերձ, ամբողջ պատմության բնագրում հրատարակել և ժողովրդին սնել են «հեղափոխական մարքսիզմի շարագույն թշնամի» (Ա.Լ.Լոնտև), ռենկատ Կաուցկու խմբագրած «Կապիտալով»:

Սա է, որ սկզբունքորեն հետաքրքրական է:

1937-ի հրատարակությանը հաջորդած բոլոր թողարկումները նույնությամբ կրում են «Կապիտալի» գերմաներեն 2-րդ հրատարակության կամ Կաուցկու խմբագրության կնիքը:

Խոսքն առաջին հերթին 2-րդ հրատարակության վերջաբանի մասին է:

Նախ՝ այդ գրքի տպագրության «Նամբուրգ, 1872» տարեթիվը կեղծիք է, բանի, որ Մարքսի վերջաբանը գրված է 1873-ի հունվարի 24-ին, Լոնդոնում²⁸:

Գերմաներեն առաջին հրատարակությունը (1867թ.) միակն է, որ ունի Vorwort-առաջաբան, 2-րդը (1872թ.) միակն է, որ ունի Nachwort-վերջաբան: Սկսած 3-րդ (Լեզկևիսի) հրատարակությունից վերջաբանը, հետագա հրատարակությունների նրման, վերնագրվել է «2-րդ, ... 3-րդ, ... 4-րդ... հրատարակության առթիվ» մինչև Կաուցկու «Կապիտալի» հայտնվելը 1914-ին, որտեղ վերականգնված է «վերջաբանը»:

Ռուսերեն հրատարակություններում «Послесловие»-ն նույնպես հայտնվում է Կաուցկու «Կապիտալից» սկսած, Ստե-

փանովի թարգմանության 2-րդ հրատարակությունից (1920թ.) և այսպես է մինչև օրս: Դրանից առաջ միայն Լյուբիմովի թարգմանության 1898թ. հրատարակության մեջ է Լեզկևիսից ճշտորեն թարգմանված «Ко второму изданию»: Մյուսներում՝ Լուպատինի թարգմանության մեջ Մարքսի առաջաբանն ու վերջաբանը բացակայում են, իսկ մնացածներում «վերջաբանը» դարձել է... «Предисловие» (??):

Նույնպիսի օրինաչափություն պահպանվում է սույն վերջաբանի առաջին 4 պարբերությունների հարցում, որոնք չկան «առթիվ»-ներում, այլ կան միայն «Послесловие»-ներում՝ մինչև 1988թ. հրատարակությունը:

Երրորդ կասկածելի փաստն այն է, որ Կաուցկին Ֆարենհայթի ջերմաչափի ցուցմունքները փոխարինել էր Ցելսիուսի ջերմացույցով, որն այսպես է թողնված մինչև այժմ:

Վերջապես՝ գերմաներեն 5-րդ հրատարակության մեջ Կաուցկու մատնանշած 30 կարծեցյալ վրիպումները Մարքսի «Կապիտալի» հետագա հրատարակություններում ուղղված են Կաուցկու ցուցմունքներին համապատասխան²⁹:

Նշանակում է Կաուցկու ն իսպառ չեն փտարել հրապարակից, այլ մի բան էլ ավելի՝ առաջնորդվել են նրանով: Նևտարար՝ 1937-ի վերստուգումը չի համերաշխվել 4-րդ հրատարակության հետ, այլ կատարվել է հին՝ 2-րդ հրատարակության ռևստավրացիա: Այս կերպ Մարքսին փաստորեն «ազատագրել են» Լեզկևիսի խմբագրումից, բայց «վզին են փաթաթել» Լեռնիի թարգմանական նմուշները, որի հետևանքով 1937-1988թթ. հրատարակությունների խումբը վերածվել է Լեզկևիսի, Կաուցկու, Լեռնիի մի խառնուրդ «Կապիտալի»³⁰:

Սրան ավելանում են լրացուցիչ կասկածներ՝ վերոհիշյալ տարրերը համերաշխումն ի՞նչ ուղղությամբ են կատարվել, դեպի հե՞տ, թե՞ առաջ: Այստեղ կարելի էր կազմել ևս մի ցանկ 1937-1988 թթ հրատարակությունների միջև բնագրից հեռացող տարբերությունների օրինակներով: Մասնավորապես բերում ենք մեկ օրինակ (Տե՛ս աղյուսակը, էջ 42):

²⁸ Տե՛ս *K. Marx*, Kapital, T.I., M., 1920r., Կաուցկու առաջաբանը

³⁰ Բոլոր այն հատվածները, որոնք Լեռնիը երբևէ վկայակոչել է «Կապիտալից», տրված են Լեռնիի թարգմանություններով: Եթե միևնույն հատվածը վկայակոչված է տարբեր ժամանակների ստեղծագործություններում, ապա տրված է վերջին թարգմանությունը: Լեռնիի կիրառած տնտեսագիտական տերմինները տարածվել են ամբողջ գրքի վրա (Տե՛ս «Kapital», 1937 թ. հաջորդած ցանկացած հրատարակության առաջաբանը):

²⁸ Տե՛ս *K. Marx*, Das Kapital, 1872, Hamburg.

666 Zu - oder Abnahme des zum Fruchtbau und als Wiese (resp. Wei- de) benutzen Bodenareals in Acres.	671 Կրն արտախար ու իլրն մարգագետին (կամ արոտավայր) օգ- տագործված հողային տարածության ավե- րջումը կամ նվազե- ցումն ակրերով:	662 Увеличение или уменьшение пло- щади запашек и лугов (или пае- тов) в акрах.	705 Увеличение или уменьше- ние площади запашек и лу- гов (или пае- тов) (в акрах)	711 Ամբողջ հատվածը պակասում է:
--	---	--	--	--

Տամենայնդեպս հայերեն «Կապիտալի» գնահատման համար ռուսերեն «Կապիտալն» բնօրինակի չափանիշ չէ, և թե չասենք հակառակը՝ հայերենի գերազանցության բացահայտ ցուցանիշ է, որտեղ բացակայում են կասկածելի սկզբնաղբյուրները, պատմական խոստորումները, խմբագրական կողմնակի միջամտություններն ու համատարած բացթողումներն, այլ ի սկզբանե իշխում է բնագրին հատուկ միակերպ խմբագրական սկզբունքը, գիտական պատշաճ մակարդակն, անշեղ տերմինաբանությունն ու թարգմանական դպրոցը:

Տևտևաբար այսպիսի դիրքում են հայտնվում հայերեն «Կապիտալի» համեմատությամբ ռուսերենից կատարված բոլոր թարգմանությունները: Այլ կերպ՝ հայերեն «Կապիտալը» մի քանի առումներով գերազանցում է ռուսերենից կատարված բոլոր թարգմանություններին:

Իսկ թե ռուսերեն «Կապիտալում» որտեղի՞ց են «թռչունների պես ազատ պրոլետարները» («Կապիտալ» հայերատ. 688, 689, 705 և ն. լջերում) համատարած փոխարինվել «поставленные вне закона» (ՄՁ, 23-րդ հատ. 728, 729, 744 և ն. լջերում), «ջրանցքը» (675) «Լա-Մանշ նեղուցի» (715), «Լա-Պլատան» (326) «Արգենտինայի» (366) և այլ տարբերությունները, չգիտենք, չենք կարող ասել: Դրանք չկան ո՛չ բնագրում, ո՛չ Կառուցված խմբագրածի, ոչ էլ ֆրանսերեն թարգմանության մեջ: Ըստ կրկնության սրանք ռուս թարգմանիչների կամ խմբագիրների ինքնապատում զեղումներն են:

Տայերեն «Կապիտալի» ազգային ծառայությունն առաջին հերթին լեզվաշինության նոր փուլն էր հատկապես գիտական լեզվի ու տնտեսագիտական տերմինաբանության ասպարեզներում:

Տայերեն գիտական լեզուն ստեղծվում էր «Կապիտալի» թարգմանությանը համընթաց, իսկ տերմինաբանության առումով թարգմանչի առջև ծառայել էին միանգամից երկու հարց՝ ամբողջական տերմինաբանության ստեղծման և եղածի ռեֆորմի անցկացման խնդիրները, որոնք հայ թարգմանչի ավելադիր բարդացումներից էին:

Բնական կլիներ «Կապիտալի» նման մի գործի անդրանիկ թարգմանչից կամ թերամշակ բնագավառի առաջին քայլեր անողից չպահանջել ավարտուն տերմինաբանություն, ինչպես արդարացիորեն չի պահանջվել «Կոմունիստական մանիֆեստի» անդրանիկ թարգմանիչներից:

«Մի տիկին Մարոյից, որ թարգմանել է 30 տարի առաջ, ու մի Մանուշարյանից»³¹ որ թարգմանել է 20 տարի առաջ, չի կարելի պահանջել հաջող ու ճիշտ տերմինոլոգիա...: Այլ բան է Մակինցյանը: ...Որովհետև նա շատ է ստացել, նրանից շատ էլ պիտի պահանջվի, գրել է Ավդալբեգյանը Մակինցյանի թարգմանության մասին անտիպ գրախոսականում»³²:

Այս է օրինաչափությունն բնդհանրապես, բայց «Կապիտալին» ու Ավդալբեգյանին դա չի վերաբերում: Այստեղ օրինաչափությունն ու իրադրությունն այլ դրսևորումներ ունեն՝ «Կապիտալի» նույնիսկ տարբեր հատորները տարբեր պահանջներ են առաջադրում և թարգմանիչը համապատասխանաբար այլ պահանջներ էր դրել իր առջև:

Ինչպես ասվել է, նախքան «Կապիտալը» Ավդալբեգյանն արդեն թարգմանել էր տնտեսագիտական երկեր և հիմնականում կազմել էր «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինաբանական բառարանը», որ լույս տեսավ 1964-ին միայն: Բացի այդ, հանրապետությունում արդեն նշանակալից աշխատանք-

³¹ Մարո Նազարբեկյան և Միքայել Մանուշարյան՝ «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն առաջին թարգմանիչները:

³² Թադ. Ավդալբեգյան՝ «Կոմունիստական մանիֆեստի» Պ.Մակինցյանի թարգմանության 1922թ. հրատարակության մասին անտիպ գրախոսականը, Երևան, 1922թ. (Տե՛ս ՏԱԱ, ֆ.393, ց.1, գործ №99):

ներ ինն տարվել այդ ուղղությամբ, հատկապես 1921-1931 թթ. տասնամյակում:

«Կապիտալը» հզոր խթան էր կատարելագործելու և ավարտակետին հասցնելու համար նախկինում կուտակածը՝ մեկուսի տերմիններից ստեղծելու համակարգված տերմինաբանություն, երբ յուրաքանչյուր հասկացության կողքին գոյություն պիտի ունենար հարակից հասկացությունների սանդղակ, իսկ առանձին վերցված տերմինները ձևավորվեին հայերենի լեզվաշինության պատմական տեղեկեցիքն համապատասխան՝ **բառարարդումներ** կիրառմամբ:

Այդ նպատակով Ավդալբեգյանը հայերեն գրական լեզվի, գրաբարի, գավառաբարբառների և մասնագիտական բառարաններից բաղուժ է կռահարկ, կրթման բառահարկ բառարարդումների մոտ 600 նմուշներ և կառուցում մինչև հնգահարկի ու նույնիսկ վեցահարկի հասնող բառարարդումների բազմաթիվ տերմիններ³³:

«Տնտեսագիտական տերմինաբանության հարցը որոշելու ժամանակ, - գրել է Ավդալբեգյանը, - մեր առջև կանգնած էր ոչ այնքան տերմիններ ստեղծելու հարցը, որքան արդեն գործածության մեջ գտնվող այնպիսի տերմինների **ընտրությունը**, որոնք *ամենամեծ ճշգրտությամբ արտահայտում են տվյալ տնտեսագիտական հասկացողությունը*»³⁴ (րնդգծումները մերն են: - Ա.Մ.):

Գործածության մեջ ինն գտնվում ոչ միայն հայերեն, այլև օտար լեզուներով բառեր: Նման դեպքերում հարցը լուծվել է ձևում և բաղաբացիություն ստացած հայերեն ու եվրոպական նույնանիշ տերմինները «Կապիտալում» գործ են ածված երկու ձևով՝ միննույն կամ տարբեր իմաստներով: Օրինակ՝ լատիներեն «*կապիտալ*» տերմինը մնացել է նույնությամբ, իսկ հայերեն «*դրամագյուլիսն*» օգտագործված է կապիտալի միայն փողային իմաստն արտահայտելիս: Նմանապես կարելի է՝ «*ռենտա*», իսկ «*րենադարձը*» թողնել արդյունավճար ռենտայի համար: Նույն սկզբունքով օգտագործվել են «*սիստեմ*» և «*համակարգ*», «*լքսպերիմենտ*» և «*փորձարկ*», «*լքվիվայենտ*» և «*համարժեք*», «*թևորիա*» և «*տևություն*», «*կոմբինացիա*» և «*համակցում*», «*իմանենտ*» և «*ներհատուկ*», «*կրիզիս*» և «*ձգնաժամ*» են: Սրանով հայոց լեզուն

չէ աղտոտվում օտարամոծություններով՝ րնդ հակառակը, տարբերակների րնտրության հնարավորությամբ ճշգրտվում է տերմինը, ինչը կղավ հետագայում՝ Լվոյուցիոն գտման շնորհիվ:

Տայտնի է, որ տերմինի բարձրագույն հատկանիշը ճրջգրիտ և որոշակի լինելն է, իսկ ցանկացած լեզվի զարգացման աստիճանը՝ տերմինաբանական հարստությունը: Տայտնի է նաև, որ հասարակական գիտությունների տերմիններն այնչափ հրստակ չեն լինում որքան ճրջգրիտ գիտությունների տերմինաբանությունները: Բայց Ավդալբեգյանը ձգտել է հայերեն տնտեսագիտական տերմինաբանությունը հասցնել հենց ճրջգրիտ գիտակարգերի տերմինաբանության մակարդակին:

«Գիտակցաբար կիրառմամբ (բառարարդումներ: - Ա.Մ.) տնտեսագիտական տերմինաբանությունը բարձրանում է այն աստիճանին, որին արդեն **հասել են մեզանում, օրինակ՝ մաթեմատիկական դիսցիպլինաների տերմինաբանությունները**»³⁵:

Այս հարցում հսկայական դեր է կատարել Ավդալբեգյանի տնտեսագիտական մասնագիտացումը: Կարող էր, օրինակ՝ *constanta* բառը ռուսերեն *постоянный капитал*-ի նմանությամբ սխալ թարգմանվել «*մշտական կապիտալ*», բայց տնտեսագիտորեն ճիշտ է «*հաստատունը*», որ հակադրվում է «*փոփոխուն կապիտալին*»: Տնտեսագիտորեն թերի է նաև «*հիմնական կապիտալ*» տերմինը՝ ճրջգրիտ է «*սևնունը*», որ հակադրվում է «*հոսուն կապիտալին*» և այլն:

Թեև Ավդալբեգյանը գրում էր թե «ոուսն օգտվում էր պատրաստի տերմինաբանությունից», բայց ռուսերեն տերմինների մեծամասնությունը մնացել է չթարգմանված և մտել ոուսաց լեզվի բառապաշարի մեջ առանց բառի իմաստը հասկացվելու: Ցանկացած ռուսախոս երկար-բարակ բացատրություններով կարող է մոտավոր պատկերացում կազմել *дивидент, сертификат, акция, экспроприация* և այլ բառերից, այնինչ յուրաբանչյուր հայախոս առանց աչք թարթելու կրմբոնի հիշյալ տերմինների ստույգ բովանդակությունը՝ *շահութամաս, հավաստագիր, բաժնետոմս, ունեզրկում* են: Այսպիսի օրինակների թիվը կարելի է բազմապատկել: Մոտրե ներկայացնում ենք ռուսերեն չթարգրմանված տերմինների ու բառերի հայերեն թարգմանությունների փոքրիկ ծաղկաբաղ:

(Տե՛ս Հինգերորդ ցանկը էջ 46)

³³ Տե՛ս գրքի հավելվածում «Բառարարդումների...» օրինակները, էջ 158:

³⁴ Ա.Մարթա «Կապիտալ», 1 հատ. Երևան, 1933թ.: հայերեն հրատարակության առաջապանը, էջ XVI:

³⁵ Տե՛ս հավելված «Բառարարդումներ» բաժնի եզրակացությունը, էջ 158:

Հինգերորդ ցանկ

Ռուսերեն

Հայերեն

аванс	կանխավճար
акционер	բաժնետեր
акция	բաժնետոմս
аренда	վարձակալություն
арендатор	վարձակալ
ассортимент	տեսականի
асосито	սարկավաճառություն
баланс	հաշվեկշիռ
брутто	համախառն
депозит	ավանդ
депозитор	ավանդատու
дефисит	պակտոր
дивидент	շահույթամաս
интердент	խառնանյութ
индуетрия	արդյունազորություն
номен	շինական
комбинация	համակցում
компаньон	համընկեր
компенсация	բավանք
конгресс	համաժողով
контакт	համաշփում
концентрация	համակենտրոնացում
маклер	վաճառամիջնորդ
нетто	անխառն
операция	գործառնություն
ориентация	դիմումը դուրս
патент	արտոնագիր
патрон	խնամակալ
пауперизация	աղքատացում
петиция	հանրագիր
прейскурант	գնացուցակ
реализация	իրացում
рекрут	նորակոչիկ
сертификат	հավաստագիր
соло – вексель	մենամուրհակ
спекулянт	շարաշահ
спекуляция	շարաշահություն
субсидия	նպաստ, օժանդակություն
субституция	ենթանշանակում, փոխանորդակարգում
уинкум	նմուշահատ
эквивалент	համարժեք
экспроприация	ունեզրկում

Այս ցանկում նշված ռուսերեն համարյա բոլոր տերմիններն ու բառերը տեղ են գտել «Словарь иностранных слов» բառարանում³⁶:

Տևտագայում տնտեսագիտական տերմինաբանությունն, իհարկև, պետք է բնղյայնվեր գիտակարգի նոր թափին համընթաց, նոր հասկացությունների ներմուծամբ, բայց Թ.Ավղայրեղյանի հիմնադրամ տերմինաբանությունը մեծամասամբ մնաց անփոփոխ և ակտուալ և առ այսօր: Շուկայական հարաբերությունների անցնելուց հետո մեր լեզվի մեջ ներմուծվեցին, օրինակ՝ депозит, инвестиция հասկացողությունները, այնինչ հայերեն տնտեսագիտական տերմինաբանության մեջ վաղուց կային “ավանդ” և “ներդրում” տերմինները: Ներկայումս սովորական դարձած և գործածության մեջ եղած շատ ու շատ բառերի և տերմինների աղբյուրը հայերեն «Կապիտալն» է:

Գիտական թարգմանության գլխավոր պահանջներից մեկը՝ տերմինաբանությունը հայերեն գիտական լեզվի ստեղծման պարագաներից մեկն է, որ «Կապիտալում» լուծված է փառավորապես:

IX

Եթև նախորդ գլուխներում ցուցադրամ տարբերությունները ռուսերենից ապացուցում են, որ նշված կասկածներն ու թյուրիմացությունները ոչ մի չափով չեն անդրադարձել հայերեն «Կապիտալի» վրա, բանի որ դրանք, հավանաբար, տարբեր սկզբնաղբյուրների ծնունդ են, ապա հիշյալները տարածվում են ռուսերենից կատարված բոլոր թարգմանությունների վրա:

Այս իմաստով փայլուն համեմատական նմուշ է «Կապիտալի» 1954 թվականի հայերեն հրատարակությունը, որի թարգմանությունը ռուսերենից իրականացրել է Վ.Փոթեղյանը³⁷: Առաջին հատորը հայերեն գոյություն ունի և՛ բնագրից, և՛ ռուսերենից կատարված թարգմանություններով, որոնց համեմատությունն անչափ հետաքրքրական է առաջին հերթին որպես երկու սկզբնաղբյուրների անդրադարձումներ, բառացիորեն ամեն քայլափոխի պատահող անհավատալի տարբերություններով:

³⁶ Տե՛ս «Словарь иностранных слов», изд. «Русский язык», Москва, 1988.

³⁷ Այդ թարգմանության իրադրոմ մն առաջարկվամ է եղել կատարել Լ.Տեր-Միլայանին, որը նեղ մասնագիտական խնդիրներին և տերմիններին կոմպետենտ չլինելու պատճառով խելամուտքն հրամարվել է հանձնատու թյու նից:

զարմանալի փաստերի բացահայտումներով և, իհարկև, թարգմանչական հմտությունների ցուցանիշներով:

Ուշագրավ է, որ նշված «անհավատալի տարբերություններն» ի հայտ են գալիս ռուսերեն թարգմանության ևրկրորդ պարբերաշրջանում լույս տեսած սերիայի հետ կատարված համեմատությունից, որի առթիվ համամիութենական Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի, Մարքսի և Լենինի Լրկերի հրատարակության սեկտորի 1936թ. հաշվետվության մեջ նշված է.

«Կապիտալի» 1 հատորի գլխավոր և աշխատանքային խմբագրություններն անց են կացրել ավելի քան 50 խորհրդակցություն և տեքստի մեջ մտցրել են ավելի քան 4.000 արձանագրված ուղղում (միջին հաշվով ոչ-պակաս քան 5-6 ուղղում յուրաքանչյուր էջում)»³⁸:

Եթե 4.000 ուղղում մտցնելուց հետո աչք են ծակում «ամեն քայլափոխի պատահող» տարբերությունները հայերեն և ռուսերեն «Կապիտալների» միջև, ապա ի՞նչ կլիներ մինչ 1937 հրատարակությունների հետ կատարված համեմատության պատկերը:

Պարզելու համար թե Վ.Փոթևյանն իրո՞ք թարգմանել է, թե՞ «թխել է» Ավդայրեզյանից, մեր կատարած թռուցիկ համեմատությունը ենթադրել է տալիս, որ Փոթևյանն, ի պատիվ իրեն, յուրովսան թարգմանել է՝ կրկնելով 3-րդ ցանկի 5-րդ սյունակում մատնանշած սխալները 1988թ. հրատարակության մեջ³⁹:

Սակայն հարցի մյուս կողմն էլ կա:

Փոթևյանին շատ ավելի ձևանտու է Լոկի հայերեն և ռուսերեն թարգմանությունների միջև Լոկո տարբերությունները, իսկ առիթի դեպքում ինքն է արհեստականորեն ստեղծել այդպիսիք, որի հետևանքով «Կապիտալը» բացող «Ապրանք ու փող» վերնագիրը դարձել է «Ապրանք և փող», «Ապրանքը» վերնագիրը՝ «Ապրանք», «որոնց մեջը»՝ «որոնցում», «հասարակը» (простая)՝ «պարզ», «Լզակին» (единичный)՝ «առանձին», «քանակայինը»՝ «քանակական», «լիակատարը»՝ «լրիվ», «շինողը»՝ «պատրաստող», «փոխվածը»՝ «փոփոխված» ևն:

Սա հանար չէ և այսպիսի օրինակները բազմաթիվ են:

Պետք է ասել, որ միանգամայն անիմաստ է և ամենևին մեղադրելի չէ, օգտվել նախորդ փորձի արդյունքներից և Փոթև-

յանը լիիրավ կարող էր հենվել Թ.Ավդայրեզյանի թարգմանության վրա, անձեռնմխելի թողնելով, օրինակ՝ տերմինաբանությունը կամ ավելի լավ կլիներ 20 տարում կատարելագործված ու ճշգրտված տերմինների մուծումով հայերեն 2-րդ «Կապիտալը» դարձներ տնտեսագիտական տերմինաբանության նոր էջ:

Փոթևյանն արել է հակառակը:

Լեզվապատմական բարձր փուլը նշանավորող և հայոց լեզվի օրենքներով թույլատրված, վերջապես Թ.Ավդայրեզյանի ջանքերի փայլուն արգասիք հանդիսացող՝ կրճատման-բարդման սկզբունքով կառուցված արդիական տերմինները, Փոթևյանը հակառակ գործողությամբ ջլատել է սուսկական բառակապակցությունների, որով գլորվել է նախնական պրիմիտիվության աստիճանի: Դրա հետևանքով «սպառարժեքը» դարձել է «սպառողական արժեք», «արժեձևը»՝ «արժեքի ձև», «արժենիշը»՝ «արժեքի նիշ», «արժեմասը»՝ «արժեքի մաս», «վճարամիջոցը»՝ «վճարման միջոց», «ապրանքաշրջանառությունը»՝ «ապրանքների շրջանառություն», մինչև անգամ «աշխատորը»՝ «աշխատանքային օր», բայց «աշխատուժը» հանկարծ մնացել է նույնությամբ:

Չարմանալի է, որ այդպես է վարվել փորձառու տերմինաբանն՝ աշխատանքային բառարանի հեղինակը:

Այս կերպ զգալիորեն թուլացված են տերմինաբանական որոշությունն ու իմաստային սահմանագծերը: Երբ ասում ենք «աշխատոր» դա ստույգ, որոշակի սահմանների մեջ առնված տերմին է, իսկ «աշխատանքային օրը»՝ սովորական բառերի սպավորություն է թողնում:

Բացի այդ՝ բաղադրյալ տերմիններում առաջին բառից որոշակիացող, օրինակ՝ 1) հասարակ..., 2) եզակի..., 3) հարաբերական..., 4) համարժեքային..., 5) լիարժեք..., 6) ընդհանրական... ևն արժեձևը, փոխարինվել է Լրկարաբան ու հարցեր ծնող՝ արժեքի (ի՞նչը) - ձևը, (ո՞ր ձևը) - հարաբերական ևն:

Բարևբախտաբար խոսքն առաջին հատորում կիրառված Լրկհարկ բառաբարդումների մասին է լոկ, իսկ ի՞նչ կլիներ հաջորդ հատորներում օգտագործվող Լոտհարկ-հնգահարկ ու նույնիսկ ավելի բառաբարդումների հետ, Լթե գործն այդտեղ հասներ: Արդյո՞ք «վերստին արտադրության պարբերության շրջան» կամ «պտույտի պարբերության շրջան»:

Միննույն «արժեք» բառով է թարգմանված և գերմաներեն բնագրի Wertgegenstandlichkeit ու Wertding բառերի մեջբերումով ևն զանազանվում հայերեն՝ առաջին «Կապիտալում»

³⁸ Центральный Партийный архив ИМЭЛ, сектор произведений К.Маркса и Ф.Энгельса. Фонд №71, оп.7, ед. хранения №2, стр.36. Краткий отчет о работе сектора Маркса и Энгельса за 1936г.

³⁹ Հմն. «Կապիտալ», 1954, էջ 325, 578, 674, 690, 717, 759, 760, 769, 776:

տարբերացված «արժևրի առարկայականություն» և «արժևր» հասկացությունները:

Օրինակներ բազմաթիվ կարելի է բերել ցույց տալու համար, որ 1954-ի «Կապիտալը» մի խոշոր հետքնթաց է 1933-ի «Կապիտալի» համեմատությամբ և Փոթևյանն առաջինն է դա հասկացել: Առավելագույն չափով, քան որևէ մեկը, նա բազմիցս դիմել է Թ.Ավդալբեգյանի թարգմանությանն ու բազմաթիվ անգամներ հայտնաբերելով տարբերությունները ռուսերենից, առաջինն է տեսել այն, ինչ հետագայում մանրակրկիտ Լքս-պերսոնները կարող էին հայտնաբերել: Գեր մեկ անգամ նա պարզապես կրկնել է բնագրին հարազատ, ճիշտն ու առաջադիմականը և քանի՜ անգամ նա գայթակղված կլիներ հետևել առաջին «Կապիտալին», բայց ստիպված է եղել հյու-հնազանդ քաշել իր լուծը:

Եվ, այնուամենայնիվ, ամբողջովին խուսանավել Թ.Ավդալբեգյանի ներդրումից, Փոթևյանին չի հաջողվել: Չափածո այն հատվածները, որոնց թարգմանությունը չի եղել և չկա գրական հրատարակում Փոթևյանն ընդօրինակել է առաջին «Կապիտալից» առանց թարգմանչին հիշատակելու:

Ի վերջո Փոթևյանն արել է այն, ինչից հետևորդներին ապահովագրել էր Թ.Ավդալբեգյանը՝ հետադարձ հայացքներից ու հետքնթաց քայլերից, իսկ տվյալ դեպքում ռուսերեն թարգմանության հետացած սկզբնաղբյուրին ավելադրվել են հայերեն թարգմանչի հետադարձ գործողությունները:

X

«...պետք էր հայացնել... «Կապիտալը»,-գրել է Ավդալբեգյանը:

Փորձենք տարբերություն դնել «թարգմանելու» և «հայացնելու» միջև: Հայացնելն, անշուշտ, նույնպես թարգմանություն է, բայց լրացուցիչ երանգ է ավելանում վերջինիս վրա: Դա հայ ընթերցողի համար հարազատացնելն է, հայկականացնելն ու հայության մեջ պատվաստվելու խնդիրն է: Կարելի է բնտիր հայերենով թարգմանել և թարգմանված է Շեքսպիրը, բայց հայացնելու պետք չկա, իսկ Աստվածաշունչը բավական չէ թարգմանել, այն պետք է հայացնել: Հետևաբար գեղարվեստական ստեղծագործությունը բավական է թարգմանել, իսկ արմատավորում պահանջող հասարակագիտական ու նամանավանդ գաղափա-

բախոսական նշանակություն ունեցող գրականությունը պետք է ազգայնացնել:

«Կապիտալն» ուներ ոչ միայն հասարակագիտական, այլև շեշտված գաղափարախոսական ու մասնագիտական նշանակություն, ուստի պետք է ոչ միայն թարգմանվեր, այլև հայացվեր:

Վերջինիս պարագաներից մեկը տերմինաբանությունն է, որ հայերեն «Կապիտալում», ինչպես տեսանք, լուծված է հայոց լեզվի պատմական տեղեկների՝ բառակազմության սկզբունքների համապատասխան միջոցներով:

Դրանից բացի.

«Այդպիսի գրքի թարգմանության համար բավարար չէ լավ իմանալ գերմաներեն գրական լեզուն,- գրել է Լինգելը: - Մարքսն ազատորեն օգտվում է առանցիկ արտահայտություններից ու զավառաբարբառների իդիոմներից. նա ստեղծում է նոր բառեր, իր օրինակները նա փոխ է առնում գիտության բոլոր բնագավառներից...»⁴⁰:

Եթե «Կապիտալի» թարգմանության համար ստեղծվում էին հայերեն գիտական լեզու և տերմինաբանություն, ապա «Կապիտալի» աշխարհը վերաբրտադրելու համար պետք է գտնվեին հայոց համապատասխան իդիոմատիկ բառ ու բան:

Այս խնդրի լուծման լավ օրինակ է գերմաներեն Grund und Boden բարդ արտահայտության թարգմանությունը: Երկու բառն էլ նշանակում են «հող» և այդպես են թարգմանված բառաբաններում, բայց ունեն մոտավորապես «հող ու հիմքի» իմաստ: Առուսերենում բարդ արտահայտությունը թարգմանված է «земля» մեկ բառով:

Ավդալբեգյանը գտել է ուրույն եղանակ: Գերմաներեն արտահայտությունից հայերեն է թարգմանել «հող» բառը և փոխ առնելով ժողովրդական «տուն ու տեղ» արտահայտությունից Grund und Boden-ը հայացրել է «հող ու տեղ» բարդ արտահայտությամբ:

Նմանօրինակ դեպքերը շատ են և «Կապիտալի» լեզուում մենք հանդիպում ենք մեզ հարազատ «ափաշկարա», «հավ ու ձիվ», «նորա երկրքյան մի են», «ախպեր տղերք», «ձխտմխտվել», «ազիզ փող», «բրդուձ», «ոռվանք», «հենց յուր ջանին» և այլ զուտ

⁴⁰ К Маркс и Ф. Энгельс: Собр. соч., т. 21, стр. 237, Ф. Энгельс, Как не следует переводить Маркса, («Կապիտալի» Զ. Բրոդիստի անդերեն թարգմանության մասին գրախոսական հոդվածը):

հայկական կյանքից համեմատաբար ասուծությունների, որոնք զարմանալիորեն ներդաշնակվում են «Կապիտալին» ու սազ են գալիս Մարքսի ոճին:

Ավելացնենք նաև, որ «Կապիտալում» հայերեն են թարգմանված «գիտության բոլոր բնագավառներից» Մարքսի փոխ առած օրինակների բազմաթիվ տերմինները - известковый шлак-կրամոխիր, огненный воздух-հրոդ, доза-դեղաքանակ, гомеопатия-նույնարուծություն, кровопускание-կրակահատություն, патология-ախտաբանություն, гос. строй-պետական կարգ, эмаль-արձնապակի, шрифт-տպատառ, панацея-համադարման, плагиат-բանագողություն, торф-հողածուխ, компиляция-բանաբաղություն, рычаг-ամբարձարակ, маховое колесо-թափանիվ, опись-կահույրագրում, подвижной вал-շարժագլան, промежуточное приспособление-միջնասարք, модифицирование-հորինագործություն, пластина-դրվագաթերթ, кирпич-շինարար, пастер-нак-դեղնագոնգես, эпоха-պատմաշրջան են, ևն:

Չենք երաշխավորում, որ այս և այլ տերմինների հեղինակությունն անպայման Ավդալբեգյանին և պատկանում կամ բոլորն անթերի են, բայց, որ «Կապիտալը» հայերեն և կերտված լեզվի բնատիպ սևասուրսներով և լեզվաշինարար-թարգմանչի անբավ կարողություններով՝ բացահայտ և:

«Կապիտալը» հայակերտված ու հոյակերտված է:

XI

«... հին ու նոր լեզուների անհամար քաղվածքներ...»

«Կապիտալի» մեջբերումները,- գրում է Լեզվաբան մի ամբողջ դյուսմին լեզուների գրականություններից են քաղված»⁴¹:

2000 կջանոց տպագիր 4 գրքերում մատենների վրա կարելի է հաշվել օտարալեզու հատվածներ չպարունակող էջերը: Հատկապես I հատորի 4-րդ հրատարակությունը, որտեղ «Մարքսի կրասեր դուստրը՝ Էլեոնորն աշխատանք էր հանձն առել, մեջբերված բոլոր տեղերը համեմատելու օրիգինալների հետ, այնպես, որ անգլերեն աղբյուրներից մեջբերած ու մեծապես զերակշռող քաղվածքներն անգլերեն հրատարակության մեջ դրվեն

ոչ թե զերմաներենից կրկին անգլերեն թարգմանվելով, այլ լույս տեսնի նրանց հենց անգլերեն իսկական բնագիրը»⁴²:

Ուստի այս հրատարակությունից արված թարգմանությունն էլ բարդացված է նշված առավելություն պատճառով, որից ազատագրված են եղել նախորդ հրատարակությունների թարգմանիչները:

«Կապիտալում» հիշատակվում են կամ դրանցից մեջբերվում են մոտ 350 հեղինակների ավելի քան 500 ստեղծագործություններ, բազմաթիվ պատրամենտական հաշվետվություններ ու պաշտոնական հրապարակումներ, մի քանի տասնյակ պարբերականներում սփռված մոտ 140 հոդվածներ՝ միջառք լեզուներով: Միայն I հատորում մեջբերումների թիվը զերբազանցում է 1000-ից, ընդ որում անգլերեն քաղվածքները կազմում են մոտ 700 մեծադիր կտորներ:

Շատ են զեղարվեստական գրականությունից վկայակոչված հատվածները: Ավելի քան 30 գրողների 75 երկերից բերված քաղվածքների ենք հանդիպում հազարավոր էջերում, որոնց թվում Անտիպատրոս Թևսալոնացին ու Բուալոն, Վիրգիլիոսն ու Վոյտսերը, Հայնեն ու Գյոթեն, Հոմերոսն ու Սեքստուս-Լավիպիկոսը, Թուկիդիդեսն ու Հորացիոն, Դանթեն ու Դիդրոն, Օվիդիոսն ու Մոֆոկկերը, Յուվենալն ու Դեկղենը, Աստվածաշունչն ու Հովհաննու հայտնությունը, առասպելաբանությունը, հունարեն ու լատիներեն գրող հեղինակները, բանախուսական առածներն ու ապացվածքներն և այլ «մեծերն աշխարհի»:

Հայերեն «Կապիտալում» հայերեն են թարգմանված բնագրում և՛ թարգմանված, և՛ շարգմանված մեջբերումները:

Բոլոր այն քաղվածքները, որոնք Մարքսը մեջ է բերել միայն օտար լեզուներով, հայերեն «Կապիտալում» դրված են միայն հայերեն թարգմանությամբ, բացի վերնագրերից, որոնցով երևում է, թե որ լեզուներից են թարգմանված տվյալ քաղվածքները:

Բնագրի և ծանոթագրությունների այն մասերում, որտեղ Մարքսը վկայակոչումներ է անում օտար լեզուներով, տալով նաև դրանց թարգմանությունները, հայերեն «Կապիտալում» նույնպես դրված են երկու լեզուներով՝ բնագրով և հայերեն թարգմանությամբ:

⁴¹ Դուսմանում:

⁴² «Մարքս «Կապիտալ», հատ. I, 1933, էջ XXXV, «Չորրորդ հրատարակության առթիվ», Լեզվաբանաբանական

«Կապիտալում» պատահում են նաև չափածո ստեղծագործություններ, որոնք Մարքսը ներկայացնում է միայն բնագրերով, բացի Անտիպատրոս Թևսալոնացու հատվածը, որ դրված է Շտոյրերգի գերմաներեն թարգմանությամբ:

Չափածո հատվածների մասին խոսելիս պետք է նկատենք, որ «Կապիտալի», օրինակ՝ ֆրանսերեն թարգմանության մեջ, որի խմբագրմանն, ինչպես ասել ենք, համագործակցել է անմիջականորեն Մարքսը, միայն ֆրանսացի հեղինակների, Մոֆոկլևսի ու Շտոյրերգի վերոհիշյալ հատվածն են տրված ոտանավորի ձևով: Մնացածները, ներառյալ Շերսպիրը, Դանթեն, Գյոթեն, Հորացիոն զարմանալիորեն ներկայացված են միայն բնագրերով կամ արձակ փոխադրությամբ:

Անգլերեն թարգմանության մեջ, որին հետևում էր Էնգելսն ու շխատակցում էր Էլենոր Մարքսն, անգլերենից բացի բոլոր չափածոները թողնված են առանց թարգմանության:

Ռուսերեն թարգմանությունը, որն աշխարհի առաջին թարգմանությունն էր, հայերեն հրատարակությանն ընդհուպ նախորդող 1932թ. հրատարակության մեջ անգամ, բացի թարգմանված հեղինակներ Շերսպիրից ու Մոֆոկլևսից, մնացած չափածոները տրված են արձակ փոխադրություններով:

Հայերեն «Կապիտալն» այս հարցում իրոք եզակի է:

Բոլոր չափածո հատվածները ներկայացված են երկու լեզուներով՝ բնագրով և հայերեն թարգմանությամբ: Այն ստեղծագործությունները, որոնց թարգմանությունները եղել են գրական հրապարակում, այստեղ դրված են այդ թարգմանություններով: Օրինակ Շերսպիրի «Համլետն» ու «Վենետիկի վաճառականը» ներկայացված են հոգի. Մասեկյանի հայտնի թարգմանությամբ, իսկ Թիմոն Աթենացու մենախոսությունը հայերեն է թարգմանել Թ.Ավդալբեկյանը:

*“Ո՛վ ոսկի, դեղին, շողշողուն մետաղ,
Թանգագին ոսկի: Բո՛ մի բուռը միշտ,
Ամենուր սեր դարձնում է ձերմակ,
Մխար՛ ուղիղ, ստորը՛ ազնիվ,
Մերունուն՛ ջահել, վախկոտին՛ հերոս:
.... Ինչու՞” է այդպես, աստվածներ հզոր:
Ինչու՞” արդյոք նա պիտի վտարի
Ձեր ծածաներին ու ձեր քրմերին
Մրբարաններից, անվեհեր մարդկանց
Բարձրը խլի գլխատակերից.*

*Խարդախն այս դեղին, սուլիկ, նենգավոր
Միացնի, զատի կրոններն ամեն,
Մեծարի, օրհնի նգովայլներին,
Բորոտությունը դարձնի պաշտակի,
Գողին տա տիտղոս, նեցուկ, խրախույս
Եվ տեղավորի ծերակույտներում:
Մա, սա է դարձյալ, որ հնաթառամ
Գոսացած այրու ն դարձնում է դայար:
.... Եկ, թաթղ պարզիր, նվաճիր հողն էլ,
Մարդկության պոռնիկ դու սովորական՞”:*

Թ.Ավդալբեկյանն է թարգմանել Շերսպիրի «Ամառային գիշերվա երգը», «Ոչնչից մեծ աղմուկ» կատակերգություններից քաղված հատվածներն ու «Բրոնիկները»:

Ահա Մոֆոկլևսի «Անտիգոնեն» Ավդալբեկյանի թարգմանությամբ.

*“Դրամը մեծ շարիր է մարդկանց համար,-
Բաղաբներ են կորչում նրա պատճառով,
Պանդուխտներ լքում են տունը հայրենի,
Եվ սրտներն անարատ - ապականելով
Նա դրդում է մարդկանց դաժան քայլերի,
Շշնջում անազնիվ մտքեր ու արարք”:*

Ահա Դյուպոնը ֆրանսերենից.

*“Բուրջեր հագած, խեղճ ապրում ենք հյուղերում,
Մեր սև կյանքում տառապում ենք օրնիրում,
Ձևոնահարկի, ավերակի խորշերում
Մեր ընկերն են խավարասեր գողն ու բուն”:*

Ահա Մոլիերը.

*“Ի՛նչ մարդ է, տես: Տատանվում է նա ձերմակի, սևի միջում,
Ինչ, որ երևկ դրվատում էր, այսօր ժխտում է, թունդ վիճում,
Այլոց համար բե՛ռ է տաղտուկ, ինքն էլ տակին ճկոտում է ցած,
Փաղափարներն ամեն վայրկյան փոխում ինչպես շոր խու նացած”:*

*“Մեզ քաջ հայտնի է սասձո ստակի
Բաղադրությունն ու կշիռը նույնպես.
Բայց քսակումը նրանից ունենա”:*

Գյոթեի «Ֆաուստի» մեկ հատված ներկայացված է Բար-
խուդարյանի թարգմանությամբ, մյուսը՝ սևփական.

*“Ուր պակասում են գաղափարները,
Բուն ժամանակին մեջտեղ է կլնում քողարկու բառը”:*

Թ.Ավդալբեկյանն է թարգմանել նաև Հորացիոյի, Դիդրո-
յի, Բատլերի, Վիրգիլիոսի և այլոց շափածո մեջբերումները:

Օտարալեզու հատվածների թարգմանությունների կա-
պակցությամբ անհրաժեշտ ենք համարում հայտնել, որ այս
գործում մեծ օգնություն է մատուցել Թ.Ավդալբեկյանի որդին՝
16-17-ամյա Մարտիկը: Նա մի նմանատիպ բան է արել հայերեն
«Կապիտալի» համար, ինչ Մարքսի դուստր էլլեոնորն անգլերեն
թարգմանության կամ Գուստավ Էկլտեյնր՝ Կուուցկու խմբա-
գրած «Կապիտալի» համար:

Օտարալեզու քաղվածքների բնագրերի մեծ մասը գրվել
են Մարտիկի ձևերով:

XII

Գրվածքիս սկզբում ասել ենք.

“Շատ են խոսել, բայց քիչ են ասել”:

Քիչ են ասել, համապատասխանաբար էլ քիչ են գնահա-
տել: Այժմ, երբ ասված է նոր խոսք և վերհանված են նոր փա-
տեր, պահանջվում է տալ նոր գնահատական՝ համեմատական
չափանիշ բնդունելով դարձյալ ռուսերեն «Կապիտալը»: Վերջի-
նրս թեև համարում ենք թույլ չափանիշ հայերեն «Կապիտալի»
որական գնահատականը տալու համար, բայց և այնպես այն
հուսալի է պատմական արժեքն ակնառու պատկերելու համար և
ահա թե ինչու:

Վերոհիշյալ «Մեծալուրջ գործին աշալուրջ վերաբեր-
մունք» (1935) հողվածում Ավդալբեկյանը գրում է.

“Մի կես դար առաջ մեզանում հայերեն «Կապիտալ» չլ-

ին էլ կրագում: Բառորդ դար առաջ բաղձանքը կար, բայց կենսա-
գործման պայմաններ չկային: Երկու տարի առաջ էր միայն, որ
անուրջն իրականացավ և հայ ժողովուրդն էլ մտավ կուլտուրա-
կան այն ազգերի շարքը, որոնք կարող են «Կապիտալը» կարդալ
մայրենի լեզվով”⁴³:

Այս խոսքը ռուսերենի հետ գուգահեռ անցկացնելիս
ստացվում է, որ դրանից կես դար առաջ՝ 1885-ին մեզանում չէին
էլ կրագում այն, ինչ ռուսական միջավայրում «Կապիտալի»
առաջին հատորի Լոպատինի անդրանիկ թարգմանությունը
(1872-ին), արդեն 13 տարվա իրողություն էր:

Բառորդ դար առաջ՝ 1910-ին, մեզանում լոկ “բաղձանք
կար”, իսկ կենսագործման փորձերը միայն քմիծաղ կարող են
առաջացնել այն մտքից, որ մտադրություն է կել «Կապիտալը»
հրատարակել օրաթերթի համարներում⁴⁴ կամ այն փաստից, որ
չնայած նշանավոր հրապարակախոս Ա.Արասխանյանի թերթե-
րում տված հայտարարություններին՝ «Կապիտալի» մոտալուտ
հրատարակության մասին⁴⁵, գործն իրականում կրկու պրակից
առաջ չի գնացել, երբ ռուսերեն վերջին՝ Ստեպանովի գլխավո-
րած խմբի թարգմանությունն արդեն 1909-ից հրապարակում
ատկա էր:

Եվ միայն դրանից կրկու տարի առաջ է հայերի քառորդ
դարվա բաղձանքն իրականացել 1933-ին՝ լույս աշխարհ է կել
«Կապիտալի» հայերեն անդրանիկ թարգմանության անդրանիկ
հրատարակությունը, որից կրկու տարի հետո ռուսերեն վերջին՝
4-րդ թարգմանությունն իր քառորդ դարն էր բոլորելու:

Մեր անդրանիկը ժամանակաբանորեն կես դարուց ավել
հետ է մնում ռուսերեն անդրանիկից և բնդամենը կրկու տարով է
կանխում նրա 4-րդ թարգմանության 25-ամյակը:

Դարձյալ հիշենք Ավդալբեկյանի խոսքն ու կրկնենք:

*“Թվականների այս մեծ տարբերությունը պատահական
չի, այլ ժողովուրդների զարգացման աստիճանների տարբերու-
թյան հետևանք, գրականության ու նրանց լեզվի մակարդակի
ցուցանիշ”⁴⁶:*

Թարգմանության ավարտից հետո, գրվածքիս սկզբում

⁴³ Թաղ. Ավդալբեկյան Մեծալուրջ գործին աշալուրջ վերաբերմունք, էջ 2

⁴⁴ Տե՛ս «Տորթոն», 1912, №289:

⁴⁵ Տե՛ս «Մշակ», 1906, №№ 191, 194, 196, 199, 202, 204, 206 ևն, «Ղորխոսք», 1906, №№ 8, 9, 10, 11, 12, «Տոսանք», 1906, №№ 1, 3, 5, 10:

⁴⁶ Թաղ. Ավդալբեկյան Մեծալուրջ գործին աշալուրջ վերաբերմունք, էջ 2

ասված «անդրանիկ» ու «միանձնյա» ազգային ցուցանիշները մտնում են իրենց պատմական ֆունկցիայի մեջ:

Եթե թարգմանության սկսելու պահին «անդրանիկը» դրսևորվում էր ռևուլյուցիոն քաղաքացիական պայքարի տվյալ բնագավառում պատմական հետամնացությամբ, ապա թարգմանության ավարտից հետո աչքի է զարնում անդրանիկից հաշվարկը սկսած պատմական առաջնությունը ժողովրդի «գարգացման աստիճանի, զրականության ու լեզվի մակարդակի» ցուցանիշներով, որով կոմպլեքսացվել է «մեծ ուշացումը» քաղաքակիրթ աշխարհից:

Նայ իրականության մեջ, ի տարբերություն ռուսականի, տեղի է ունեցել ոչ թե աճ, այլ *թռիչք*: Իսկ պատմությունն, ինչպես հայտնի է, բնթանում է ոչ միայն աստիճանաբար, այլև թռիչքներով և ոչ միայն ներազգային ձևորեն մտնելով, այլև միջազգային նվաճումների փորձի հիման վրա, ոչ միայն մասնների, այլև անհատների շնորհիվ:

Ահա այս կետում ջրի երես է դուրս գալիս «միանձնյա թարգմանիչ» մեկ դեմքում *первопроходец-покоритель* միավորման ևս մեկ դրսևորում ավելի լայն իմաստով և նշանակությամբ՝ հանպատրաստ միջավայրից մինչև միջազգային ստանդարտ:

Ինչպես տեսանք որոշ փաստերից՝ «Կապիտալի» հայերեն թարգմանությունն իր մեջ է առել ռուսերեն թարգմանությունների հարուստ փորձն ու մի շարք առումներով կանխել հետագա հրատարակությունների առաջխաղացումները: Սա նշանակում է, որ I հատորի սահմանում, միանձնյա Թ.Ավդալբեգյանը մեկուկես տարում (1931 հոկտեմբեր-1933 մարտի 9-ը) կատարել է աշխատանքի այն ծավալն ու որակն, ինչ որ 9-10 թարգմանիչները մեկ դար ու մեկուկես տասնամյակի (1872-1988) ընթացքում և ամենահամեստ որակամբ հայերեն «Կապիտալը» միանգամայն դիմանում է մրցակցությանը միքանի թարգմանությունների, հրատարակությունների, խմբագրումների կատարելագործում անցած ռուսերեն «Կապիտալի» հետ:

Իսկ եթե մտաբերենք, որ Թ.Ավդալբեգյանը ոչ միայն I, այլ 3 հատոր, 4 գրքի միանձնյա թարգմանիչն է, եթե հաշվի առնվի նաև, որ «Կապիտալի» ռուսերեն թարգմանությունն աշխարհի լավագույն թարգմանություններից մեկն է, որից կատարվել են շատ լեզուներով թարգմանություններ, ապա պարզ է, որ համաշխարհային մասշտաբով

«Կապիտալի»

հայերեն թարգմանությանն ու հայ թարգմանիչին հատկացվում են առանձնահատուկ տեղ:

Նայերեն «Կապիտալը» նմուշահատ է աշխարհում և ազգային հպարտության *կապիտալ* համաշխարհում: Իսկ դրա համար հայ իրականության մեջ պետք է գլորվեր պատմական կես դարը, բաղձանիքի քառորդ դարը, գալու էր ժամը, երբ հայոց պատմության երկնակամարում հանդես էր գալու մի բացառիկ դեմք՝

ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԸ:

XIII

P.S. Նայերից շատերը գիտեն, որ ունեն մայրենի լեզվի կորոզ «Կապիտալ», բայց ոչ-ոք չգիտի, որ ազգային հպարտության նմուշը վիժեցվել է հենց հայերի ձևորով, իսկ թարգմանիչ փառքը խամրեցվել անհավատալի չափերով:

III հատորի 2 գրքերը, որ հրատարակվել են 1947, 1949-թվականներին, թարգմանիչն արդեն չկար և քաղաքական նկրտումներով անունն անգամ չէ հիշատակվում հրատարակությունների մեջ: III, հատորի վերջում միայն կարդում ենք.

«Գերմաներենից թարգմանությունը *խմբագրեց* պրոֆ. Ն.Ազատյանը»⁴⁷:

Արքան նախորդ հատորներում բացահայտ է հայերեն «Կապիտալի» տարբերությունը ռուսերենից, այնքան այս հատորներում ակնհայտ է վերջինիս ազդեցությունը սրանց վրա: Մինչև անգամ «*աշխատում*» տերմինը, որի մասին հատուկ շեշտված է I հատորի առաջաբանում և անշեղորեն կիրառված է երկու հատորներում, այստեղ նորից փոխարինվել է հնարույր ու մետաֆիզիկ «*բանվորական ուժ*» սխալ տերմինով:

Թարգմանիչի Լրախոսիքը նսեմացված է այն աստիճան, որ Նայկական հանրագիտարանի «Թ.Ավդալբեգյան» հոդվածում կարդում ենք.

«...թարգմանել է «Կապիտալի» *առաջին* (???) հատորը»⁴⁸:

«Կապիտալի» թարգմանությանը նախորդել էր ...

⁴⁷ Տե՛ս *Կ.Մարքս*, Կապիտալ, հ. III, Երևան, 1947 թ., էջ 452:

⁴⁸ Տե՛ս Նայկական հանրագիտարան, հ. I, Երևան, 1974 թ., էջ 609:

Վերարտադրության թեորիան

Վերարտադրության թեորիան

I

Միանգամայն տեղին է Կոմիտասի մասին ասված խոսքն՝
ակնարկելով հայտարարել:

«Մեծ եղավ իբրև թարգմանիչ, որովհետև *մեծագույն* էր
իբրև տնտեսագետ»:

«Կապիտալի» թարգմանությանն բնդհուպ նախորդել էր
վերարտադրության թեորիայի ստեղծումը և այդ պահին թարգ-
մանիչը հասել էր իր գիտական հասունության գերնիթին:

Թ.Ավդալբեգյանի մասին շատ դժվար է ասել, թե այս երկու
բնագավառներից որում էր ավելի մեծ, բայց հաստատապես կա-
րելի է արձանագրել, որ դա մեկը մյուսով պայմանավորված ամ-
բողջություն էր: «Կապիտալի» ոչ մի թարգմանիչ օրգանական
այսպիսի միասնություն չի կազմել ինչպես հայ թարգմանիչը,
չնայած ռուս թարգմանիչներից Լոպատինը, Նիկոլայ-օնը, Բոգ-
դանովը, Լյուբիմովը, Մտրուվեն և հատկապես Ստեպանովը
պատկառելի գիտնականներ էին:

«Կապիտալի» ամբողջական թարգմանությունն, անշուշտ,
Թ.Ավդալբեգյանի թարգմանական սխրանքն էր և ի հատորն,
ինչպես տեսանք, նրա թարգմանչական սկզբունքների ու հիմ-
նությունների քնտրանին, բայց ի հատորի նյութը նրա տնտե-
սագիտական գլուխ-գործոցն էր ըստ ամենայնի: Եթե հայերեն
«Կապիտալն» իր համաշխարհային ցուցանշով հանդերձ, այնու-
ամենայնիվ, ունի զուտ ազգային նշանակություն, ապա տնտե-
սագիտության մեջ Թ.Ավդալբեգյանի ներդրումը վեր է լույս ազ-
գային նշանակությունից և գնահատելի է նույնպես համաշխար-
հային չափանիշներով: Բավական է ասել, որ նա է վերարտա-
դրության երկու գործոններից երկրորդի՝ շրջանառության

¹ «Մեծ եղավ իբրև խմբավար, թերևս անոր համար այ էր այդ, որ *մեծագույն* եղավ իբրև երգիչ»: Տե՛ս «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960թ., էջ 97 Շ.Մերերեցյան, Կոմիտաս, անձր և գործը

հեղինակը Մարքսի կազմած վերարտադրության հանրահայտ սխեմաներում և րնդլայնված վերարտադրության (այսուհետև ր/վ-թյուն: -Ա.Մ.) նոր սխեմաներ կազմողն ու էլ ավելին:

Ինչպես հիշում ենք «Կապիտալի» թարգմանության «Վիթ-խարի պահանջներից» առաջինն ու գլխավորը՝ «թևորիական ծավալուն իրազեկությունն» էր և հայերեն թարգմանությանը նախորդել էր թարգմանչի մի կյանք կուտակած գիտական հսկա ժառանգությունը հասարակական գիտությունների ամենատարբեր գիտակարգերում: Բայց Թ.Ավդալբեգյանն առաջին հերթին տնտեսագետ էր և հայագիտական պատմա-տնտեսագիտական հետազոտություններից բացի, թևորիական տնտեսագիտությունից ստեղծել էր «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան»² նշանավոր աշխատությունն, իսկ քաղաքատնտեսությունից՝ ռուսերեն հրատարակած ակնարկների մի սերիա «Վերարտադրության թևորիան»³ րնդհանուր խորագրով, որն առ այսօր լուսաբանվել է սովետի «պայծառությամբ»:

Ինչպես հայտնի է «Կապիտալի» II հատորը լույս աշխարհ կալ Մարքսի մահվանից հետո՝ էնգելսի շնորհիվ: Մարքսն այս հատորը չհասցրեց ավարտի և բազմաթիվ կարծիքներ են հայտնվել, որ այստեղ ամեն ինչ կրում է անավարտության կնիք: Բայց «Կապիտալի շրջանառության պրոցեսը» վերնագիրը կրող սույն հատորն ու հատկապես սրա III բաժինը՝ «Տասարակական ամբողջական կապիտալի շրջանառությունն ու վերարտադրությունը» ամենափայլուններից մեկն է մարքսյան քաղաքատնտեսության մեջ: Նույնիսկ ներկայիս շատ գիտնականներ, որոնք բացասաբար են վերաբերվում մարքսիզմին րնդհանրապես, առանձնահատուկ տեղ են հատկացնում Մարքսի վերարտադրության թևորիային ու սխեմաներին: Դրանք են Ռոբինսոնն ու Բլաուգը, Մայբուրգն ու Կալեցկին, Տարոդն ու Դոմարը և ուրիշներ: Վերջերս լույս րնծայված «100 великих книг» հրատարակության մեջ «Կապիտալին» հատկացված դրվագում կարդում ենք.

«Бриллиантом сверкает Марксова схема воспроизводства и кругооборота капитала. Изложенная в 3-м (պետք է լինի 2-մ: - Ա.Մ.) томе числовой пример, где всё общественное производство разделено на два подразделения:

I-производство средств производства,

II-,, ,, ,, ,, ,, потребления,-

являет собой величайшее открытие, значение которого постепенно раскрывалось в XX веке и будет продолжено в третьем тысячелетии. Оно связывает в единый поток гениальной экономической мысли „Экономическую таблицу,, Франсуа Кене, дифференциальное уравнение Огюста Курно, схему К.Маркса, уравнения Вальраса, схемы В.И.Ульянова-Ленина, величайшее открытие В.К.Дмитриева, о матрице полных затрат, межотраслевой баланс П.И.Попова, матрицы В.В.Леонтьева (лауреат Нобелевской премии по экономике), оптимальные цены Л.В.Конторовича (лауреат Нобелевской премии по экономике) и системе национальных счетов Р.Стоуна (лауреат Нобелевской премии). Вот что такое настоящее открытие в науке! Четвертая, постмонопольная, стоимость для XXI века вытекает из межотраслевого баланса, следовательно, из схемы воспроизводства К.Маркса»⁴:

Թ.Ավդալբեգյանը Յուլիան Բորխարդտի «Կարլ Մարքսի «Կապիտալ» գրքի մասին գրախոսականում հետևյալ խոսքերով է րնութագրում այս բաժինը:

««Կապիտալի» հրեր հատորների և ոչ մի բաժին այնպես չէ րնդարձակում րնթերցողի մտահորիզոնն, ինչպես այս բաժինը: Այստեղ է, որ «Կապիտալի» ուշիմ ուսումնասիրողի հանդեպ առաջին անգամ բացվում է ժողովրդական ամբողջ տնտեսության ծովն իր լայնատարած ավերով, հարաշարժ հոսանքներով, լոին խոռոչներով ու աղմկալի հորձանքներով: Այստեղ ավելի պարզ ու սպառնազին, քան այլուր «Կապիտալում», դուր լսում էք ճոինչն ու ճարճատյունն այն տնտեսության տախտակների ու գերանների, պատերի ու հիմքերի, որ հաստատված է բարիքների արտադրության ու բաշխման կապիտալիստական եղանակի վրա:

² Թար. Ավդալբեգյան՝ Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան, II տպագրություն, Էրևան, 1925, Բ տպագրություն, Էրևան, 1926:

³ Թար. Ավդալբեգյան՝ «Золото в схемах простого воспроизводства», Эривань, 1929; «Издержки обращения в схемах простого воспроизводства», Эривань, 1930; «К вопросу о золоте в схемах простого воспроизводства», Эривань, 1930; «Основные гипотетические схемы расширенного воспроизводства», Эривань, 1931; «Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства», Эривань, 1931.

⁴ «Сто великих книг», Москва, 1997, стр.156 (К. Маркс, «Капитал»).

Այս կարևոր բաժինն է ահա, որ Բորխարդտի գրքում հանդես է գալիս շտապ բաշած գծերով ու թույլ գույներով՝ իբրև մի նսեմ ուրվագիծ Լգիպտական վիթխարի բուրգի⁵:

Տևնց այս կարևոր բաժինն է ահա, որ դառնալու էր Ավդայրեզյանի ստեղծագործության գլուխ-գործոցը և հանդես գար հոռի գծերով ու վառ գույներով իբրև վիթխարի բուրգի մի վսեմ նախագիծ:

Խնդիրը հետևյալն է:

Կարլ Մարքսը հասարակական ողջ արտադրությունն, ինչպես սավալ է, բաժանում է Լրկու խմբի՝

ա) արտադրամիջոցների արտադրության բաժին, որ նշանակում է հոռմեական I թվանշանով ու

բ) սպառամիջոցների արտադրության բաժին, որ նշանակում է II-ով:

Բաժինների միջև I:II=2:1 հարաբերությամբ: Յուրաքանչյուր բաժինն իր հերթին բաղկացած է *հաստատուն* կապիտալից, որ լատիներեն „constantia“, բառի սկզբնատառից նշանակվում է „c.“, տառով, *փոփոխուն* կապիտալից, որ „variable“, բառից նշանակվում է „v.“-ով, վերջապես *հավկյայլ արժևրից*, որ „meherwert“-ից, նշանակվում է „m.“, տառով: Այսպիսով յուրաքանչյուր կապիտալ բաղկացած է c + v + m տարրերի գումարից: Տևտեարար հասարակական ամբողջական կապիտալը կազմում է $K = Ic + Iv + Im + IIc + IIv + IIm$ կապիտալամասերի հանրագումարը, ըստ որի կապիտալամասերի միջև $c : v : m = 4 : 1 : 1$ հարաբերությամբ կազմվում է հետևյալ սխեման:

$$\begin{array}{l} I \ 4000c + 1000v + 1000m = 6000k' \\ II \ 2000c + 500v + 500m = 3000k' \\ \hline 6000C + 1500V + 1500M = 9000K' \end{array}$$

Մա Մարքսի պարզ վերարտադրության (այսուհետև պ/վ-թյուն: -Ա.Մ.) առաջին սխեման է:

Այնուհետև սպառամիջոցների արտադրության (II) բաժինը Մարքսը 4:1 հարաբերությամբ հորիզոնականորեն ստորաբաժանում է անհրաժեշտ սպառամիջոցների (IIa) և պերճանքի առարկաների (IIb) ևնթարբաժինների, որի հետևանքով հավելյալ արժևրի (m) կապիտալամասն իր հերթին ուղղահայացորեն ստո-

բարբաժանվում է (ma) և (mb) ևնթակապիտալամասերի: Ստացվում է հետևյալ պատկերը:

$$\begin{array}{l} I \ 4000c + 1000v + 1600ma + 400mb = 6000k' \\ IIa \ 1600c + 400v + 240ma + 160mb = 2400k' \\ IIb \ 400c + 100v + 60ma + 40mb = 600k' \\ \hline 6000C + 1500V + 900Ma + 600Mb = 9000K' \end{array}$$

Մա Մարքսի պ/վ-թյան Լրկրորդ սխեման է:

Երկու սխեմաների կոնստրուկցիոն պայմանների համաձայն բաժինների միջև տեղի են ունենում հետևյալ փոխանակային հավասարումները.

1) $I \ 6000K' = I \ 4000c + II \ 2000c$, որը նշանակում է, որ I բաժնի արդյունքն ապահովում է I և II բաժիններին անհրաժեշտ բանակությամբ արտադրամիջոցներով:

2) $II \ 3000K' = I(1000v+1000m) + II(500v+500m)$ - նշանակում է, II բաժինն ապահովում է Լրկու բաժիններին անհրաժեշտ սպառամիջոցներով: Վերջապես՝

3) $I(1000v+1000m) = II \ 2000c$ հավասարումը ցույց է տալիս Լրկու բաժինների միջև արտադրական ու անհատական սպառումների հաշվեկշռային փոխանակությունները: Այս վերջին հավասարությունը պ/վ-թյան հիմնական օրենքն է:

«Կապիտալի» տեքստում Մարքսը տալով ապրանքի ու փողի շարժման մանրամասն պատկերը հիվանդության պատճառով հնարավորություն չի ունեցել նշված սխեմաների մեջ ներմուծել փողի՝ դրամանյութ ոսկու արտադրությունն ու շրջանառությունը:

«Մինչև հիմա մեր ուշադրության շրջանակից բոլորովին դուրս էր թողնվել մի մոմենտ,- գրում է նա,- այն է՝ ոսկու և արծաթի տարեկան վերարտադրությունը... Որպես դրամանյութեղեն վերցնում ենք միմիայն ոսկին»⁶:

«Ոսկու արտադրությունն, ինչպես և մետաղարտադրությունն ընդհանրապես, պատկանում է I դասակարգին, այն կատեգորիային, որն ընդգրկում է արտադրամիջոցների արտադրությունը: Ընդունենք, որ տարեկան ոսկևարդյունքը = 30 (հարմարության համար, փաստորեն շատ ավելի բարձր թիվ ենք վերցրել մեր սխեմայի թվերի համեմատությամբ) ասենք, թե այս

⁵ «Նորր» հանդես (Երևան), 1925, №5, էջ 222:

⁶ Ա. Մարքս, Կապիտալ, հատ. II, Երևան, 1936, էջ 437:

արժևր տրոհվելու է 20c+5v+5m-ի. 20c-ն պետք է փոխանակվի Ic-ի մյուս տարրերի հետ, իսկ այս մենք հետո ենք քննարկելու (րնդգծումը մերն է:-Ա.Մ.), իսկ 5v+5m (I)-ը պետք է փոխանակվեն IIc-ի տարրերի, այսինքն սպառամիջոցների հետ”⁷:

Այս քաղվածքում րնդգծված “մենք հետո ենք քննարկելու” խոսքը Մարքսը կրկնում է մեկուկես էջ անց-“հետագայում քննարկելի Ic-ն”:

Ընդամենն այսքանը, որից հնարավոր է լոկ թոուցիկ ցուցմունքներ քաղել.

1) Ասկու արտադրությունը պատկանում է I դասակարգին.

2) 20c-ն պետք է փոխանակվի Ic-ի մյուս տարրերի հետ,

3) 5v + 5m(I)-ը պետք է փոխանակվի IIc-ի հետ և ուրիշ ոչինչ:

Խնդրի կարևորությունն այն աստիճան է, որ «Կապիտալի», ինչպես րնդունված է համարել, կրկրորդ հեղինակ էնգելսը, որն իրեն իրավունք էր վերապահել Մարքսի ցրոն թղթերից ստեղծելու գրքի II, III₁, III₂ հսկայածավալ հատորների պատասխանատվությունն, այս կետում խուսափել, գերադասել է տողատակում պարզապես ծանոթագրել:

“Նոր արտադրված ոսկու՝ I ստորաբաժանման հաստատուն կապիտալի սահմաններում, փոխանակության վերաբերյալ հետազոտությունը ձևագրերում չկա”⁸:

Այսպիսով Մարքսը չհասցրեց, էնգելսը չհայտնաբերեց:

Խոստացված “հետոն” տեղի էր մոտ կես դար, իսկ “հետագայում քննարկելին” դառնալու էր անլուծելի “գորդյան հանգույց”, որն աստիճանաբար ուժճանալով վերաճելու էր համաշխարհային պրոբլեմի իր մեջ ներքաշելով խոշորագույն տեսարանների: Կարելի է գրել այդ կեսդարյա բանավեճերի հետաքրքրաշարժ պատմությունը:

Առաջին նշանակալից ու հեղինակավոր շեփոքներ հնչեցին Ռ.Լյուբսեմբուրգի «Կապիտալի կուտակում» գրքի էջերում:

“Մխնաման կարձևս՝ թերի է,⁹ -աղմկում է նա, ... փողի արտադրությունը չի կարելի հատկացնել սխևմայի ոչ մի բաժնին առանց սխևման քանդելու”¹⁰:

«Կապիտալում» նախատեսված ոսկու թվերը պարզապես արտագրելով սխևմայի ներքնահարկում Ռ.Լյուբսեմբուրգը ստանում է

I 4000c + 1000v + 1000m

II 2000c + 500v + 500m

III 20c + 5v + 5m - և աշար աղյուսակը,

որով ջանում է ապացուցել Մարքսի սխևմայի սվյալների անբավարարությունը:

Այս կերպ թիչ է ասել “քանդում”՝ քարուքանդ է լինում սխևման: Տեղտ է նկատել, որ իսպառ վերանում են բոլոր կոնստրուկցիոն հավասարումներն, իսկ փոխանակության նպատակով արտադրվող փողը հայտնվում է րնդհանրապես փոխանակություններից դուրս:

«Կապիտալի կուտակում» գրքի քննադատ և Կ.Կաուցկու նշանավոր գործընկեր Գ.Էկշտեյնը տեսնելով Ռ.Լյուբսեմբուրգի ցուցադրած օրինակը՝ գյուտարարի խանդավառությամբ բացականչում է.

“Եռաշար աղյուսակում դժվարությունը ոչ թէ *հսկայական*, այլ *անհաղթահարելի է*”¹¹ (րնդգծումը մերն է:-Ա.Մ.):

Տեսագայում ջատերն են Գ.Էկշտեյնի նման ածիթն օգտագործել իրավունքով պախարակելու Ռ.Լյուբսեմբուրգի աննրելի շեղումը Մարքսից, բայց փոխարենը ոչինչ, առավել ևս ժխտելու համար րնդունելի ոչինչ չեն առաջարկել սխևմաների լրացման այլևայլ շեղումներից բացի: Այնինչ Ռ.Լյուբսեմբուրգի կարգի տնտեսագետին իրավացիորեն ժխտելու միակ միջոցը՝ Մարքսի անկատար մտահղացման անշեղ իրագործումն էր:

Եվ ահա կվրոպայի ու Խորհրդային գիտական կենտրոններում բանավեճերի թեժ պահին՝ 1929 թվականին, փորրիկ Երևանում լույս է տեսնում այս խավերին անհայտ հեղինակ Թ.Ավդարբեգյանի անդրանիկ գրքույկը՝ «Золото в схемах простого воспроизводства» վերնագրով:

Արտաքնապես անշուր, բացարձակապես ոչնչով վստահություն չնեքշնչող այս գրքույկի հայտնվելով նշանավորվում է հարցի պատմական շրջադարձը: Առաջին անգամ այն իր ձևորն առնող մարդու մտքով չի կարող անցնել, որ այստեղ է գտնելու «Կապիտալում» բաց մնացած, «Կապիտալի կուտակման» մեջ

⁷ Խույն տեղում, էջ 438:

⁸ Խույն տեղում, էջ 440:

⁹ P. Люксембург, Накопление капитала, перевод Дволайцкого, Москва-Петроград, 1923, стр. 84:

¹⁰ Խույն տեղում, էջ 88:

¹¹ Գ. Էկշտեյնի հողվածը գետեղված է Ռ.Լյուբսեմբուրգի գրքի վերոիջյալ հրատարակության մեջ Տե՛ս Խույն տեղում, էջ 533, «О книге Р. Люксембург»:

անլուծելի դարձած, բազմաթիվ բանավեճերի բովում շահագուցալուծված առեղծվածի սպառիչ լուծումը: Առաջ անցնելով նկատենք ուշագրավ այն փաստը, որ հեղինակը հետագայում «Золото...»-ն իրեն օրենք, մատենացանկերում ներկայացրել է բովանդակությամբ հանդերձ: Ինչու: Բանն այն է, որ այստեղ լուծված է ոչ մեկ պրոբլեմ, այլ պրոբլեմների մի կծիկ: Գրքույկի գլուխներից յուրաքանչյուրը մի աստիճանական լուծում է խրնդրի վերջնական լուծման ամբողջական պրոցեսում: Յուրաքանչյուրն առանձին հետազոտություն կարող էր լինել, որ կարևոր է պատվերը նպատակներ թեկուզ մեկ հարց, մեկ թեկուզ լուսարանող ցանկացած տեսարանի համար: Այստեղ բոլորը միավորված են 13×18 ֆորմատի 61 էջ ծավալների մեջ և յուրաքանչյուրի մեծանշանակությունն է, ըստ երևույթին, դրդել հեղինակին գրքույկը հրամցնել խոշորացված մանրամասներով:

Տեսուհի նրա օրինակին:

Содержание. I Теория воспроизводства и значение введения в её схемы золота. II Первая схема простого воспроизводства у Маркса. III Вторая схема простого воспроизводства у Маркса. IV Истинное у Р.Люксембург. V Теоретическая основа ошибок Р.Люксембург. VI Денежный материал как не-необходимый и необходимый элемент в общественном производстве. VII Два подотдела производства средств производства. I=A+Ib. VIII Трёхрядная таблица общественного производства. IX Две части постоянного капитала. C=C1+C2. X Норма денежного материала в общественном производстве. XI Норма денежного материала в отделах и подотделах общественного производства. XII Третья схема простого воспроизводства. XIII Четвёртая схема простого воспроизводства. XIV Дифференциация отделов общественного производства и дифференциация частей годового продукта. XV Дифференциация отделов общественного производства и дифференциация частей годового производства золота. Процент иллокационности и транслокационности частей Ib. XVI Резюме. Приложение. Четыре схемы простого воспроизводства¹².

Ինչպես տեսնում ենք լուծված գրքերով կարելի է հետևել պրոբլեմի ծագման պատմությանը, տեսությանը, լուծման ընթացքին և վերջում գտնել գիտությանն անհայտ ինչ, որ III, IV սխեմաներ: Բայց գլխավորն այստեղ ոչ թե Մարքս-Լյուքսեմ-

բուրգ բանավեճի դատավարությունն է, որ կրում է մասնակի բնույթ, այլ խնդրի մշակվածությունը, որ կատարել է հեղինակը:

Միջանկյալ նշենք, որ Թ.Ավդալբեգյանի հակառոգիստական դիրքորոշումը դրսևորվել էր ավելի վաղ, դեռևս 1923 թվականին, երբ նա «Նորք» հանդեսի համար գրախոսել էր «Կապիտալի կուտակումը»: Անհայտ պատճառներով այն չի տպագրվել: Չնայած գրքին տված բարձր գնահատականին, հատկապես կուտակման պատմությանն ու դրա շուրջ ծավալված բանավեճերի բնության անանցանելի արժեքին, տեսական մասի այն հարցին, թե «ո՞վքե՞ր են կուտակված հավելյալ արժեքի սպառողները», Ռ.Լյուքսեմբուրգը պատասխանել է. «ոչ-կապիտալիստական երկիրների սպառողները»:

Գրքի այս հատվածի լուսանցքում Ավդալբեգյանը դրել է չորս հարցական -????

«Տի՛ն թեորիաների նոր վարկած,- գրել է նա,- որոնք կապիտալի կուտակումը բացատրում էին «երրորդ դեմքերի» օգնությամբ»¹³:

Այս կերպ լուծվելու փոխարեն լրացուցիչ պրոբլեմներ են ծնվում, որոնք ի սկզբանե կանխել էր Մարքսը վերլուծությունից վտարելով «երրորդ դեմքերին»՝ արտաքին առևտուրն ու կապիտալիստական միջավայրի միջանկյալ շերտերը: Երկու դեպքում էլ «երրորդն ավելորդ է» և լուծման միակ ելքն՝ ընդլայնվող պարույրների ինքնապարփակ ներկայախոստական սպառումն է, հանգեցնում է Ավդալբեգյանը:

Մարքսի պ/վ-թյան սխեմաների մեջ Ռ.Լյուքսեմբուրգն անկարող է լինում քայլ անգամ անել, բայց այդուհանդերձ ստեղծում է ր/վ-թյան տեսություն, այսինքն հիմնախախուտ շինություն:

Դատենք «Золото...»-ին:

Թ.Ավդալբեգյանը ձևաբանությամբ է լինում փողի ներմուծման դժվարին խնդրին պ/վ-թյան սխեմաների մեջ անցկացնելով շատ նրբին, բայց կուռ օպերացիաների ցիկը: Մարքսից փոխ առնելով I-ից II սխեմայի ստեղծման սկզբունքը նա միասնական

$$I = 4000c + 1000v + 1000m\text{-ից,}$$

I=A+Ib ֆորմուլայով մասնատելով ոսկու բանակությունը դուրս է բերում

¹³ «Золото...», стр. 25:

¹² Таб. Авдальбегин, Золото в схемах простого воспроизводства, Эривань, 1929, стр. 5:

Ia 3980c + 995v + 995m-արտադրամիջոցների արտադրության և
Ib 20c + 5v + 5m-ուսկու արտադրության Ib շերտը:

Ահավասիկ վերջինս նա չի դիտարկում որպես III-առան-
ձին բաժին, ինչպես Ռ.Լյուբսենբուրգն, այլ I-ի ենթաբաժին, ինչ-
պես նախատեսել էր Մարքսը: Այնուհետև $C = C1 + C2$ ֆորմու-
լայով տրոհելով և 30 ոսկին = 9000K' : 0,3% նորմայով բաշխելով

	C
	C1 C2
Ia	3960,1+19,9
Ib	19,9 + 0,1

II 1990 +10-ի ստանում է ոսկու արտադրու-
թյան C2 սյուներ: Այս գործողությունների արդյունքը ստացվում
է հետևյալ պատկերը:

	C1	C2	V	M	K'
Ia	3960,1+19,9	+ 995	+ 995	= 5970	} 6000
Ib	19,9 + 0,1	+ 5	+ 5	= 30	
II	1990	+ 10	+ 500	+ 500	= 3000
	5970	+ 30	+ 1500	+ 1500	= 9000

Ահա այն սխեման, որ պետք է լիներ, բայց որը չկա «Կա-
պիտալում» և եթե լիներ, երբևէ չէին ծնվի միայն այսուհետև
մերժելի թողիզմն ու ռեկզիտնիստական այլ ոտնձգությունները:
Մա նոր, լիակատար սխեմա է, պարզ վերարտադրության III
սխեման, որտեղ դեղին գույնով փայլին է տալիս դրամանյութ
ուսկին: Այստեղի կարմիր վանդակի մեջ գետեղված 4 տվյալները
(33,33%) ստացվել են Մարքսի I սխեմայից, մնացած՝ կապույտ
շրջանակի 8 (66,67%) մեծություններն առաջին անգամ դուրս է
բերել Ավդալբեգյանը:

Նույն սկզբունքով ոսկին ներմուծվում է Մարքսի II
սխեմայի մեջ և ստեղծվում է պարզ վերարտադրության IV սխե-
ման, որ նույնպես չկա «Կապիտալում»:

	C1	C2	V	Ma	Mβ	K'	
Ia	3960,1+19,9	+ 995	+ 597	+ 398	= 5970	} 6000	
Ib	19,9 + 0,1	+ 5	+ 3	+ 2	= 30		
IIa	1592	+ 3	+ 400	+ 240	+ 160	= 2400	} 3000
IIb	398	+ 2	+ 100	+ 60	+ 40	= 600	
	5970	+ 30	+ 1500	+ 900	+ 600	= 9000	

Այստեղի կարմիր շրջանակի 7(35%) տվյալները պահպան-
վել են Մարքսից, նորահայտ 13(65%) թվերն առաջին անգամ
ստացել է Ավդալբեգյանը:

Երկու սխեմաներում էլ անշեղորեն պահպանվում են
Մարքսի բոլոր ցուցմունքները՝

- 1) Ոսկու արտադրությունը պատկանում է I դասակարգին
= Ib ենթաբաժինը,
- 2) 20c-ն պետք է փոխանակվի Ic-ի ուրիշ տարրերի հետ
= Ia19,9C2-Ib19,9C1 և
- 3) 5v+5m I-ը պետք է փոխանակվեն IIc-ի տարրերի հետ
= Ib(5v+5m)=IIC210 7 Ib(5v+3mα)+2mβ=IIa8C2+IIb2C2:

Ամեն ինչ հայտնվում է իր տեղում՝ առանց քանդելու ու մի
քար անգամ տեղաշարժելու կառույցից: Մարքսի սխեմաները
մնում են կուռ և անխախտ: Ավդալբեգյանի դուրս բերած III,IV
սխեմաները՝ Մարքսի սխեմաների արտաքին պատի հետևում
թաքնված ներքին կառուցվածքներն ու հաղորդակցություններն
են՝ փողի կամ դրամանյութ ոսկու տարեկան արտադրությունը,
նրա մասերի շարժումն ու փոխանակությունը հասարակական
արտադրության մյուս շարքերի հետ, որ քիչ հետո հանգեցնելու
են համալիր շինությունների մի հսկա լաբյուրինթոսի երկու բա-
ժինների ու երեք կապիտալամասերի մեջերում: Բայց դա՝ քիչ

հետո, իսկ առայժմ Մարքսի մահվանից շուրջ կեսդարյա կանգա-
ռից հետո սառույցը շարժվեց մեռած կետից, I, II սխեմաներին
հաջորդեցին III, IV-ը... տասնյակների՝ փոխարեն:

Հասկանալի է, որ այսօրինակ մասշտաբի իրադարձու-
թյունն անարձագանք չէր կարող մնալ գիտական շրջաններում
ու կենտրոնական մամուլում և՛ չմնաց: Սպասվածին հակառակ
«Под знаменем марксизма» պարբերականում ջախջախիչ բննա-
դատականով հանդես եկավ տնտեսագետ-տեսաբան Վ.Պոզնյա-
կովը, որը բննարկելի խնդրում վայելում էր առաջատար մասնա-
զետի մենաշնորհային համբավը¹⁴: Հիշյալ և մյուս պարբերա-
կաններն այդ թվականներին անարգել տպագրել էին Վ.Պոզնյա-
կովի մեկ տասնյակից ավելի հոդվածները, բացի այդ նա զեկու-
ցումներ էր կարդում ու սեմինարներ էր վարում գիտական
հիմնարկներում¹⁵:

Թ.Ավդալբեգյանի քարաձայռի պես դուրս ցցվելը ծովի
հանդարտ մակերևույթի վրա անշուշտ ծանրորեն հարվածում էր
Պոզնյակովի առաջատարի դիրքին:

Իրականում, սակայն, Վ.Պոզնյակովն իր «բանից բեխա-
բար» ռոզիստ է և այդ դիրքերից բննադատելով Թ.Ավդալբեգյանի
գրքույկը, համառորեն շարունակում է պնդել, թե Մարքսի սխե-
մաներում թերությունն առկա է: Անօգնականորեն կառչելով
«Золото...»-ում նկատված վրիպակը շնկատելու տալուց, Թ.Ավ-
դալբեգյանի վկայակոչված գիրքը՝ «*հնդինակին անհայտ գրական-
ությունը*» հայտարարելուց, սեփական ուշ գրվածքը Ավդալբեգ-
յանի վաղ տպվածքում չհիշատակվելուց, մինչև անգամ Ռ.Լյուբ-
սևմրուրգի «конструкционные уравнения» և «транслокационные
части»¹⁶ բնտիր տերմինները Թ.Ավդալբեգյանին վերագրելով
«довольно мудрённые» որակելուց, «против которых возражать
не приходится», Պոզնյակովն անրողարկելի խանդով առկուցուն,
ջանք ու միջոց չի խտրում նսեմացնելու համար Ավդալբեգյանի
կատարածի նշանակությունը:

Տեղի է ունենում հակառակը:

Նսեմացման փորձն ավելի է մեծացնում Թ.Ավդալբեգյանի
հարգն ուշադրություն սևեռելով լրացուցիչ, առավել ծանրակշիռ
փաստերի վրա: Պոզնյակովի վկայակոչած մատենացանկից
պարզվում է, որ Թ.Ավդալբեգյանն իրականացրել է այն, ինչ

ա) «Կապիտալում» երկու անգամ խոստացել, բայց չէր արել
Մարքսը,

բ) վերջինիս ձևագրերում ապարդյուն փնտրում էր էնգելսը:
Դա այն

գ) «*օրգանական միահյուսումն էր, որ կտար սպառիչ սխեմա*»
Լյուբսևմրուրգին,¹⁷

դ) «*բարդությունն էր որ ոչ միայն հսկայական, այլ անհաղ-
թահարկի էր*» թվում Գ.Էկշտեյնին,¹⁸

ե) «*դեֆեկտի վերացումն էր, որ հանձն չէր առել Ռ.Լյուբսևմ-
րուրգը*» (Շ.Դվոլայցկի),¹⁹

զ) «*հիմնական հարցն էր, որի սխալմունքը տևսնելով
Մարքսը թողել էր կես ճանապարհին*» (Վ.Պոզնյակով),²⁰

կ) «*փողի թերամշակ պրոբլեմի*» մշակումն էր (Մ.Յակովլև),²¹

ր) «*Մարքսի զարգացումն էր առանց մի քար դուրս գցելու կա-
ռույցից*» (Մ.Հիմելֆարթ)²² ևն, ևն...

Մարքս, Էնգելս, Լյուբսևմրուրգ, Էկշտեյն, Դվոլայցկի, Պոզ-
նյակով, Յակովլև, Հիմելֆարթ, հետագայում սրանց կավելանան
Բլաուզ, Ռոբինսոն, Մայբուրգ և շատ ուրիշներ՝ բոլորը ստանում
են իրենց բոլոր հարցերի պատասխանները:

Թ.Ավդալբեգյանի հարգը հսկայական թոշիչ է գործում
նրանով, որ Մարքսի պ/վ-թյան I, II սխեմաներում ներկայացված
միմիայն արտադրողական կապիտալն ու սրա շարժումը, փաս-
տորեն, պատկերում են ոչ-ապրանքային տնտեսության վերար-
տադրապրոցեսն, այն դեպքում, երբ նորաստեղծ Մարքս-Ավ-
դալբեգյան III, IV սխեմաների ի հայտ գալով նշանավորվում է
ապրանքային և բուն կապիտալիստական վերարտադրության
ֆար, երբ արտադրությանը համընթաց գործում է ապրանք -
փողային շրջանառությունը:

¹⁴ Տե՛ս «Под знаменем марксизма», 1929, №7-8, էջ 249-251:
¹⁵ Տե՛ս «Под знаменем марксизма», 1923, №4-5, 1924, №10-11, 1925, №12, 1926, №1-2, 1927, №№4,9, 1928, №№1, 9, 1929, №№1,10-11; «Социалистическое хозяйство», 1929, кн.IV էջ:
¹⁶ Հսմտ. Բ.Լյուքսեմբուրգ, Накопление капитала, стр.63 «конструкционные ...» և стр.57 «транслокация» տերմինները:

¹⁷ «Накопление капитала», стр. 84:
¹⁸ Կույն տեղում էջ 533:
¹⁹ Предисловие Ш.Я.Дволайского к статье В.Познякова Деньги в схемах воспроизводства Маркса, см. Труды Института Красной Профессуры, Гиз, 1923, т1, стр.156:
²⁰ Позняков, В. Деньги в схемах воспроизводства Маркса, Կույն տեղում էջ 159:
²¹ Яковлев, М. Н., Теория реализации Р. Люксембург, М. Изд. «Прибой», 1925, стр. 55:
²² Гимельфарб, С. К вопросу о месте денежного материала в схемах воспроизводства Маркса, см. «Под знаменем марксизма», 1928, № 5, стр.199:

«Золото...»-ն Ավդայրեզյանի շոնդայից ներխուժումն էր տնտեսագիտության բնագավառ, բայց միայն սկիզբն էր: Իր նշանակությամբ դա նույնն էր ինչ Մենդելևեի աղյուսակի ամբողջական լրացումը կլիներ: Շարունակությունն առավել հետաքրքրական է նշանավոր է լինելու, բայց եթե «Золото...»-ի խնդրին անդրադարձել էին դեմքեր, որոնք հասունացրել էին լուծումն, ապա այս կետից այն կողմ կուսական խոսքան էր, պետք էր ինքնուրույն ուղի հարթել անդաստանում:

Ավդայրեզյանն այսուհետև միայնակ էր:

Նսեմացման փորձն Ավդայրեզյանի մեջ առաջացնում է ստեղծագործական պայթյուն: Մեկը մյուսին հաջորդում են մեկը մյուսից քնտիր գործեր՝ «К вопросу о золоте в схемах простого воспроизводства» և «Издержки обращения в схемах простого воспроизводства» վերնագրերով: Երկուսն էլ գրվել են 1929 թվականին, երկուսն էլ ավարտվել դեկտեմբեր ամսին և հրատարակվել 1930-ին:

Արգասաբերության պոռթկման այս համընկումներն աչքի են ընկնում մի կարևոր անհամընկմամբ՝ ստեղծման նպատակների տարբերությամբ:

«К вопросу...»-ն Ավդայրեզյանի պատասխանն է Վ.Պոզնյակովին, որտեղ պատեհ առիթն օգտագործվում է առավել խորք ու լայնքով քննարկելու «Золото...»-ում արժարժված հարցերը: Հաստատվում է նաև Վ.Պոզնյակովի դիագնոզն ու գրաված դիրքը՝ “под знаменем розизма”²³ ախտորոշում է Ավդայրեզյանը:

Վ.Պոզնյակովը փոշիանում է:

«Издержки...»-ին «Золото...»-ի շարունակությունն է փողի ներդրվելուց հետո: Ապրանքային տնտեսակարգի վերարտադրությունը՝ արտադրության ու շրջանառության միասնությունն է և Թ.Ավդայրեզյանն առաջադրում էր իր լուրջ և գալիս անափ ծով, առաջին անգամ ստեղծելով երկրորդ գործոնի՝ շրջանառության սխեմաները: Պ/վ-թյան III, IV սխեմաների մեջ առևտրային և դրամական կապիտալների ստորաբաժանումով Մարքսի սխեմաների 2-3 շարքերը վերածվում են 11-12-ի մեջ սփռված կառույցների, շարքերից յուրաքանչյուրի բաղկացուցիչ կապիտալներով:

k_1 = արտադրողական կապիտալ,

k_2h = համառոտրային կապիտալ,

k_2g = դրամական կապիտալ:

Այստեղ են առևտրական ձևերի կապիտալի ու գործավորի, ձևերի կապիտալի ու հաստատությունների, ապրանքների ու պիտույքների հատկացումներն ու բաշխման նորմաները, որ ոսկեկար անոթներով առտայից թափանցում են շրջանառության երակներն ու մազանոթները: Ընդ որում տրվում են ապրանքային տնտեսության երկու ֆազերը՝ ապրանքա-փողային շրջանառությունն ու նախնականը՝ պարզ ապրանքափոխանակությունը: Ավդայրեզյանը խոստանում է շուտով թողարկել նաև երրորդ, այս անգամ ոչ ապրանքային, ներառյալ սոցիալիստական տնտեսության պ/վ-թյան սխեմաները: Յավոր՝ վերջինս լույս տեսավ միայն նախնական թողարկմամբ աղյուսակի ձևով: Այդ մասին՝ քիչ հետո:

Բայց «К вопросу...»-ն և «Издержки...»-ն համընկնում են մեկ այլ կարևոր, Վ.Պոզնյակովի հայտարարած, կրկնած, երկրկնած և ավելի “վճռորոշ կետում”, որ ինչպես հաղթաթուղթ (козырь) նա՝ ճոճում է Ավդայրեզյանի գլխին: Այս կետից են սկզբնավորվում վերոհիշյալ անհամընկման կենտրոնախույս ուղիները, որ շատ ավելի վճռորոշ են դառնում քան ենթադրում էր կարճատես Վ.Պոզնյակովը և անշահեկան իր համար:

Սխեմայի պայմանների համաձայն արտադրամիջոցների բաժնում (I) փոփոխուն կապիտալի՝ (V) աշխատուժի համեմատությամբ Վ.Պոզնյակովը հայտնաբերում է հումքի և արտադրամիջոցների պակասորդ: Թվում էր, թե սա՛ միանգամայն ճիշտ և գորեղ կո՛վան է Ավդայրեզյանի ողջ կոնցեպցիան ժխտելու համար: Բայց պարզվում է, որ հայտնաբերածը ոչ թե արտադրողական պակասորդ է, այլ անարտադրողական “գուտ ծախք”, շրջանառության հատկացում, այսպես հայտնի faux frais, որին հումք և արտադրամիջոց պետք չեն: Կապիտալիստական վերարտադրությունն, ինչպես ասել ենք՝ արտադրության ու շրջանառության միասնությունն է և սխեմաներ կազմողն արտադրության կողքին պետք է օդանցք թողնի շրջանառության համար:

Թ.Ավդայրեզյանն այդպես էլ վարվում է և III, IV սխեմաների բոլոր բաժիններում ու ենթաբաժիններում արտադրությանն առնթև գործում է շրջանառությունն՝ առևտրային կապիտալը:

²³ Տե՛ս «К вопросу о золоте в схемах простого воспроизводства», стр.4:

«Բայց ո՞վ է իրավացի այս բանավճռում,- հարց է բարձրացնում Ավդայրեզյանը,- «Золото...»-ի հեղինակը, թե՞ գրախոսը»²⁴:

«Այսպես է ասում «Կապիտալի» հեղինակը» վերնագրով գլուխը բացվում է Մարքսի քաղվածքների վկայակոչումներով, որոնց հիմնական իմաստը՝ «վերարտադրապրոցն են անարտադրողական ֆունկցիաները և պարփակում իր մեջ»²⁵ թեզն է: Այս նույն կամ համարյա նույն քաղվածքներն, իրենց առաջնորդող թեզով, հիշատակվում են «Иждержки...»-ում²⁵: Այս է համարնկում: Բայց եթե «К вопросу...»-ում դրանք ծառայում են որպես փաստարկ Պոզնյակովի դեմ, ապա «Иждержки...»-ում՝ դառնում են երակետ Ավդայրեզյանի համար: Ահա և անհամարնկում: Այն բանակությունը (4,975v), որ Պոզնյակովին թվացել է ավելորդ և մտցրել փակուղի, Ավդայրեզյանի համար դարձել է շրջանառության ցանց կազմող մեծություն: «Иждержки...»-ի սխեմաներում նկարագրողվել է այն, ինչ տեսականորեն հիմնավորվել է «К вопросу...»-ում և ի սկզբանե ճիշտ է եղել Թ.Ավդայրեզյանը բանի, որ «Иждержки...»-ն փաստորեն սկզբնավորվել է դեռևս «Золото...»-ից, իսկ սա ավարտվել է «Иждержки...»-ով: «К вопросу...»-ն վճռորոշ ճամփաբաժան է, որտեղ Թ.Ավդայրեզյանը երկդիմի Յանուսի նման մի երեսով հետ է դարձել «Золото...»-ի փուլին Վ.Պոզնյակովին բացատրություններ տալու համար՝ մյուսով առաջ է գնացել «Иждержки...»-ում հասնելով նոր հանգրվան:

Մին նույն պահին, մին նույն քաղվածքներով ու բանակություններով Վ.Պոզնյակովին նոր էին բացատրվում այն տարրական ճշմարտությունները, որոնք արդեն մարմնավորվել էին «Иждержки...»-ում: Նա դեռ նոր պետք է կանգներ այն երակետին, որի ուղին արդեն ավարտել էր Ավդայրեզյանը: Մի մեծ միջուկ (интервал) գոյացել էրկու նշանակատերի և հարթությունների արանքում, որտեղ Վ.Պոզնյակովը հայտնվել է նախնական փուլում Ավդայրեզյանի համեմատությամբ:

Ահա «վճռորոշ կետի» սկզբնական արդյունքները և ավելին:

Չէ, որ Վ.Պոզնյակովը շարքային մեկը չէր, այլ գիտական շրջաններում հարգված ու հեղինակավոր մասնագետներից էր, որն այդքան զիջում է Ավդայրեզյանին: Իսկ ի՞նչ կլինե՞ր ընդհա-

նուրի վիճակը, որքա՞ն կլինե՞ր այդ տարբերությունը: Վերը նրդված քաղվածքների կիրառման օրինակը միակն ու ամենացատուներ չէ, Վ.Պոզնյակովն էլ ամենախոշոր ժամանակակիցը չէ ում համեմատությամբ ոռնում է Ավդայրեզյանի գերազանցությունը: «Կապիտալի» հազարավոր էջերից մի հատիկ կետում միայն Մարքսը փողն անվանել է «շրջանառության մեքենաներ»: Նույն կերպով մեկնաբան Գ.Ռոզենբերգը, Մ.Յակովլևը, նույն Վ.Պոզնյակովը և շատ ուրիշներ նկատում և բազմաթիվ անգամներ կրկնում են Մարքսի դիպուկ խոսքը՝ սրան վերագրելով լույս ֆիզուրալ իմաստ: Վ.Պոզնյակովը նույնիսկ հեղանարով քմծիծաղ է տալիս:

«Նեղինակը (Թ.Ավդայրեզյանը: -Ա.Մ.) լրջորեն է ընդունել այս խոսքը,- գրում է նա,- բանի որ փողը մեքենաներ են, նշանակում է մյուս մեքենաների շարքում պետք է դասվեն»²⁶:

Այնինչ Ավդայրեզյանը կռահում է մետաֆորի ֆունկցիոնալ նշանակությունն ու պատկերը պայծառանում է մի ակնթարթում:

«Լոկոմոտիվն ու շոգենավը ոչ թե արտադրում, այլ փոխադրում են,- տրամաբանում է նա,- և չի խանգարում, որ մտցվեն հաստատուն կապիտալակազմի մեջ: Ներկարաչափն ու կշեռքը ոչ թե արտադրում, այլ չափում-կշռում են և չի խանգարում, որ մտնեն հաստատուն կապիտալամաս: Նույն կերպ փողը (կամ ոսկին) բազմաթիվ անգամներ շրջանառում են անհամար թվով ապրանքներ ու հանդիսանում են նրանց արժեչափը և այդ հանգամանքը չպետք է խանգարի, որ մտնեն հանրային արտադրության հաստատուն կապիտալակազմ»²⁷, - եզրահանգում է Ավդայրեզյանն ու փողն իրավունքով տեղ է գրադեցնում արտադրամիջոցների բաժնի հաստատուն կապիտալամասում:

Նմանօրինակ փաստերը շատ են, երբ աննշան թվացող կամ ուրիշներին ոչինչ չասող մանրույթներն Ավդայրեզյանին հանգեցրել են մեծ ընդհանրացումների: Տառարավոր գիտնականներ միլիոնավոր անգամներ նայել են պ/վ-թյան հանրահայտ սխեմաներին, բայց ոչ-որ $C : V$ կապիտալամասերի $4 : 1$ համամասնության մեջ չի նշմարել հասարակության արտադրությունների զարգացման աստիճանն, այսինքն արտադրատարրերի բաշխման ցուցանիշը: Ավդայրեզյանն է, որ $1:11=2:1$ բաժինների

²⁴ «К вопросу ... », стр. 18:

²⁵ «Иждержки» обращения ...», стр. 4-5:

²⁶ «Под знаменем марксизма» նշված գրախոսական հոդվածը էջ 250:

²⁷ «Золото... », стр. 38:

հարաբերությամբ որոշել է աշխատանքի հասարակական բաժանումը տնտեսական ոլորտների միջև, որից կախված է արտադրամիջոցների և սպառամիջոցների բաշխումը: Դարձյալ նա է 1500V+1500M տարբերով պարզել գույքային հարաբերությունները, որի հետևանքով ստեղծվում են բաշխման հարաբերությունները հասարակական խմբերի միջև ևն, ևն ...ինչերից ի՞նչ և որտեղի՞ց որտե՞ղ:

Մխևանների անշունչ թվի ու տառի մեջ նա տեսել է տնտեսական կյանքի իրական պատկերն ու լսել կենդանի բարախյունը:

«Վերարտադրության սխեմաները՝ մերկ թվեր չեն միքանի տողերի մեջ շարված,- գրել է Ավդալբեգյանը,- այլ բովանդակությամբ հարուստ կարգային պատկերումներն են հասարակական ողջ տնտեսության»²⁸:

«К вопросу...» և «Издержки...» ակնարկների տեսական նշանակությունը հսկայական է և հեղինակն այդ գործույթներն ուղարկել էր կենտրոնական մամուլին՝ հրատարակության համար: «Под знаменем марксизма» հանդեսը նախապես հարցաթերթիկ էր ուղարկել Թ.Ավդալբեգյանին և ստացել էր հետևյալ պատասխանները:

Ответы Т.Авдалбегяна (от 24-го марта, 1930-го года) на вопросы журнала «Под знаменем марксизма» об общественной и научной деятельности после советизации Армении.

I

1921–1922 зав. научно – марксистским отделом Госиздата Армении.

1923– зав. учебным отделом первого рабфака в Эривани.

1922–1924 лектор, зам. декана соцфака и член правления Госуниверситета в Эривани.

1925– лектор партшколы в Эривани.

1926– 1930 действительный член и учёный секретарь второго сектора Института наук и искусства ССРА (отд. общественных наук).

II

1924– мною составлен 5-летний (1924-1929) план восстановления и развития хлопководства в Армении (издан).

1927– мною открыта в Ново-Баязете клинообразная надпись Русы, сына Сардура (VIIIв. до Р.Х.).

1928– соучастник археологической экспедиции, обследовавшей Ново-Баязетский уезд по поручению Института наук и искусства ССРА.

1929– мною поднят перед Совнаркомом Армении вопрос об исследовании древнего русла реки Аракс, для развития оросительной системы приаракской равнины.

1930– научно-подготовительные работы для этой экспедиции.

III

Я-член секции научных работников (ср. справочник «Научные работники СССР» (без Москвы и Ленинграда), изд. Академии Наук СССР, Ленинград, 1928, стр.2. Авдалбегян Тадевос Айрапетович*)

Այսպիսի գիտական ու հասարակական ծառայություններով հանդերձ «Под знаменем марксизма»-ն, որ տպագրել էր Վ.Պոզնյակովի քննադատականը, չտպագրեց Թ.Ավդալբեգյանի պատասխան «К вопросу...»-ն: Դա չէր նպաստում պարբերահանդեսի հեղինակությանը, որի էջերն, ինչպես ասել ենք, ողողված էին Վ.Պոզնյակովի հողվածներով: Տարվածն, ինչպես միշտ, միակողմանի հասցվեց: Թ.Ավդալբեգյանի ոչ մի պատասխան հողված՝ «Կապիտալի» թարգմանության, «Ռուս-հայերեն նոր բառարանի» ստեղծման, «Zur Kritik...»-ի, «Золото...»-ի և այլնի կապակցությամբ, չի հրատարակվել: Բարերախտարար այն թարգմանարար հրատարակեց տեղական «Նոր ուղի» հանդեսը, որը նույնպես չէր հապաղել իրրև ««шпилька» Թ.Ավդալբեգյանի դեմ» (Արշ. Մելիքյանի նամակից²⁹) թարգմանել ու հրատարակել Վ.Պոզնյակովի քննադատականը: Սրա շնորհիվ «К вопросу...»-ն

* - чл. Института наук и искусств Армении: экономика, ист. хозяйства и мировоззрения в Армении, Эривань, ул.Либкнехта № 20, кв.5 (3.Х.1885 Маку, Персия)

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 393, ց. 1, գ.240, էջ 34:

²⁸ «Издержки ...», стр. 5-6:

միակն է վերարտադրության սերիայում, որ գոյություն ունի նաև հայերեն և որից կարելի է որոշ տերմիններ քաղել³⁰:

Կենտրոնական «Плановое хозяйство» հանդեսը, որին առավելագույն չափով էր վերաբերում խնդիրը, չտպագրեց մեծարժեք «Иждержки»-ն, «хотя и представляет определённый интерес...»³¹:

Սոցիալիստական հասարակարգ կառուցող երկրի մամուլը չտպագրեց նույնիսկ հրատապ անհրաժեշտ «Սոցիալիստական տնտեսության պ/վ-թյան ծավալուն աղյուսակը», որ 1932թ. տեխնիկական պատճառներով լույս տեսավ միայն նախնական թողարկմամբ, այսինքն սխեմաներն առանց տերստի:

Դեռ նույնպես նպաստավոր չէր շատերի համար: Դեռևս 1925-ին Կոմունիստական ակադեմիայում կայացած պատմական քննարկմանը մասնակից ականավոր գիտնականների մի հոծ բանակ «խոշորագույն տեսարան» և «կուսակցության սիրեցյալ» (Լենին) Ն.Բուխարինի հեղինակավոր գլխավորությամբ, հանգել էին այն ողորմելի եզրակացության, թե «կապիտալիզմի վերացումով կվերանա քաղաքատնտեսությունը գիտակարգն րնդհանրապես»³²:

Այս մտայնության ծոփում Ավդալբեգյանն անակնկալ ստեղծում է «Սոցիալիստական տնտեսության ծավալուն աղյուսակը»: Չափազանց համարձակ մարտահրավեր էր այդ հրատարակության թողարկումը՝ քաղաքատնտեսության լիկվիդացիայի օրինականացած ծրագրին հակադրել ստեղծման նախագիծ՝ 64 կապիտալամասերի բոլոր հավասարումներով: Մրանով նա մասամբ իրականացրեց Լենգելսի հանրահայտ կտակը՝ ստեղծել մինչև ու հետևյալիստական, այսինքն բոլոր հասարակարգերի, այսպես կոչված «լայն իմաստով» քաղաքատնտեսությունը, որովհետև «նեղ իմաստով» բուն կապիտալիստականը տվել է Մարքսը:

«Վերարտադրության թևերիայի նշանակությունը հսկայական է ոչ միայն կապիտալիստական անկազմակերպ տնտեսության երևույթների ուսումնասիրման և ըմբռնման համար, գրել է Ավդալբեգյանն, այլև սոցիալիստական տնտեսագիտու-

³⁰ «Նոր ուղի» ամսագիր, Երևան, 1929, № 11-12: «Ոսկին պարզ վերարտադրության սխեմաներում» գրքույկի մասին, պատասխան Վ. Մոզիլավովին:

³¹ «Плановое хозяйство» հանդեսի խմբագրության 1930 թ. մարտի 18-ին ուղարկած պատասխանը: Տե՛ս «ԱՄՆ. ֆոնդ 393, ց. 1, գործ № 10»:

³² Տե՛ս «Вестник Коммунистической академии», (Москва), 1925, № 11:

թյան տեսական ընդգրկման և գործնական պլանավորման համար»³³:

Այս խոսքերը չարարկվում էին որպես քաղաքական պրոպագանդա անտեսելով գլխավորը՝ սոցիալիստական քաղաքատնտեսության ստեղծման անհրաժեշտությունը: Պլանավորումը, որ սոցիալիստական քաղաքատնտեսության հիմքն է և պետական մակարդակով կառավարելի է դարձնում տնտեսական տարերային կյանքի անկառավարելի պրոցեսները, նոր էր մշակվում, ուստի նոր պետք է յուրացվեր ու դուրացվեր այդ գործով զբաղվող մասնագետների կողմից: Թ. Ավդալբեգյանն իր վերջին գրքույկը նույնպես առաքել էր տարբեր քաղաքներ՝ պլանավորումը գիտական հիմքերի վրա դնելու և հատկապես գիտական շրջաններում քննարկումներ հարուցելու նպատակով: «Բանի, որ հարցի կարևորությունն ակնհայտ է, ուստի նրա քննարկումն անհրաժեշտ է նաև քննադատության կողմից», - բացահայտ շահագրգռությամբ գրել է նա³⁴:

Մպասկիրները դարձյալ գերազանցում էին միջավայրի հնարավորություններին և գրքույկի շուրջ «ձայն բարբառո ...» ծպտուն անգամ չհղավ՝ աստիճանաբար դառնալով անըմբռնելի, իսկ 1937-ի սպանդին գիտնական վերնախավի լիկվիդացիայից հետո այսօր դարձել է համարյա անընթեռնելի համր սեպագիր:

Այս փաստերը ժամանակի ու միջավայրի «ծախսերն են»՝ քաղաքական պաստառի գերիշխանություն ամեն ինչում, անկախ արժևքից ու անհրաժեշտությունից:

Պ/վ-թյունը համարվում է հիմնական և նրա տեսական քննությունը հանդիսանում է ընդլայնված վերարտադրության ճշգրիտ գիտական ելակետը: Դրանով իսկ պ/վ-թյան խնդիրներն ինքնըստինքյան հանգում են ամբողջ հասարակական կապիտալի ր/վ-թյան խնդիրներին:

Թ. Ավդալբեգյանը ստեղծել էր կուժ տեսական պատվանդան և այժմ թևակոխում էր ր/վ-թյան ոլորտն այստեղ նույնպես հասնելով անկանխատեսելի արդյունքների:

³³ *Тад. Авдалбегян*, Основные гипотетические схемы расширенного воспроизводства, Эривань, 1931, стр. 3, Предисловие.

³⁴ *Тад. Авдалбегян*, «Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства», Эривань, 1932, стр. 2 («Два слова» վերնադրով անաչարանը):

Որքան էլ մեծ է Թ.Ավդալբեգյանի ներդրումը պ/վ-թյան գլխավոր հարցերում, այնուամենայնիվ նրա տնտեսագիտական ստեղծագործության գագաթն՝ ր/վ-թյունն է:

Եթե պ/վ-թյան որոշ հարցեր, ինչպես տեսանք, դարձել էին այն բննարկումների առարկա, ր/վ-թյան խնդիրները շոշափվել էին սակավ անգամներ, շնայած հենց ր/վ-թյունն էր, որ այդ պահին հիմնավոր մշակման կարիք ուներ: Այստեղ նոր պետք է ձևակերպվեին ու դասակարգվեին վերարտադրատեսակներն ու ենթատեսակները, որոշվեին արտադրողական և մյուս կապիտալների օրգանակազմերը, արտադրության չափն ու վերարտադրության նորմաները, կուտակման աղբյուրն ու տեմպերը, կուտակումների տեսակները են, ևն...

Մի խոսքով՝ մշակման ենթակա խնդիրների ծո՞վ:

Թ.Ավդալբեգյանն ըմբռնելու է առաջադրված հարցերի ողջ դիապազոնն առանց բացառության: Մեկ առ մեկ դասակարգելով վերարտադրության բոլոր տեսակները, ենթատեսակները, դրանց հնարավոր տարբերակները, հազվագյուտ փոփոխակները ու հսկայածավալ դաշտի ամեն բազմազանը, մեկ հարվածով՝ կապիտալի նույնական ու տարբեր օրգանակազմերի հիմունքով, Լրկու մասի է վերածում անհամարն ու միավորում բոլոր կզակները, որտեղից ոչ մի կոմբինացիա դուրս չի մնում, այսինքն ստանում է հնարավոր միատեսակների մարսիմալ քանակները:

Նախնական այս բաժանումն ունի տեսական վիթխարի նշանակություն: Մա Կ.Լիննեյի ողջ կենդանական աշխարհը ցեղ ու տեսակի բաժանող յուրատեսակ “բինար նոմենկլատուրա է” անտեսագիտության մեջ:

Այնուհետև մեթոդոլոգիական միքանի վիրտուոզ գործողությունների շնորհիվ մեծ հստակություն է մտցվում անձայրածիր քառսի մեջ, որով անհամեմատ դյուրանում է քննությունն ու յուրաքանչյուր հետևություն տարածվում է ամբողջի առնվազն կեսի վրա, այսինքն մեծանում է ընդհանրացումը:

Տիջենը պ/վ-թյան առաջին սխեման:

	C	V	M	K'
I	4000	+ 1000	+ 1000	= 6000
II	2000	+ 500	+ 500	= 3000
	6000	+ 1500	+ 1500	= 9000

Այս կալկուլից չվերով, Մարքսն ր/վ-թյան սխեման հանկարծ ներկայացնում է այլ մեծություններով:

	C	V	M	K'
I	4000	+ 1000	+ 1000	= 6000
II	1500	+ 750	+ 750	= 3000
	5500	+ 1750	+ 1750	= 9000

Ինչպես տեսնում ենք II բաժնի թվերը նոր են: Պ/վ-թյան մեջ արտադրողական կապիտալի C:V-ն բոլոր շարքերում =4:1, իսկ ր/վ-թյան մեջ II շարքում անսպասելիորեն դարձել է =2:1

“Որտեղից՞ հայտնվեցին այս նոր թվերը, հարցնում է Թ.Ավդալբեգյանը: Ինչպե՞ս ր/վ-թյան թվային տվյալներ դուրս բերել պ/վ-թյան թվերից: Չէ՞, որ ր/վ-թյունն իրոք ինքնին առաջանում է պ/վ-թյունից: Չէ՞, որ «որչափով, որ կուտակումն է տեղի ունենում, պ/վ-թյունը միշտ կազմում է նրա մի մասը» («Կապիտալ», II, 19363): Տապա որտե՞ղ է դա, այդ պ/վ-թյունն ր/վ-թյան սխեմաներում”:

Այստեղից ծագում են լրացուցիչ հարցեր...

“...Ինչու՞ հենց ր/վ-թյան ժամանակ է թույլատրվում այսպիսի ապշեցուցիչ ռեզրես: Ինչու՞ վ է բացատրվում նման թույլտվությունը: Սպառամիջոցների արտադրության պատմական իրական տենդենցով:

Ո՞րտեղ են այս հարցերի պատասխանները”³⁵:

Ո՞րտեղ են մյուս հարցերի պատասխանները:

“Դրանք չկան, հետևում է Ավդալբեգյանի պատասխանը հարցերի այս հեղեղին, և դրանց բացակայությունն, այդ բացն, իհարկե, չի նպաստում վերարտադրության տեսության հստակ ու լիարժեք պատկերացմանն ընդհանրապես և ր/վ-թյանը մասնավորապես”³⁶, և կարկացնում է նա:

Ի տարբերություն ոսկու ներմուծման խնդրին, որ դարձել էր Լրկարատն վեճերի առարկա, այս աղաղակող բացը՝ վերարտադրությունները միմյանցից զատող վիեր, զարմանալիորեն մնացել է աննկատ գիտնականների աչքից: Մինչդեռ պորբլեմն այստեղ ավելի խոր ու արմատական է, քան թվում է առաջին հայացքից: Այնտեղ Մարքսի չբացահայտված ճշմարտությունն էր՝ այստեղ նրա բացահայտ հակասությունը: Այնտեղ շնայած ծնվել

³⁵ Там. Авдальбегн, Основные гипотетические схемы расширенного воспроизводства, Эрвань, 1932, стр. 29:

³⁶ Լույն տեղում:

լին հարևանցի ռոզիզմն ու ռեիզիոնիստական այլ շեղումներ, բայց մարքսիստական սխալման ամբողջությամբ մնացել էր անխախտ՝ այստեղ սխալման միջև մեկ պատակտու մեծ է, և կրորդն ու արմատական՝ սխալման և բնդիանրական դրույթի միջև, որոնք խարխուլում են մարքսիստական վերարտադրության թևորիայի կառուցվածքն ու արդարացի հարձակումների առիթ տալիս:

Այս կետում Թ. Ավդալբեգյանը հանդես է բերում իր գիտական նկարագրի ամենահատկանշական կողմերը:

Մարքսի հետևորդ լինելով նա չի դարձել հյու աշակերտ կամ անդամ Լաիզոն, այլ ուսմունքով լիցքավորված ու գիտելիքներով զինված յուրովի է անօրինակ եղած ռեսուրսները: Ինչպես նաև «Մապիտալը»՝ «տնտեսագիտական գրականության հրաշալիքներից մեծագույնը» նրա համար չի դարձել Սր. Գիբբ, որին պետք է հպատակորեն ենթարկվել, այլ՝ գիտական երկ, որին պետք է քննադատորեն մոտենալ:

Դիցուք՝ Մարքսի բնդիանրական դրույթը կոնկրետ օրինակով հաստատելու համար պետք է... հրաժարվել Մարքսի սխալմանց՝ փոխարենն առաջադրելով նորը: Այդպիսի էլք չկա:

Անշուշտ այլ նկարագրի գիտնական չէր հանդգնի նման խնդիր դնել իր առջև:

Հրաժարվել Մարքսից... Մարքսին հաստատելու համար: Հրաժարվել նրա սխալմանց... սրա՝ փոխարենն ու նրա՝ փոխարենն ստեղծելով դրույթը հաստատող նոր սխալմա: Իսկ ավելի ստույգ՝ պետք է հրաժարվել Մարքսից... *մարքսիզմի* համար: *Մարքսիզմը՝ միայն Մարքսը չէ*, և տվյալ դիլեման պարտավորեցնում է ուղղափառ մարքսիստին լինել «առավել կաթոլիկ բան հոռմի պապը»:

Թանր պատասխանատվության արթուն գիտակցությամբ համակված Թ. Ավդալբեգյանը գնում է «թագավորի զոհաբերության» քայլին: Հկուտորեն շրջանցելով, նա անձևոնմխելի է թողնում Մարքսի թ/վ-թյան օղից կախված սխալման, թող այն գործի բմբոնման համար մատչելի լոկալ սահմաններում, իսկ գլոբալ բմբոնման համար ևլնելով պ/վ-թյան այն սխալմաներից, որոնց ստորին շերտերն էր հատակագծել ինքն «Издержки»-ում, այժմ վեր է խոյանում թ/վ-թյան վերնահարկերն ու դուրս բերում երկու *նոր հիմնական* սխալմաներ, որոնք բոլոր պահանջներով համապատասխանում են պ/վ-թյան կոնստրուկցիոն պայմաններին: Այստեղ էլ են

$$1) IK' = IC + IIC,$$

$$2) IIK' = I(v+m) + II(v+m)$$

և այստեղ էլ է գործում նույնիսկ *պ/վ-թյան հիմնական օրենքը՝*

$$3) IIC = I(v+m),$$

բայց թ/վ-թյան մեջ ոչ որպես հիմնական օրենք: Այստեղ այն նոր պետք է ստեղծվի:

Բնականոն ընթացքով պ/վ-թյունն ինքնաճում է թ/վ-թյան:

Վճռորոշ դերն այստեղ պատկանում է Թ. Ավդալբեգյանի սահմանած այն օրենքին, որ պարզից թ/վ-թյան անցնելու համար անհրաժեշտ է հավելյալ արժեք կապիտալամասի ոչ թև սովորական նորմա, այլ *ավելադիր հավելյալ արժեք*: Ոչ թև սուսկ m, այլ m+ինչ որ x: Ֆորմուլաներով արտահայտված՝

$$պ/վ - թյունը K' = c + v + m,$$

$$թ/վ - թյունը K' = c + v + m', \text{ կամ } K' = c + v + (m + x):$$

Մեկ շտրիխի առկայությամբ «պ/վ-թյունն թ/վ-թյան մասն է կազմում» (Մարքս), տարբերությամբ «քանակի անցում է կատարվում որակի» (Հևգել), հնարավոր են դառնում պ/վ-թյան թվերի կիրառումն թ/վ-թյան մեջ և վերանում է «ժուժկալության» ողորմելի թևորիան: Բոլոր հարցերը լուծվում են մեկ շտրիխի տարբեր գործածություններով:

Այժմ պարզ է բնդյայնված վերարտադրատեսակների սխալմաներն իրար կողք դնելիս ակնհայտ է սրանց օրգանական միասնությունը, երկուսն էլ միևնույն մոր մեծ ու փոքր գավակներն են՝ մեկ տարբերակիչ նշանով միայն, որով բոլոր սխալմաների մայր սխալման դառնում է պ/վ-թյան I սխալման: Ահա պատկերը:

(Տե՛ս էջ 86)

Մարքսի պ/վ-թյան սխալմաներից Ավդալբեգյանի թ/վ-թյան սխալմաներ դուրս բերելիս, ավելադիր հավելյալ արժեքի լրացուցիչ բանակությունը հաղորդակցվող անթնների նման ամենուրեք հավասարաչափ բաշխվելով, հանգեցնում է գոյություն ունեցող բոլոր կուտակումների ամենահզոր ու կատարյալ ձևերին: Մտացվում են՝

Պարզ վերարտադրություն

Առաջին սխեմա

I $4000c + 1000v + 1000m = 6000k'$
 II $2000c + 500v + 500m = 3000k'$
 $6000C + 1500V + 1500M = 9000K'$

Երկրորդ սխեմա

I $4000c + 1000v + 1600m + 400m\beta = 6000k'$
 IIa $1600c + 400v + 240m + 160m\beta = 2400k'$
 IIb $400c + 100v + 60m + 40m\beta = 600k'$
 $6000C + 1500V + 900Ma + 600M\beta = 9000K'$

Ընդլայնված վերարտադրություն

Առաջին երկնական սխեմա

I $4000c + 1000v + 1000m + 600\mu = 6600k'$
 $\frac{400\mu c}{4400c^\circ} \quad \frac{100\mu v}{1100v^\circ} \quad \frac{100\mu m}{1100m^\circ}$
 II $2000c + 500v + 500m + 300\mu = 3300k'$
 $\frac{200\mu c}{2200c^\circ} \quad \frac{50\mu v}{550v^\circ} \quad \frac{50\mu m}{550m^\circ}$
 $6600C^\circ + 3300(V^\circ + M^\circ) = 9900K'$
 $\frac{1650V^\circ + 1650M^\circ}{6600C^\circ + 2640(V^\circ + M^\circ)} = 9900K'$

Երկրորդ երկնական սխեմա

I $4000c + 1000v + 600m + 400m\beta + 600\mu = 6600k'$
 $\frac{400\mu c}{4400c^\circ} \quad \frac{100\mu v}{1100v^\circ} \quad \frac{60m}{660m^\circ} \quad \frac{40m\beta}{440m\beta^\circ}$
 IIa $400c + 100v + 240m + 160m\beta + 240\mu = 2640k'$
 $\frac{160\mu c}{1760c^\circ} \quad \frac{40\mu v}{440v^\circ} \quad \frac{24m}{264m^\circ} \quad \frac{16m\beta}{176m\beta^\circ}$
 IIb $400c + 100v + 60m + 40m\beta + 60\mu = 660k'$
 $\frac{40\mu c}{440c^\circ} \quad \frac{10\mu v}{110v^\circ} \quad \frac{6m}{66m^\circ} \quad \frac{4m\beta}{44m\beta^\circ}$
 $6600C^\circ + 2640(V^\circ + M^\circ) + 660M\beta^\circ = 9900K'$
 $\frac{1650V^\circ + 990M^\circ}{6600C^\circ + 2640(V^\circ + M^\circ)} + 660M\beta^\circ = 9900K'$

- 1) համընդհանուր - բոլոր՝ I, Ia, Ib, II, IIa, IIb և ն բաժիններում ու ենթաբաժիններում,
- 2) հավասարաչափ - ամենուրեք աճման միևնույն տեմպով,
- 3) համակողմանի - բոլոր՝ C, C1, C2, V, V1, V2, M... և ն կապիտալամասերում ու ենթամասերում,
- 4) հավասարալարուն (равноинтенсивный) - մշտապես աճման միևնույն % ով և
- 5) անպակտոր - առանց գեր, կամ թերարտադրության, $IIc = I(v+m)$, մարսիմալ անխափանելությամբ գործող միաժամանակյա

Հ Ն Գ Ա Ն Ի Ս Տ Կ Ո Ի Տ Ա Կ Ո Ի Ս

Սա կատարելապես ֆանտաստիկ է, բայց ամենին ֆանտաստիկա չէ, այլ միանգամայն իրագործելի խնդիր է:

Շեղումով հարկ է նշել, որ վերարտադրության թեորիայով հիմնավոր և հաջողությամբ զբաղվել է Լենինը: Նա մի շարք ուսումնասիրություններ է նվիրել այս բնագավառին: Ի տարբերություն Մարքսի՝ Լենինի կազմած սխեմաներում արտադրամիջոցների արտադրության բաժինը (I) ստորաբաժանված է առանձին - առանձին արտադրամիջոցների և սպառամիջոցների արտադրությունների համար նախատեսված արտադրամիջոցների արտադրության ենթաբաժինների: Բացի այդ սխեմաների օրգանակազմերը վերցված են $Ic : v = 9 : 1$, $IIc : v = 5 : 1$ համամասնություններով և մի քանի փուլ վերարտադրությունից հետո հազիվ հանգում են սկզբնական ելակետին:

Թ.Ավդալբեգյանը ծանոթ է եղել Լենինի վերարտադրության Լոյուդներին, բացի «По поводу так называемого вопроса о рынках» վերառությամբ աշխատությունից, որ չնայած գրվել է 1893-ին, հրատարակվել է 1937-ին միայն, երբ Ավդալբեգյանն արդեն բանտարկված էր: Ըստ երևույթին նա սրանք չի համարել մեծարժեք գործեր, այդ պատճառով Լենինի անունը թողնելով՝ մեկ անգամ միայն Վ.Պոզնյակովի բերանը փակելու համար է հիշատակվում Ավդալբեգյանի ակնարկներում: Նա դավանում էր այլ մարքսիզմ՝ մարքսիզմ առանց լենինիզմի: Մարքսիզմ՝ հիմնադիրներ Մարքսի ու Էնգելսի հակաձառությամբ:

«Մարքսն ու Էնգելսը լուսանկարչական պատճեններ չէին, որ կետ առ կետ նման լինեին իրար գաղափարներով,- գրել է նա: Ընդհանուր համերաշխությունը չի ժխտում մասնակի տեսա-

կետների տարբերությունը, որ ուսումնասիրողը պետք է Լերան հանն և ոչ թե խոսն «ի լրո»»³⁷:

Մարքսիզմի հիմնադիրներից յուրաքանչյուրն ըստ Ավդայրեզյանի ունեցել է տնտեսական զարգացման ուրույն տեսություն: Մարքսն ընդունել է տնտեսական-հասարակական 6 ֆորմացիա՝ Էնգելսը՝ 5³⁸:

Նա դավանում էր մարքսիզմ, ինչպես տեսանք, շեղվելով Մարքսից ու նույնիսկ հակադրվելով նրան: Վերջապես անկետայում իրեն «մարքսիստ-պլեխանովական» հայտարարող Թ. Ավդայրեզյանը, որ Գ.Պլեխանովին համարում էր մարքսիզմի խոշորագույն թևերահիկ և, որի հիշատակին էր նվիրել վերոհիշյալ «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան» աշխատությունը, նույն գրքում գրել է.

«Գ.Պլեխանովի այս որոշման հետ համաձայնել չի կարելի»³⁹:

Նա հավատարմագրվել էր այն ուսմունքին, որ ստեղծել էին Մարքսն ու Էնգելսը և որում ստեղծագործել էին Պլեխանովը, Մերինգը, Լաֆարգը, Կաուցկին, Մալվոյին և ուրիշներ: Այս փայլուն ներկայացուցիչների մեջ տնտեսական մարքսիզմի առաջին դեմքը Ռ.Լյուքսեմբուրգն էր, որի «Կապիտալի կուտակումը» ամենանշանավորն է նախատիպարից՝ «Կապիտալից» հետո:

Ավդայրեզյանն աշակերտել է շատերին, վերոհիշյալ անուններից միզուցն բոլորին, բայց մի առիթով իրավացիորեն նշվել է:

«Աշակերտեց, բայց սոսկ աշակերտ չմնաց, այլ... իր ուսուցիչների գործընկերը դարձավ... Լրբեմն վեճի բռնվելով նրանց հետ»⁴⁰:

Դեռ նկարագիր է, որտեղ անընդհատ ու անստեղծագործ ոչինչ գոյություն չունի: Խորհրդային բարացած մտայնության ոսկեդարում նման մտածողությունն ու նկարագիրն, էլ չենք ասում քաղաքական դիրքորոշումը հերետիկոսություն էր գնահատվում և «քաղաքական հանցագործ» հողվածով էր դատա-

պարտվում: Բուր և նեղմիտ տառակերության միապաղաղ ճահճում չէր կարող տեղ գտնել այն լայնախոհ սկզբունքայնությունն ու ճկուն հաստատականությունն, ինչպես նաև ստեղծագործ մտածողությունը, որով շոայտրեն օժտված էր Թ.Ավդայրեզյանը: Նման նկարագիրը լուցվում և խլացվում էր, Լեռն ոչ վերացվում, որի պատճառով Թ.Ավդայրեզյանը չնչին չափով իսկ չունեցավ այն ճանաչումն ու համբավը, որին արժանի էր ըստ ամենայնի: Իսկ նա արժանի էր...

Նրա արժարժած հարցերն ու շոջափած խնդիրներն առաջին կարևորություն ունեցող պրոբլեմներն էին՝ դրված ժամանակի օրակարգում, իսկ լուծումներն ու արդյունքները բարձրագույն չափանիշներով ևն միայն գնահատելի: Լինելով ժամանակի ողջախոհ գիտնականների առաջին շարքում, Թ.Ավդայրեզյանը նաև ականավոր նախորդներից շատերի հաջող ընդիմախոսն ու գերազանցող հակառակորդն էր: Բայց ամենից ավելի ու ամենից վեր Թ.Ավդայրեզյանը Կարլ Մարքսի արժանավոր աշակերտներից էր, որ քննադատորեն, վերլուծականորեն և ստեղծագործաբար առաջ էր տանում հանձարեղ ուսուցչի մեծ գործը հեռավոր Հայաստանից ու բուն Հայաստանում:

Այս պարագաներում Թ.Ավդայրեզյանն ամենևին եզրույթացի առաջադեմ մարքսիստների կրտսեր զինակիցը չէր քնած արևելքում, այլ միջազգային մարքսիզմի հայազգի տեսաբանն ու Մարքսի հայ աշակերտը, որի գրչի տակից ևն դուրս եկել համընդհանուր տեսաբանական նշանակության՝ «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան» աշխատությունն ու վերարտադրության թևորիայի ակնարկաշարը:

Առավել ևս նա լուսավորության սաղմեր սերմանողը չէր հայոց «մթնամած աշխարհում», այլ բավական զարգացած գիտակարգերի ներդնողը բավարար չափով դրան նախապարաստված միջավայրում՝ մայր հայրենիքում: Թ.Ավդայրեզյանն է հայացրել «Կապիտալի» Լեռն հատոր - չորս գիրքն ու «Քաղաքատնտեսության բնագիտության շուրջը»:

Այսպիսով, ծավալելով մարքսիստ-գիտնականի և մարքսիստ-պրոպագանդիստի բուռն գործունեությունն՝ Թ.Ավդայրեզյանը Լրկու բնագավառում էլ հանդես է եկել համաշխարհային ցուցանիշներով: Հայերից բացի միայն շվեդներն ունեն «Կապիտալի» միանձնյա թարգմանիչ և «Կապիտալի» ոչ մի թարգմանիչ գիտնական այնպիսի մեծություն չի եղել, ինչպես հայ թարգմանիչը: Ոչ մի ազգ չունի Թադեոս Ավդայրեզյան՝ հազվա-

³⁷ «Նորք», 1924, №5, էջ306. Պրոֆ. Մոլեցևի «Տասարակական դասակարգերը» գրքի գրախոսականը
³⁸ *Տրամենն ԱԲ*: Աշխատանքի պատմությունը, թարգմ. Թ.Ավդայրեզյանի, Լեռան, Էնկեռական, 1924, 1925, 1927թթ, ցանկացած հրատարակություն, էջ1V, թարգմանի առաջաբանը
³⁹ *Թադ.Ավդայրեզյան* Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան, Բ. սպաղր, էջ 40:
⁴⁰ 1985թ. Թ.Ավդայրեզյանի 100-ամյակին նվիրված գիտական նատաշրջանում ակադեմիկոս Է. Առաքելյանի առված լազյան խոսքից (անտիպ):

գյուտ (երև չասենք եզակի) թարգմանիչ և մեծագույն տնտեսագետ:

Նայ մարքսիստ Թադևոս Ավդալբեգյանը Երևույթ է:

Նևտոնաբար՝ ի դեմս Ավդալբեգյանի հայ մարքսիզմը դուրս է գալիս լոկ ազգային գիտա-մշակույթի սահմաններից և կարևոր տեղ է զբաղեցնում միջազգային մարքսիզմի տեսության և պատմության մեջ:

Գանք մեր խնդրին:

Շարունակությունն անհնարին է, տալ շարադրանքին անհրաժեշտ հանդարտ տոնով և հակիրճ ձևով՝ ասելիքը դեռևս շատ է, արդյունքներն՝ աներևակայելի:

Նոր սխեմաներով կատարված հաշվարկներով ավելադիր հավելյալ արժեքի տարեկան 10% հաստատուն նորմայով, հրնգամյակում աճը կազմում է 61,5%, իսկ 10-ական % հարաճուն նորմայով՝ ...391,5%: Արդյունավետությունը պատկերացնելու համար ասենք, որ «Կապիտալում» սխեմայի նույն պայմաններում աճը ստացվում է ընդամենը 46%, էլ շենք խոսում է Լենինի սխեմաների մասին, որոնց աճը 3% է սոսկ:

Նոր արդյունքներն առասպելական են և ամենաառասպելականն այն է, որ սրանք միանգամայն իրական են:

Ինչպե՞ս է հնարավոր ստանալ բոլոր կատարելաձևերի հնգանիստ կուտակում:

Այսպիսի վիթխարի խնդրի իրագործման համար պետք են շնչին քայլեր՝ Թ.Ավդալբեգյանին հատուկ գործելակերպ՝ պարզագույն միջոցներով մեծագույն արդյունք:

Անհրաժեշտ է

- 1) ր/վ-թյան սխեմաների բոլոր բաժիններում ու ենթաբաժիններում պահպանել պ/վ-թյան սխեմաների օրգանակազմերը:
- 2) պարզից ր/վ-թյան անցումն ակնառու պատկերելու նպատակով կապելու ընդունել Մարքսի պ/վ-թյան սխեմաների թվերը:
- 3) պ/վ-թյան կրկնությունից խուսափելու համար կուտակման աղբյուր վերցնել ավելադիր հավելյալ արժեքը: Վերջապես
- 4) կուտակման տեմպ վերցնել նորմալ կուտակումը:

Այսքանն ընդամենը՝ երկու պահպանում պ/վ-թյունից և երկու գործողություն ր/վ-թյան մեջ: Ընդ որում երկրորդ պահանջը չունի կառուցողական նշանակություն, այլ զուտ պայմանական պարզից ր/վ-թյան անցնելու համար: Մնում են երեք կանոն

- 1) անփոփոխ օրգանական կազմ - I:II=2:1; C:V:M=4:1:1,
- 2) ավելադիր հավելյալ արժեք - M', կամ M+μ և
- 3) կուտակման նորմալ տեմպ - Mμ:M = K:K':

Սովետական խոշոր տնտեսագետ է.Բրեզևեյր գրում է.

“Եթե պ/վ-թյան հիմնական օրենքը՝ բաժինների միջև I (v+m) = IIc հավասարությունն է, ապա ր/վ-թյան հիմնական օրենքը՝ բաժինների միջև I (v+m) > IIc անհավասարությունն է”⁴¹:

Թ.Ավդալբեգյանի մեթոդով վերանում են նախկին բոլոր օրենքները և՛ Բրեզևեյրի հավասարության ու անհավասարության օրենքը, և՛ Լենինի կապիտալամասերի համամասնության փոփոխման սկզբունքը: Ընդհակառակը՝ նորաստեղծ երկու սխեմաներում գործում և մարքսիստ արդյունքների է հասցնում մեկ - միասնական կոնստրուկցիաների մեխանիզմն, ուստի գործում է հակառակ օրենքը:

Նոր հիմնական սխեմաները պահանջում են նոր գլխավոր օրենք և այն ասում է:

Հ ա մ ը ն դ հ ա ն ու ի ռ , հ ա վ ա ս ր ա չ ա փ ,
 հ ա վ ա ս ր ա լ ա թ ու ն , հ ա մ ա կ ո դ մ ա ն ի ,
 ա ն պ ա կ ս ո թ դ կ ու տ ա կ ու մ ը
 դ ա բ ա ժ ի ն ն եր ու մ ու ե ն թ ա բ ա ժ ի ն ն եր ու մ
 մ ի ն ն ու յ ն կ ո ն ս տ թ ու կ ց ի ա ն եր ի ,
 ա վ է լ ա դ ի թ հ ա վ է լ յ ա լ ա թ ժ ե ք ի , ու
 կ ու տ ա կ մ ա ն ն ո թ մ ա լ տ ե մ պ ի ա թ դ յ ու ն ք է :

Սա ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՕՐԵՆՔՆ Է:

Սույն օրենքը, հետևանք լինելուց բացի, կրում է հզոր վերլուծական ֆունկցիա: Բանից պարզվում է, որ այն հնարավորություն է ընձևում պարզորոշ ու ակնառու պատկերացում տալու ր/վ-թյան բոլոր այն դեպքերի ու սխեմաների մասին, կրք տեղի են ունենում բազմաթիվ շեղումներ հնգանիստ կուտակումից: Այս նույն օրենքը գիտական ճշգրտությամբ բացահայտում է թե այդ շեղումները վերոհիշյալ ո՞ր պայմանների փոփոխման հետևանք են: Նորաստեղծ սխեմաներն անվանվում են հիմնական,

⁴¹ Э.Я.Брегель, Воспроизводство общественного капитала, Москва, 1962, стр. 22:

որովհետև ներկայացնում են այն մայրուղին, որով ընթանում է ողջ հասարակական պրոցեսը և որից են ճյուղավորվում բազմաթիվ ուղիներն ու նրբանցքները:

«Որոշ ժամանակաշրջաններում, -ասում է Մարքսը,-մերթ ամբողջովին սպառվում է, մերթ էլ ամբողջովին կապիտալացվում: Եթե վերցնում ենք շարժումը միջին հաշվով - իսկ *ընդհանրական ֆորմուլան կարող է լուրջ այս միջինը ներկայացնել* - ապա տեղի է ունենում երկուսն էլ»⁴²:

Ավիայրեզյանի կազմած նոր հիմնական սխեմաները հենց այս խոսքի գործուն նախադժերն են, այդ ընդհանրական միջինը, երբ տեղի են ունենում ն' սպառում, ե' կուտակում: Մառակ միջինն է մանրակրկիտ ու ճշգրտված տեսքով: Մնացած ոչ-միջինին, այսինքն՝ լրացուցիչ կամ օժանդակ ձևերին, Ավիայրեզյանն անդրադառնալու էր հետագա ակնարկներում:

Բա՛յց...

Ասում են թե կատարելագործումը սահման չունի, բայց առավել կատարելություն այլևս դժվար է պատկերացնել, էլ տեղ չկա: Մարքսիստական ուսմունքի ո՞ր թևորիան է հասցրված այսօրինակ կատարելության որքան վերաբաղություն թևորիան Թադեոս Ավիայրեզյանի շնորհիվ, դժվարանում ենք ասել: Պատկերացնելու համար այս ասպարեզում նրա ներդրումը, պետք է հիշենք, որ

1) Մարքսը կազմել էր պ/վ-թյան երկու սխեմա առանց ոսկու արտադրության՝

Ավիայրեզյանը կազմեց պ/վ-թյան նույնպես երկու սխեմա ոսկու արտադրությամբ հանդերձ:

2) Մարքսը կազմել էր ր/վ-թյան երկու սխեմա փոփոխված օրգանական կազմերով՝

Ավիայրեզյանը կազմեց ր/վ-թյան երկու սխեմա միևնույն օրգանական կազմով և դուրս բերեց ր/վ-թյան *զլխավոր օրենքը*:

3) Մարքսը չի կազմել պ/վ-թյան շրջանառության սխեմա՝

Ավիայրեզյանը կազմել է պ/վ-թյան շրջանառության ութ սխեմատիկ աղյուսակներ: Վերջապես

4) Մարքսը չի կազմել սոցիալիստական տնտեսության սխեմա՝

Ավիայրեզյանը կազմեց սոցիալիստական տնտեսության պ/վ-թյան ծավալուն սխեմատիկ աղյուսակ:

⁴² *Կ. Մարքս*, Կապիտալ, հ. II, Երևան, 1935, էջ 52:

Ընդ որում Ավիայրեզյանի ներդրածն ամենուր «զլխավոր», «ծավալուն» ու «հիմնական» են՝ ավելի ճշգրտված ու կանոնավոր, քան «Կապիտալի» անավարտ էջերում է: Ցավոք նա չհասցրեց «Ոսկին ր/վ-թյան սխեմաներում», «Շրջանառության ծախսերն ր/վ-թյան սխեմաներում», մուտիպլիկատիվ ու օրգանական տարբերակազմ սխեմաներ նախագծել, որոնցով ստեղծվելու էր վերաբաղություն ավարտուն մարքսիստական թևորիան⁴³:

Ափսո՛ս:

«Եթե արժևրի թևորիան քաղաքատնտեսության պատվանդանն է, -գրել է Ավիայրեզյանն,-ապա վերաբաղություն անսությունը նրա դափնեպսակն է»⁴⁴:

Գրանիտ պատվանդանի վրա, դափնե փառապսակն ուսերին, բարձր կանգնած է արժևրի տնտեսության ստեղծող ու վերաբաղություն թևորիայի հիմնադիր

Կ Ա Ր Լ Մ Ա Ր Զ Ս Ը:

Թ Ա Դ Ե Ո Ս Ա Վ Դ Ա Լ Ե Գ Յ Ա Ն Ը
դափնեկիր է:

Վերջում պետք է հիշեցնենք, որ «Վերաբաղություն թևորիայի» ստեղծումն ընդհուպ նախորդել էր «Կապիտալի» թարգմանությանն ու կրկնենք:

«Մեծ եղավ իբրև թարգմանիչ, որովհետև մեծագույն էր իբրև տնտեսագետ»

«Կապիտալի» հատորների թարգմանություններին հաջորդել էին...

⁴³ Այդ ծրարի իրականացման արթիվ Ավիայրեզյանը գրել է.

«Несомненно, в этом деле колоссальную роль играло бы издание всех рукописей Карла Маркса, трактующих вопросы теории воспроизводства с разных сторон. Известно, что III отдел II тома «Капитала» («Воспроизводство и обращение всего общественного капитала») составлен Энгельсом только из частей рукописей II и VIII. ... При редактировании II тома «Капитала», разумеется, не имело смысла, а потому и Энгельс не мог дать место всем отрывкам из рукописей, касающимся теории воспроизводства. Но в отдельном сборнике материалов это возможно, целесообразно и теперь крайне необходимо. Если бы Институт К. Маркса и Ф. Энгельса взял бы на себя издание такого академического сборника, то это было бы неосценимой заслугой перед наукою вообще и перед марксизмом в частности».

Խորհրդային տնտեսաաղյուսակն մեջ Ավիայրեզյանն առաջինն էր, որ շեշտել էր այդ ձևագրերի հրատարակման անհրաժեշտությունը, որոնք ցավոք սրտի լույս տեսան 1939 թվականին, Ավիայրեզյանի ձևարակալությունն ինչ հետո:

⁴⁴ *Тад. Абдалбеги* Основные гипотетические схемы ... стр. 3, Предисловие.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թ.Ավդալբեգյանը հայ միջնադարյան պատմիչների և գրիչների նման ավանդական սովորությունն է ունեցել յուրաքանչյուր նշանակալից գործ ավարտելուց հետո հիշատակագրություն թողնելու՝ այնտեղ նշելով գործի ավարտման ամիս – ամսաթիվը, տեղը և դրան առնչվող այլ տեղեկություններ, նույնիսկ անձնական բնույթի որոշ մանրամասներ: Բնականաբար և առավել ևս այդպես պետք է լիներ պատմական այնպիսի նշանավոր իրադարձության առթիվ, որպիսին է «Կապիտալի» հայերեն թարգմանությունը: Յուրաքանչյուր հատորի թարգմանության և այլ աշխատանքների մասին թարգմանիչը թողել է հիշատակագրություններ, որոնց ուսումնասիրություններն անչափ հետաքրքրական են, բովանդակությամբ հարուստ ու նշանակալից:

Կարդանք մեզ հասած հիշատակագրությունները հատորների հաջորդականությամբ:

Հատոր I

«Մարտի 9 -ին: Յերևկվա ժամր 1-ին, 1933թ.»

Թաղ. Ավդալբեգյան:

Չյուն էր եկել: Փող էլ չունեինք: Ուռուռ՛»:

• • •

«« Կապիտալի» I հատորի հայերեն թարգմանության վերջին մամուլի սրբագրությունն ավարտեցի 1933 թվականի հուլիսի 3-ին, ցերեկվա ժամի 1-ին:

Թաղ. Ավդալբեգյան»:

Հատոր II

«Ապրիլի» II հատորի թարգմանությունն ավարտեցի 1936թ. հունիսի 16-ին, առավոտյան ժամի 7-ին, Երևան, Լիբկնեխտի №20:

Թաղ. Ավդալբեգյան»:

• • •

«Ապրիլի» II հատորի ամբողջ թարգմանությունը, առաջարանն էլ հետք, վերջացրի 1936 թվականի հունիսի 29-ին, ցերեկվա ժամի 1-ին, Երևանում:

Թաղ. Ավդալբեգյան»:

• • •

«Ապրիլի» Լրկրորդ հատորի հայերեն թարգմանության վերահսկչական սրբազրույթու նր վերջացրի 1936 թվականի, նոյեմբերի 2-ին, ցերեկվա ժամի 3-ին: Ուտոա՛, ուտոա՛, ուտոա՛:

Թաղ. Ավդալբեգյան
2/XI, 1936, Երևան»:

Հատոր III₁

«I-IX գլուխների թարգմ. ավարտել եմ 1934թ. մայիսի 6-ին 7 Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին հանձնել ն.թ. մայիսի 10-ին»:

• • •

«Կարլ Մարքսի «Ապրիլի» III₁ հատորի X-XVIII գլուխների իմ այս թարգմանությունը (ձևագիր էջ 437-644) Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին հանձնել եմ 1934թ. սեպտեմբերի 7-ին, Երևանում:

Թաղ. Ավդալբեգյան»:

«Ապրիլի» III₁ հատորի բնագրի թարգմանությունը վերջացրի 1935թ. հունվարի 19-ին, Լրկկոյան ժ. 6-ին: Բնչպես I հատորի, այնպես և այս հատորի թարգմանությունը վերջացնելիս կոպեկ չկար ձևոյս ոչ իբրև գնելամիջոց ու ոչ իբրև վճարամիջոց: Շն՛ն մնա Մարքսը:

Թաղ. Ավդալբեգյան»:

Հատոր III₂

«Մարքսի «Ապրիլի» հայերեն թարգմանողի հիշատակագրությունը:

Հանրօգուտ մի նշանավոր նպատակակետի հասնողի ուրախությամբ գրանցում եմ, որ այսօր՝ 1937 թվականի հուլիսի 10-ին, առավոտյան ժամը 7-ին ու 20 րոպեին թարգմանեցի պրծա «Ապրիլի» վերջին գրքի ամենավերջին Լրկար:

Այսպիսով ահա, իմ համեստ ու ժերով ավարտված է Կարլ Մարքսի «Ապրիլի» բոլոր՝ I, II, III₁, ու III₂ հատորների ամբողջական թարգմանությունը, որ սկսել էի 1931 թվականի հոկտեմբեր - նոյեմբերից:

Исполнен долг!

Լիառույս եմ, որ ոչ միայն նորահաս ու վերահաս բունդներն այլև հասուն ժամանակակիցներն քստարժանվույն կգնահատեն իմ այս բոլորանվեր մասնակցությունն աշխատավոր մարդկության ազատագրման մեծ գործին:

Թաղ. Ավդալբեգյան

1937թ. հուլիսի 10-ին
Երևան, Լիբկնեխտի փ. №20»

Բացի վերոբերյալ հիշատակագրություններից թարգմանության ձևագրում տեղեկություններ են պահպանվել II և III₁ հատորների հետ կապված այլ աշխատանքների մասին, որոնցով ստացվում է հետևյալ ժամանակագրական պատկերը:

«Կապիտալ»

1931թ. հոկտեմբեր-նոյեմբերից - 1933թ. մարտի 9-ը թարգմանել է I հատորը:

1933թ. հուլիսի 3-ին ավարտել է I հատորի սրբագրությունը:

1934թ. փետրվարի 1-ից - 1935թ. հունվարի 9-ը թարգմանել է III₁ հատորը:

1935թ. մարտի 2-ից - 1936թ. հունիսի 29-ը թարգմանել է II հատորը:

1936թ. նոյեմբերի 2-ին - ավարտել է II հատորի վերահսկչական սրբագրությունը:

1937թ. հուլիսի 10-ին - ավարտել է III₂ հատորի և այսպիսով ամբողջական «Կապիտալի» հայերեն թարգմանությունը:

Ինչպես տեսնում ենք «Կապիտալի» հատորների թարգմանության ու հրատարակության հաջորդականությունները տարրեր են: Առաջին հատորի թարգմանությանն անմիջապես հաջորդել է III₁ գրքի թարգմանությունը, որ պատրաստ վիճակում մնացել է չհրատարակված մինչև II հատորի թարգմանության ու հրատարակության ավարտը: Հետագայում այս հաջորդականությունն ու ժամանակի կորուստը ճակատագրական են եղել ամբողջական «Կապիտալի» համար:

Ահա, թե ինչու:

Հիշատակագրություններից պարզվում է, որ Թ.Ավդալբեգյանը եղել է «Կապիտալի» ոչ միայն թարգմանիչն, այլև ուրիշ աշխատանքներ իրականացնողը և բնդհանրապես առաջին երկու հատորները հրատարակվել են նրա անմիջական հսկողությամբ, որով մեծապես պայմանավորված է սրանց հրատարակչական օրինակելի մակարդակը: Այդպիսին կարող էր լինել առնվազն նաև III₁ գիրքը, եթե մեկ տարի ու շորս ամիս շարունակ մատնված չլիներ անգործության, որից հետո...

Թ.Ավդալբեգյանին վիճակված չի եղել մասնակցելու III հատորի հրատարակչական աշխատանքներին և բնդհանրապես «Կապիտալը» իր թարգմանությամբ, հայերեն ամբողջությամբ տպագրված տեսնելու բախտին արժանանալու: Վերջին երկու գրքերը լույս են տեսել նրա եղերական մահից 10-12 տարի անց՝ 1947, 1949 թվականներին, բավական խորհրդավոր պայմաններում: Իրենց խմբագրական ու հրատարակչական ցուցանիշներով սրանք կատարյալ խոտան են առաջին հատորների կտալո-

նային որակի համեմատությամբ: Այդ իմաստով բարեբախտություն է, որ III₁ գրքի վերջում կարդում ենք.

“Քերմաներեն թարգմանությունը *խմբագրեց* պրոֆ.

Տ.Ազատյանը”:

III₂ գիրքը խոտանողի անունն առայժմ անհայտ է: Դա ցավալի իրողություն է: Հնարավոր և հավանական է, որ նա Ե.Տեր-Մինասյանն է:

Ի՞նչ ենք իմանում հիշատակագրությունների տեքստերից:

Առաջինը, որ նկատելի է այստեղ՝ հատորից-հատոր աճող ոգևորությունն է և համապատասխանաբար հիշատակագրությունների բովանդակության հարստացումը: Որքան գործը մոտենում է ավարտին, այնքան ասելիքն անձնական օրագրային բնույթից վեր է ամփում հասարակական և պատմական նշանակության փաստաթղթի: Որքան գործը մոտենում է նվիրական ավարտակետին, հետևում թողնելով մեծացող ծավալն, այնքան ավելի լայն է դառնում շոշափվող հարցերի դիապագոնն ու կարևորվում մանրամասների նշանակությունը:

Սրա հետ մեկտեղ բնականաբար ինքնաճում և ամրապնդվում է թարգմանչի սեփական անձի նշանակալիության գիտակցությունը: Գործի մեծացմանը համընթաց հոգեբանորեն մեծանում է իր ևսի պատմականության աստիճանը, մեծացնելով նաև խոսքի պատասխանատվությունն ու հեղինակությունը: Մաբացատրելի է, որովհետև որքան էլ գնահատելի է «Կապիտալի» I հատորի թարգմանիչ լինելն, այդպիսիք համեմատաբար շատ են եղել, միանգամայն այլ բան է ամբողջական «Կապիտալի» թարգմանչի գիտակցման զգացողությունը, որ երկուսից մեկն է աշխարհում՝ Լզակիներից է:

Ժամանակագրական հաջորդականությամբ թարգմանված I և III₁ հատորների թարգմանության հիշատակագրություններից երկուսում էլ միալար ենչում է անփողոյան մոտիվը և այն էլ իսպառ անկուպկե գոյությունը: Հետևաբար 1931-ի մոտավորապես հոկտեմբերից մինչև 1935-ի հունվարը ապրուստի միջոցների հայթայթումը եղել է թարգմանչի լուրջ մտահոգության առարկա, մանավանդ եթե այդ մասին հետևողականորեն խոսվում է տարիների հեռավորությամբ բաժանված գրանցումներում: Ընդ որում լոկ անփողոյան մասին կարող էր ասվել մեկուսի և այդքանով սպառել ասելիքը, բայց երկու դեպքում էլ սրանք ուղեկցվում են այլ մանրամասների արձանագրումով: Թվում է, թե ի՞նչ կապ ունեն մարտի 9-ին դրսույմ ձյուն գալն ու

գրպանում փող չունենալը, կամ ի՞նչ իմաստ՝ ձեռքին կոպեկ չլինելն ու «գնելամիջոց», «վճարամիջոց» տերմինների հիշատակումը:

Երկուսն էլ ունեն անմիջականորեն փոխադարձ կապ:

Չյուն էր եկել, փող էլ չունեին, որ վառելիք գնեին և ինքն ու բնտանիքը ցրտից պատսպարվեին:

Ձեռքին կոպեկ չկար իբրև գնելամիջոց հանապազօրյա հաց գնելու համար ու իբրև վճարամիջոց նախկին պարտքերից վճարահատույց լինելու կամ հետագա ծախսումների կանխավճար տալու համար:

Ուշագրավ է, որ հետագա հիշատակագրություններում այս մասին այլևս ոչ մի խոսք չի ասվում և կարող է տպավորություն ստեղծվել հարցը կարգավորված լինելու հետևանքով: Ո՛չ, ամենևին: Ընդհակառակը՝ «Կապիտալի» ամբողջական թարգմանությունն ավարտելու վերջին օրը՝ 1937 թվականի հուլիսի 10-ին, Կուսերատի վարչությանն ուղղված գրության մեջ կարդում ենք.

... «Այս առթիվ *նորից* խնդրում եմ՝ կարգադրեք, որ II ու III հատորների համար ստացածն հոնորարի հաշիվը փակվի I հատորի համեմատությամբ *չիջնող* դրույթով»:

Եթե I հատորի չիջնցված դրույթով փողն այնքան չի հերիքել, որ գործն ավարտելիս «ձեռքին կոպեկ չի եղել», ապա որքա՞ն ավելի ծանր կլինեք իջնցված դրույթով աշխատած տարիների դրույթունը:

Մի խոսքով՝ «Կապիտալի» թարգմանությունը նրան նյութապես չի ապահովել:

Բայց չէ՞ որ I հատորն ավարտելուց և անկոպեկ մնալուց, III, հատորն ավարտելուց ու անտիպ մնալուց, վերջապես դրույթի իջնցումից և այլ դեպքերից հետո, նա կարող էր հանգիստ խղճով ձեռք բաշկլ այս գործից և գրադվել մի համեմատաբար եկամտաբեր աշխատանքով:

Թ.Ավդալբեգյանն այդպես չի վարվել և գործը հասցվել է ավարտին: Նշանակում է ստանձնած աշխատանքն իր համար եկամտի աղբյուր չի ծառայել, հետևաբար գերխնդիրը գործի գաղափարական կողմն է եղել, որ չեզոքացրել, փաստորեն չեղյալ է դարձրել նյութական անապահով գոյության հանգամանքը:

Այս կողմից ի՞նչ ակնկալիքներ կարող էին լինել:

Առավել ևս՝ ոչ մի, հատկապես այդ ժամանակահատվածում՝ 1931-1935թթ. կատարված մի նշանավոր դեպքից հետո, որ-

տեղ Թ.Ավդալբեգյանը սեփական մաշկի վրա էր զգացել դարաշրջանի բարբերը:

Այդ մասին պետք է հատուկ պատմել:

1924 թվականի մարտի 12-ին Թ.Ավդալբեգյանը Հայաստանի հեղկոմի նախկին նախագահ, իսկ այդ ժամանակ Անդրկովկասի կոմունիստական համալսարանի ռեկտոր Ս.Կասյանից հանձնարարական է ստանում բնագրից թարգմանել Կ.Մարքսի «Քաղաքատնտեսության բննադատության շուրջը» («Zur Kritik der politischen Oekonomie») և «Քաղաքատնտեսության բննադատության ներածությունը» («Einleitung zu einer Kritik der politischen Oekonomie») հոշակավոր աշխատությունները: Ավդալբեգյանը հոծարական ստանձնում է հանձնարարությունը և 1925 թվականի սեպտեմբերի 19-ին թարգմանության ձեռագիրը պատրաստ վիճակում ուղարկում է Թիֆլիս՝ Ս.Կասյանի քարտուղար Գ.Մելոյանին:

Այստեղից գործն անհայտանում է:

Ութ տարի անց՝ 1933 թվականին «Zur Kritik...»-ն անակրնկալ լույս է տեսնում հայերեն «Գերմաներենից թարգմանեց Թ.Ավդալբեգյանը» և «խմբագիր Ս.Կասյան» հայտարարություններով, վերջինիս գրած խիստ բացասական առաջարկով թարգմանության ու թարգմանչի հասցեին, որ բոլորովին անսպասելի էր թարգմանության բնթացքում բազմիցս արտահայտած գովասանական ու նույնիսկ հիացական գնահատականներից հետո:

Այսպիսի շրջադարձից հանկարծակիի եկած, Ավդալբեգյանն իսկույն ծանոթանալով հրատարակության հետ, սարսափով հայտնաբերում է, որ իր անունով հրատարակված գիրքն իր թարգմանությունը չէ բնավ, այլ սրանից բացահայտորեն արտագրված ու բացահայտորեն աղճատված մի այլանդակություն, որն իր որակով լիուլի համապատասխանում է Ս.Կասյանի գնահատականին:

Տևտաբրրական է, որ Ավդալբեգյանի թարգմանությունը տեղ էր պահաս բան մեկուկես տարի, իսկ աղավաղումն՝ ավելի քան... յոթ:

Ավդալբեգյանն անհապաղ դիմում է Հայաստանի հանրապետության ղեկավար մարմիններին՝ ՀԿԿ(բ) կենտկոմի քարտուղար Ա.Խանջյանին, ՀՍԽՍ Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին, Կուսերատի նախագահությանը և այլուր հրատարակությունը որակելով իբրև «սկանդալ, որն անհնարին է անարձագանք թողնել», նա խնդրում է ամեն գնով, թեկուզ մի դոնփակ

ժողովում, իրեն թույլատրելի զեկուցումով հանդես գալ և տպագրված գիրքը համեմատել իր ձևագրի հետ, որն ուղարկված է Ս.Կասյանին և, որը հետևողականորեն թարգմանում է այն:

Բոլոր դիմումները հանրապետության ներսում դեմ են ասում քար թուրջան՝ ոչ զեկուցում, ոչ համեմատում, իսկ սկանդալն ամագորգոռ աղմուկով արձագանքվում է կենտրոնական մամուլում: «Литература национальностей СССР» պարբերահանդեսի 1934թ. №1-ում, դատափետոդ բննադականով հանդես է գալիս Տոփսևի Կուսիկյանը, որն Ավդալբեգյանի նկատմամբ հնուց պահած վրեժը սրտում՝, այժմ առիթը բաց չի թողնում աշխարհով մեկ հայտարարելու, թե թարգմանիչը նպատակադրվածորեն «*օգտվել է «Քաղաքատնտեսության...» կոպիտ աղճատումներով հանրահայտ թարգմանությունից*», որ կատարել է Աուրիերը: Այդ գրախոսության հիման վրա պարբերահանդեսի խմբագրությունն առաջնորդող հոդվածում պաշտոնականորեն հայտարարում է, թե, «*թարգմանիչը... հիմնովին խեղաթուրել է Մարքսի մտքերը*» և կայացնում է վերջնական վճիռը. «*Մարքսիզմի պրոպագանդման գործում, «Zur Kritik...»-ի հայերեն հրատարակությունը՝ դասակարգային թշնամու, ... ոչ վաղ անցյալում Կաուցկու և Աուրիերի գինակրոցի... հանդես գալու, ծայրաստիճան խրատական օրինակ է*»:

Այս ծանրաձանր գրադարտության դեմ Ավդալբեգյանի ցատումնալից բողոքները բոլոր հասցեներով ուղղված՝ «Պրավդայի» և «Литература национальностей СССР» հանդեսի խմբագրություններին, կենտրոնական Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին, դարձյալ մնում են անարձագանք և այդպես էլ անհաղորդ մնացին բոլորը մինչև վերջ:

Բոլոր մակարդակներով և մասշտաբներով ի ցույց դրվեց հայերեն հրատարակությունն ու հայ թարգմանիչը:

Օրինականացվեց Ավդալբեգյանի մեղսագործությունը²:

Պատմությունն իր խոր կենձիռներում թաղեց այս նողկալի պատմության ևղկությունը, հրապարակում թողնելով այլանդակված «Zur Kritik...»-ն ու Թ.Ավդալբեգյանին դրա թարգմանիչ հորջորջվելու ամոթանքը:

Այսօր շատ հեշտ է համոզվել, որ միննույն՝ 1933-ին հրատարակված «Zur Kritik...»-ի³ և «Կապիտալի» I հատորի թարգմանիչը չէր կարող նույն մարդը լինել, այն էլ Ավդալբեգյանը տնտեսագիտական և թարգմանական այսպիսի հակապատկերներ չէր կարող ստեղծել:

Նախապես ասենք, որ սա վերջին հարվածը չէր, որ Ավդալբեգյանին վիճակված էր կրել կյանքում: Մա ամենաստորն էր, բայց դեռևս ամենածանր չէր: Այդպիսին դեռ առջևում էր:

Թեև մեր նպատակից դուրս է այստեղ հետաքննել, թե ո՞վ է հրատարակված «Zur Kritik...»-ի «հեղինակը» նշենք միայն, որ դրա կազմակերպողն է ևղկ ամենագոր Ս.Կասյանը:

Թ.Ավդալբեգյանի արխիվում պահվող «Zur Kritik...»-ի մտքագրի ու Գ.Մելոյանի նամակների ձևագրերի նույնությունը կասկածահարույց է, բայց չի բացառվում, որ վերջինս Կուսիերտի պահանջը բավարարելու՝ Ավդալբեգյանի ձևագիրը վերադարձնելու նպատակով, արտագրած լինի հետագայում, արդեն հրատարակված գրքից և ուղարկված լինի Ավդալբեգյանին:

Այստեղ խնդիրն այլ է:

Եթե բարոյապես թույլատրելի էր անդառնալի կորստյան մատնել Ավդալբեգյանի ինքնագիրն, ապա շատ ավելի գերադասելի էր նրա թարգմանությունը հրատարակել Գ.Մելոյանի կամ մեկ ուրիշի անունով և դրան կցել խմբագրի դրվատական առաջարանը: Դա, թեև կլիներ նույնքան անագնիվ արարք անհատապես Ավդալբեգյանի նկատմամբ, բայց ազգանվեր գործ՝ գիտական պատշաճ մակարդակով օժտված որակյալ թարգմանություն, որով պետք է կրթվեր հայ հասարակագիտական միտքը:

Գերադասելի էր հրատարակել նույնիսկ առանց որևէ անվան հիշատակման, ինչպես հետագայում Զաքարիա Ազուլցու «Առևտրամատյանի» և Արրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն» գրքերի հայերեն և ռուսերեն հրատարակությունները, որոնք լույս տեսան Ավդալբեգյանի ձևաբաղաձևովուց հետո, առանց բնագրերը վերծանող հեղինակի հիշատակման:

Վերջապես՝ կարելի էր բնդհանրապես չհրատարակել և Կասյանն իրեն խմբագիր, մանավանդ իր վարչական իրավունքներով, հեշտությամբ կարող էր այդ անել:

¹1923թ. «Օտրք» հանդեսի №2-ում Թ.Ավդալբեգյանը հետևյալ խոսքերով է ամփոփել Կ.Կասյանի «Կարգ Մարքսի տնտեսական ուսումնը» գրքի հայերեն թարգմանության մասին գրախոսականը: «Նեղը է ինչպե՛ր մամուլանոց հայ ընթերցողին և... չմատուցել նրան այնպիսի բարորարական խորոխներ, որպիսին «ուր անմեղությանը» պատրաստել են... թարգմանիչ (?) Ա.Պիլնկիցյանն ու խմբագրող(???) Տ.Կուսիկյանը» (ընդգծում մեր մերն է: - Ա.Մ.):

² Տե՛ս սույն գրքի «Համակված»-ում «Zur Kritik...»-ի տխուր պատմությունը՝ դրվագը էջ 174

³ «Zur Kritik...»-ի վրա նշված 1932 թվականը կեղծիք է, քանի որ գիրքը ստորագրված է տարբերությամբ 1933թ. հունիսի 25-ին, սու վերջապակի վրա նշված է «Паризадат, Эривань, 1933» և սկզբում «Լույս է տեսնում Կարգ Մարքսի մտածանքի հիմնարկ տարեդարձի աթոթով (1883, III, 14-1933, III, 14)»:

Բայց Ավդայրեզյանին խորտակելու մոլուցքը վեր է եղել բոլոր գերադասելի տարրերակներից և կատարվել է վատթարագույնը, բուժմերանգով հուժկու հարված հասցնելով առաջին հերթին Կասյանին:

Ահա թե ինչպես:

Հանուն պլեխանովական-մենշևիկ Ավդայրեզյանին վարկարկելու, նպատակադրվածորեն փչացվել է Կ.Մարքսի հոյակապ գործը: Ուրեմն ո՞վ է *հավատարիմ մարքսիստը*:

Միանձնյա Ավդայրեզյանին անարգելու նպատակով տասնյակ հազարավոր հայ բնթերցողներին և ապագա սերունդներին է մշտապես հանձնված հակազիտական պատկերը: Ուստի ո՞վ է *ժողովրդին վնաս հասցնողը և շատ ավելին*:

Հրատարակության գիտական մակարդակի պատասխանատու խմբագիրը, թարգմանությունը վիժեցնելով ու այլանդակությունը հրապարակելով չի բավարարվել և գրքի 6000 օրինակ տպագրվելուց հետո, հաջորդ 4000 օրինակներին հապշտապ կցմցել է խմբագրի ինքնապահովագրման առաջաբանը, որով գիտական խոտանին գումարվել է *հրատարակչական կուրյորը*⁴ 10 000 տպարանակի 6000-ն առանց առաջաբանի՝ 4000-ն առաջաբանով:

Համատարած տուժել են բոլորը՝ շահել է միմիայն «քաղաքականապես աշաուրը» խմբագիրը: Այն ժամանակ թշնամի հայտնաբերելն ու մերկացնելը մեծ ծառայություն է համարվել և բարձր գնահատականի արժանացել: Բայց *ո՞վ է մերկացվեք* Ավդայրեզյանին մեղադրել են Ռուբինի հետ գինակցության մեջ, որի թարգմանությունից, անզգույշ խոստովանությամբ, օգտվել է Կասյանը⁵, իսկ Ավդայրեզյանը նրա «Теория стоимости Карла Маркса», սենսացիա առաջացրած գիրքը, հրապարակավ ծաղրի է ենթարկել⁶, հեղինակին այլ առիթով որակելով «ներքինի խառտակ»⁶: Այս պարագաներում ո՞վ է *գինակիցն* ու ո՞վ *հակառակորդը*: Կամ Կաուցկին, որի խմբագրած «ժողովրդական» «Կապիտալը» մերժելով և հակառակ շատ երկիրներում դրա մեծ բնդունելությունը, Ավդայրեզյանը ստանձնել է Էնգելսի գիտական խմբագրություն, ավելի բարդ, թարգմանության ծանրությունը:

⁴ Տե՛ս *Կ.Մարքս*, Բաղարատնականության քննադատության շուրջ, Երևան, 1932, Խմբագրի առաջաբանը, էջ V, ինչպես նաև սույն գրքում «Привада» թերթին ուղղված դիմումի 4-րդ կետը, էջ 186:

⁵ Տե՛ս «Նորք», 1925թ., գիրք V-VI, էջ 380-383

⁶ Տե՛ս *Թադ. Ավդայրեզյան*, Կարլ Մարքսի տնտեսական գաղափարների թեորիան, Բ. տպ., Երևան, 1926, էջ 157-158, տողատակի ծանոթագրությունը

Ահա, այսքանից հետո ու՞մ են վերաբերում Ավդայրեզյանին ուղղված լուտանքներն ու մեղադրանքները: Ո՞վ է պատասխանատու պատմության առջև:

Բոլոր ցուցանիշներով ականատես ենք *ավագակ գաղափարականություն* կարկառուն օրինակի, որի բնութագրությունը գտնում ենք Ավդայրեզյանի «Առաջին գաղափարական ավագակր հայոց մեջ» հոդվածի նախաբանում:

Ի՞նչ բան է դա:

«Պետք է տարբերել գաղափարական ավագակին ավագակ գաղափարականից,- գրում է Ավդայրեզյանը:

Ավագակ գաղափարականը ձևանում է, թե ծառայում է գաղափարին, մինչդեռ իրոք սոսկ կողոպտիչ է: Նա իդեալի դասալիքն է՝ վարագուրված կեղծ բարեմասնություններով, ծայրահեղ եսասեր ու հնարագետ ճիզվիտ՝ բազմազան կերպարանափոխություններով:

Գաղափարական ավագակն, բնդհակառակը, խանգարում է հասարակական անդորրությունը և ռտնատակ տալիս տիրող օրենքները գաղափարական նպատակով: Այս տիպն իդեալի մարտիկն է, թեև կոճի ու բողոքի ժամանակակից ձևերին չի հետևում. սա գործում է լոկ այլափրությունից դրդված և հանդես գուլիս իբրև ասպետ առանց վարագուրվելու»⁷:

Գաղափարական ավագակներ՝ Յուրի Գետոշկինը «Ձգուշացի ավտոմեքենայից» ֆիլմից, Ռուբին Հուդն ու Ավդայրեզյանի հոդվածի հերոս Մերկե Կուլաբի Տեր-Մարտիրոսի հազվագյուտ են, որոնք կողոպտել են հարուստներին՝ ավարը բաժանելով ադրատներին իրենց ոչինչ չթողնելով և իդեալի պատկերման առավելապես գեղարվեստական ֆանտազիայի արգասիք են, բան իրական են պատմականորեն:

Այնինչ ավագակ գաղափարականության օրինակները բազմաթիվ են և պատմական հանրահայտ դեմքեր են:

Կասյանի այս բազմաբայ ներքնագործության մոտիվները քաղաքականությունից բացի, թանձրացած էին պատմական մի նշանավոր իրողության պատճառով ևս, որ նույնպես պետք է վերջապես հրապարակել:

«Կապիտալի» առաջին հատորի հայերեն հրատարակության առաջաբանում հիշատակվում են հայերեն թարգմանու-

⁷ *Թ. Ավդայրեզյան*, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 212:

թյան նախորդ փորձերը, սկսած 1906 թվականի անդրանիկ փորձից և նշվում է Ավետիք Արասխանյանի անունը:

«...Տայաստանի Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտը միջոցներ ձեռք առավ... գտնելու համար թարգմանության ձևագիրը, բայց այդ փորձերը հաջողությամբ չպսակվեցին:

«Կապիտալի» Երկրորդ փորձը վերաբերում է 1922-24 թվականներին: Որքան էլ հեռու չէ մեզնից այդ ժամանակաշրջանը, այնուամենայնիվ, մենք... հնարավորություն չունենք բացատրելու այստեղ նաև այս երկրորդ փորձի անհաջողության պատճառը»⁵:

Եթե Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտը շահագրգռված է եղել հայտնաբերել Արասխանյանի ձևագիրն, ապա ինչու՞ չի որոնել, չի պարզել ժամանակով ավելի մոտ թարգմանության անհաջողության պատճառը և կարևորը՝ չի հիշատակվում փորձ անողի անունը:

Տասկանալի է, որ որոնել և պարզել է, բայց փորձ անողի անունն առանձնահատուկ պատճառով չի նշվել:

Ինչու՞: Ո՞վ է այդ ծպտյալը, որ կարողացել է թարցնել իր անունն ու կորստյան մատնել գործի եւտրերը:

Ձեռնակալն քաղաքականության հպարդկեր (табы) չի թույլատրել հայտարարել Մարգիս Կասյանի անունը: Այլ կարգավիճակի գործի անունը չէր թարցվի:

Միևնույն՝ 1924թ., Երբ վերջինս Երկու տարվա քաջաշուկաներից հետո թողնում է «Կապիտալի» թարգմանությունը, Ավդալբեգյանը ստանձնում և մեկ տարում՝ 1925թ., ավարտում է «Zur Kritik»-ը: «Կապիտալից» հրատարակելու հաջորդ տարում «Zur Kritik»-ի հայտնվելը մահացու հարված կհասցնեք Կասյանի հեղինակությանը: Անցուդարձերին տեղյակ մարդկանց միջավայրում ասելիք չէր դառնա՞ Գերմանիայի համալսարանների գիտության թեկնածուն Լեյբհադենի ճեմարանականի համեմատությամբ: Պատասխանը պարզ է և Կասյանն իր պաշտոնն ու վարչական ուժը գործադրել է ներթափանց մաղձը քրտնավատակ Ավդալբեգյանի վրա թափելու համար: Սկզբից տարիներ ի վեր անհայտացվել է Ավդալբեգյանի թարգմանությունն, իսկ 1929-ին Ռուբինի թարգմանության հայտնվելուց և մամուլում «կոպիտ աղճատումներով հանրահայտ թարգմանություն» ձևանալուց հետո, առիթն օգտագործվել է Ավդալբեգյանի թարգ-

մանությունն այդ թարգմանությունից «ծնկցնելու», «Ռուբինի զինակցի» *իրեղեն ապացույցների* ֆարքիկացիայի համար:

Նույն հպարդկեր շուրջ 70 տարի ապահովել է Կասյանի անձնանխելությունը և «Zur Kritik...»-ին առնչվող մեղադրանքներն առ այսօր մնացել են Ավդալբեգյանի վրա բարդված:

Եթե այդ սկանդալային «Zur Kritik...»-ն, իրոք, Ավդալբեգյանի թարգմանությունն էր, ապա ինչպե՞ս կոմունիստական համալսարանի ռեկտոր Ս.Կասյանը հանդուրժեց, որ «Կապիտալի» թարգմանությունը դարձյալ նրան հանձնվի և ոչ ավելի կարող մեկին կամ մի խմբի: Չէ՞, որ «Zur Kritik...»-ի ձևագիրը նախքան որևէ մեկին հայտնի դառնալն, իր ձևերին էր 1925 թվականից և նա փաստացիորեն կարող էր կառավարական մարմիններին, մասնավորապես Ա.Խանջյանին ապացուցել, որ Ավդալբեգյանը չէր ում հանձնարարելի է «Կապիտալի» հայացումը:

Այդպես չի արվել, որովհետև «Zur Kritik...»-ի աղճատված ձևագիրը դեռ պատրաստ չի եղել:

Ահա այս փաստի մեջ մասնակիորեն արտացոլվել է Ավդալբեգյանի նկատմամբ վարած պետական կուրսը՝ նրա մեջ մի կետում միավորելով մենշևիկի դեմ բաղադրական հարձակումների թիրախն ու արտաստվող ունակությունների նկատմամբ մարդկային սինդրոմների կախկենտությունը:

Այս հանգամանքը չպետք է անտեսել, որովհետև Ավդալբեգյանի նկատմամբ անհավատալի անարդարությունները կարող էին ծնվել միմիայն զուտ մարդկային արատավոր մղումների և պետական քաղաքականության համընկնումից:

Ավդալբեգյանն ի վերջո «մի վատ, կոշմարալին լուր» լսելով, որ ուզում են նոր թարգմանություն ձևոնարկեն, փորձել է փրկել իր ձևագիրը, բայց բանը բանից անցած է եղել⁶:

Ահա, այսպիսի հարվածից հետո էլ նա կանգ չի առել և չի երկյուղել հետագա անարգումներից: Ի՞նչ երաշխիք, որ «Zur Kritik...»-ի նման մի խաղ չեն խաղա նաև «Կապիտալի» գլխին: Խաղացին ավելի հրեշավոր խաղ, բարեբախտաբար հետմահու՝ խմբագրման պատրվակով վիթխարի հոնորարներ լափելով, իսկ նա ինչպես «Zur Kritik...»-ից առաջ չնայած «Չյուն էր եկել, փող էլ չունեին», բայց... «Ուռուտ», այնպես էլ դրանից հետո «կոպեկ չկար ձեռքին», բայց... «Շե՛ն մեա Մարքսը» այսինքն՝ գաղափարական գործը:

⁵ Ե.Մարքս, Կապիտալ, հ. 1, հայերեն հրատարակության առաջաբանը, էջ XV:

⁶ Տե՛ս 1932 թ. փետրվարի 6 - ին Կ.Մարաշյանին գրած նամակը, էջ 179:

Չի՞ հիշեցնում արդյոք մեր գրիչների ու պատմիչների խոսքը մագաղաթյա մատյաններում թողած կամ մեր ճգնակյացների վարքն ու բարքը:

Ոչ միայն հիշեցնում, այլև նույնն է ասվում:

Նույնն են ասում հին ու նոր դարաշրջանների, հին ու նոր գաղափարների, հնօրյա ու նորօրյա նվիրյալները և ոչ միայն խոսքն, այլև կերպարներն են նույնանում՝ գաղափարի հերոսներ:

Այս կետում առայժմ կանգ առնենք հաջորդ հիշատակագրություններում դիմանկարն ամբողջացնելու նպատակով:

Եվ այսուհանդերձ դարաշրջանի և մարդկանց հնարավորությունները թերագնահատվել էին, որովհետև իրականությունը գերազանց ամենահարուստ երևակայությանն անգամ:

«Zur Kritik...»-ից հետո անարգանքի այուն՝ «Կապիտալից» հետո... մահապատիժ:

«Zur Kritik...»-ը վիժեցված՝ «Կապիտալը» խոտանված:

Խոսք չկա:

• • •

«Կապիտալի» II հատորը Ավդալբեգյանի օրոք հրատարակված վերջին և առավել լիարժեք տեղեկություններ պահպանած հատորն է, որի հիշատակագրություններից ստույգ տվյալներ ենք ստանում ոչ միայն թարգմանության, այլև վերահսկչական աշխատանքների մասին: Այստեղ էլ գտնում ենք խանդավառությամբ զրկած գողտրիկ հիշատակագրությունը՝ *Վերջ: Ուրոտա՞, ուրոտա՞, ուրոտա՞*՝ գոչումներով, ևճակի հրավառություն:

Ահա այդ թերթիկը:

(Տե՛ս էջ 109)

«Կապիտալի» II հատորի արձագանքները (1930 թ. սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 10-ը ընդգրկելով):

	Առաջին արձագանքներ		Գերմանական արձագանքներ	
	Սեպտեմբերի 10	Հոկտեմբերի 10	Սեպտեմբերի 10	Հոկտեմբերի 10
9-րդ հունիս	14, 1.3	15, ամ. 1.8	17, 1.3	18, ամ. 1.8
10-րդ	14, 1.3	15, ամ. 1.8	17, 1.3	18, ամ. 1.8
11-րդ	15, 1.1	16, ամ. 1.8	17, 1.3	18, ամ. 1.8
12-րդ	16, 1.3	17, ամ. 1.8	17, 1.3	18, ամ. 1.8
13-րդ	17, 1.3	19, ամ. 1.8	20, ամ. 1.12	21, ամ. 1.8
14-րդ	17, 1.3	19, ամ. 1.10	20, ամ. 1.12	21, ամ. 1.8
15-րդ	19, ամ. 1.10	22, ամ. 1.8	25, ամ. 1.14	26, ամ. 1.8
16-րդ	27, ամ. 1.12	28, ամ. 1.8	29, ամ. 1.14	29, ամ. 1.8
17-րդ	30, 1.2	1.12	3, 1.14	4, ամ. 1.8
18-րդ	30, 1.2	2, 8	3, 1.14	4, ամ. 1.8
19-րդ	3, 1.14	4, ամ. 1.8	5, ամ. 1.12	5, ամ. 1.14
20-րդ	3, 1.14	5, ամ. 1.8	7, ամ. 1.10	7, ամ. 1.12
21-րդ	4, ամ. 1.10	6, ամ. 1.10	8, ամ. 1.10	9, ամ. 1.10
22-րդ	8, ամ. 1.11	8, ամ. 1.12	10, ամ. 1.11	11, ամ. 1.8
23-րդ	10, ամ. 1.14	11, ամ. 1.9	13, ամ. 1.10	14, ամ. 1.8
24-րդ	13, ամ. 1.10	14, ամ. 1.9	15, ամ. 1.10	16, ամ. 1.8
25-րդ	15, ամ. 1.10	16, ամ. 1.9	19, ամ. 1.2	20, ամ. 1.8
26-րդ	16, ամ. 1.11	17, ամ. 1.9	19, ամ. 1.2	20, ամ. 1.9
27-րդ	19, ամ. 1.2	21, ամ. 1.8	26, ամ. 1.4	27, ամ. 1.8
28-րդ	21, ամ. 1.2	22, ամ. 1.8	26, ամ. 1.4	27, ամ. 1.10
29-րդ	25, ամ. 1.2	26, ամ. 1.9	29, ամ. 1.3	30, ամ. 1.10
30-րդ	28, ամ. 1.3	29, ամ. 1.8	30, ամ. 1.4	31, ամ. 1.8
31-րդ	28, ամ. 1.3	29, ամ. 1.9	30, ամ. 1.4	31, ամ. 1.10
հոկտեմբերի 10	31, ամ. 1.4	1.11	2, ամ. 1.2	3, ամ. 1.8
հոկտեմբերի 11	31, ամ. 1.4	1.11	2, ամ. 1.2	3, ամ. 1.8

• • •

Վերջապես ամենից նշանավոր և, ինչպես սպասելի էր, տվյալներով ամենահարուստը «Կապիտալի» ավարտական «Տիրապետակարությունն» է, որ առանձնահատուկ ուշադրության է արժանի: Շատ առիթներով է հիշվել, կասեինք նույնիսկ՝ «ձեռքով էլ» սույն «Տիրապետակարությունը» որպես օրիգինալ երևույթ, իսկ թե ինչն էր և պարունակում այս կարճատև խոսքը, ցավոք՝ մնացել է աննկատ: Մինչդեռ այստեղ վեր են հանվում շափազանց հետաքրքրական ու անսպասելի փաստեր:

Եթե նախորդ հիշատակագրություններն աստիճանական նվաճումների արձանագրումներ են, ապա այս մեկը վերջնական հաղթանակի ազդարար է: Այդ պատճառով հեղինակը, բուն «Տիրապետակարությունն» անցնելուց առաջ, սույն գրանցմանն առանձնահատուկ պաշտոնականություն է հաղորդել, վերնագրելով՝

«ՄԱՐԲՍԻ «ԿԱՊԻՏԱԼԻ» ՀԱՅՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՂԻ
ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»:

Վերնագիրն արդեն խոսում է երևույթի բնորոշված՝ ոչ միայն ազգային, այլև արդեն համամարդկային նշանակության մասին: Կարծես ոչ թե, հիշատակագրություն է, այլ բոլոր կողմերով սսված մի բարձրագույն հայտարարություն, որ հայերն էլ այսուհետև ունեն արդիական գիտության գլխավոր երկր՝ «Կապիտալը», որն, ինչպես ոչ մի այլ գիրք, Աստվածաշնչից հետո, չի ունեցել այդօրինակ նշանակություն մարդկության պատմության մեջ: Մանավանդ գիտական բացառիկ արժողություն ունեցող այն գիրքը, որն ականավոր տնտեսագետ-թարգմանիչը գնահատել է որպես «մարդկային ստեղծագործ մտքի ամենամեծ կերտվածքներից մեկը» ու «տնտեսական գրականության հրաշալիքներից մեծագույնը» և, որից սկզբնավորվում է եթե ոչ նոր թվարկություն, ապա մի ինչ որ նոր հաշվարկ գիտության ոլորտներում:

Ուսումնարի գլխավոր գիտական այն երկր, որի յուրաքանչյուր նախադասությունն ու խոսքն առաջ են բերել բազմաթիվ մեկնաբանություններ ու բազմապիսի ըմբռնումներ, ծնել են մեծաբանակ հետևորդներ ու նույնքան հակառակորդներ, ևղել են անթիվ հղումներ ու հիմնավորումներ և, որի շուրջ ծավալվել են անհամար քննարկումներ ևն, ևն:

Մի խոսքով՝ համաշխարհային և դարակազմիկ այդ գրքի հայերեն թարգմանողի հիշատակագրությունը:

Բացի դրանից հեշտ է կոտակել նաև, որ նշված վերնագիրն ուղղված է ոչ միայն հայ ընթերցողին, այլև մարքսիզմի բոլոր այն հետազոտողներին, որոնց երբևէ հետաքրքրելու է ուսումնարի տարածման ու «Կապիտալի» թարգմանությունների պատմությունն աշխարհում, իսկ այդպիսիք այն ժամանակվա պատկերացումներով, անշուշտ, լինելու էին և այն էլ՝ ոչ հեռու ապագայում: Այդ պատճառով «Կապիտալի» հայերեն թարգմանողի», դերը մասամբ բնկալվում է անդամակցողի կամ ներկայացուցչի իմաստով համայն մարդկության համընդհանուր մի գործում:

Այս առթիվ պետք է նկատել, որ համաշխարհային գրականության մեջ դժվար է մատնանշել մեկ այլ գիրք, որի թարգմանություններն այսքան մեծ արձագանքների և ուսումնասիրությունների օբյեկտ դարձած լինել, որքան «Կապիտալն» է, ինչպես և թարգմանիչներն այդքան մեծ ճանաչման արժանացած լինելին:

Բայց հայերեն թարգմանիչ Թ.Ավդալբեգյանը գերազանցելու էր բոլորին: Այդ մասին ասվել է և դեռ կասվի քիչ հետո, իր տեղում:

Անցնենք «Տիրապետակարությանը», կարդանք և քայլ-քայլ գանք առաջ:

„Տանրօգուտ մի նշանավոր նպատակակետի հասնողի ուրախությամբ... „

Այս խոսքը «Տիրապետակարության» մեխն է, գլխավոր թեման, որ ամեն քայլափոխի ծառանալու է մեր առջև: Եղել են դեպքեր, երբ «Տիրապետակարության» տեքստը սկսել է «ուրախությամբ գրանցում եմ» բառերով, որով դուրս է նետվել «լվացքի տաշտակում լողացող երեխան», իրադարձության պատմական նշանակությունն ու հասարակական կշիռը վերածելով սոսկ առօրեական լավ տրամադրության: Այնինչ հենց առաջին բառերն են իրական մասշտաբ հաղորդում կատարված իրադարձությանը, քան ժպտահարույց ուրախության զգացողությունն է:

«Տանրօգուտ... մի նշանավոր... նպատակակետի հասնող», ավելի ճիշտ՝ հասած մարդու... տրիումֆ:

Մա հոգևվիճակ է, որ քչերին է վիճակված ճաշակելու: Այստեղ պատմությունն է խոսում:

“Հանրոգուտ” է յուրաքանչյուր հասարակական բարի գործ: “Նշանավոր” կարող են լինել մեկից ավելի գործեր, իսկ “մի նշանավորը”՝ առանձնահատուկ, խոշորացված նշանավորն է, մեկն է: Ինչպես նաև “նպատակները” նույնպես կարող են շատ լինել, այնինչ “նպատակակետը”՝ կետ-նպատակն է, դարձյալ մեկն է: Այսպիսով “մի նշանավոր” ու “նպատակակետ” բառերից յուրաքանչյուրը տարրեր ձևերով եզակիությունն են մարմնավորում, որտեղ առաջինը մասշտաբ, մեծությունն է պատկերում, երկրորդը՝ սյացք, իսկ միասին վերցրած “մի նշանավոր նպատակակետ”՝ արտակարգ մեծագործությունն:

Դա գործն է:

“Նշանավոր նպատակակետը”՝ անսպասելի հայտնագործությունն չէ, ինչպես Ամերիկա մայրցամաքի պատահական հայտնագործումը որոնելի հնդկաստանի փոխարեն կամ հոր կորցրած էջերը փնտրող Սափուդի Իսրայելի թագավորության հայտնաբերումը, այլ հեռանկար գազաթն աչքի առաջ տեսանելի նվաճումն է: Այսինքն զգաստորեն գիտակցված դժվարության հաղթահարումն է: Այլ թև որոնում է, այլ թիրախ:

Այստեղ հոգեբանություն է խոսում:

Դա էլ ինքն է:

Ի՞նչը կարելի է բնութագրել “հանրոգուտ մի նշանավոր նպատակակետ” բառերով:

Ինչպես ասել ենք՝ դարակազմիկ նշանակության երևույթ, որպիսին է «Կապիտալի» ներմուծումը յուրաքանչյուր ազգի պատմության մեջ և ահա թե ինչու:

«Կապիտալի», ինչպես հայտնի է, հեղաշրջում առաջ բերեց մարդկության պատմության մեջ, որպես նոր մտայնության ծնունդ, ուստի դրա թարգմանությունն էլ նմանատիպ դեր կատարի յուրաքանչյուր ազգի համար: Այն նոր աշխարհընկալում ու նոր պատմական հայացք է ձևավորում, որով սկիզբ է դրվում նոր մարդու կազմավորմանը:

Նոր մարդ՝ նշանակում է նոր մտածողություն, նոր հայացք հին երևույթների վրա:

Նոր մարդ՝ նշանակում է նոր հոգեբանություն՝ սեփական ևսի պատմական դերի վերագնահատմամբ, հին աշխարհի երևույթները նոր մարդու պահանջներին վերափոխելու պարավորությամբ:

Տեսեաքար նոր մարդ՝ նշանակում է նոր դարաշրջանի բացում:

Ո՞ր գաղափարախոսությունը կամ ո՞ր գիրքն է նմանօրինակ դեր կատարել և հեղաշրջում առաջ բերել մարդկության պատմության մեջ քրիստոնեությունից ու Աստվածաշունչից հետո, որքան մարքսիզմն ու հատկապես «Կապիտալը»:

Ոչ մեկը:

Տեսեաքար վերջինիս հայացմամբ նոր դարաշրջան է բացվում հայ իրականության մեջ և հայ ժողովրդի ծոցում էլ սկսվում էր նոր մարդու սերմանման ու ձևավորման պրոցեսը:

Սա “հանրոգուտ մի նշանավոր նպատակակետի” նշանակություններից մեկն է և միգուցե գլխավորը:

Մյուսը՝ մի շարք հասարակական գիտակարգերի՝ հասարակագիտության, տնտեսագիտության, պատմության, քաղաքագիտության և այլոց աննախնթաց թռիչքն է, որ «Կապիտալի» շնորհիվ ներմուծվում է՝ որպես ուսումնասիրման առարկա:

Վերջապես հիշյալ նշանակություններից զատ, բուն հայ ազգի համար «Կապիտալի» հայացումը շրջադարձային էր լեզվի աննախադեպ զարգացման առումով: Մենք դժվարանում ենք հիշատակել մեկ այլ գիրք, որը հայ լեզվամշակույթի կատարելագործման և բյուրեղացման համար նույնպիսի խթան եղած լիներ, որպիսին «Կապիտալն» է: Կարելի է հեշտությամբ սահմանագծել հայերեն հասարակագիտական և հատկապես քաղաքատնտեսական լեզուն՝ մինչ ու հետ «Կապիտալ» դարաշրջանների: Հայոց լեզուն ճոխացավ հազարավոր տերմիններով, ստեղծվեց ամբողջական համակարգված տերմինաբանություն:

Ամփոփելով թվարկածները՝ նոր մարդ, նոր գիտակարգեր, լեզվի նոր մակարդակ, կարող ենք ասել, ազգային մշակույթի և քաղաքակրթության ցուցանիշը նոր բարձրություն նվաճեց: Այլ կերպ՝ դարակազմիկ երևույթ հայ իրականության մեջ:

Այսպես կարելի է մեկնաբանել “հանրոգուտ մի նշանավոր նպատակակետը”:

Դա «Կապիտալն» է:

.. ... հասնողի ուրախությամբ... ..

Հասնողն ու իր ժողովրդին այդ նշանավոր նպատակակետին հասցնողն ինքն էր: “Ուրախությունն” բառն այստեղ թույլ է ու անարտահայտիչ: Հարագատ ժողովրդի այս “կլթը” քաղաքակրթության նոր հարթություն հասցնողի ուրախությունը ցնծությունն է՝ կատարածիդ արժանի գնահատականի ու մեծա-

գործող լինելու գիտակցությամբ հաստատված: «Տանրոգուտ» լինելու գիտակցության ուրախությունը բազմապատիկ է: Բնականաբար հաղթահարումը գորևդացրել և հավաստել էր սեփական մեծակարողության գնահատականը, որով գիտական սխրանքի ուրախությանը զուգարվել էր ինքնագնահատման ուրախությունը: Ինքնարժեքը վեր է ամփել կապիտալի:

Դա նույնպես զգացողություն է, որ բշերին է փճակված կրել, որովհետև բշերի կյանքում է հնարավոր այդօրինակ դեպք:

Տարիներ առաջ նա գրել էր.

«...պայմանները հնարավորություն տան *մեկին բախտ ունենալու* և հրապարակ հանելու... «Կապիտալը» մայրենի լեզվով»¹⁰:

Ինքը եղավ այն *մեկը*, որ ունեցավ այդ *բախտը*, ուստի ինքն էր իր բաղձանքն իրականացնողը: Այս աստիճան ուրախության մասին է խոսքը:

Քիչ անց կպարզվի, որ այս ուրախությունն առաջիկա ողբերգության նախաբանն է լուր, իսկ առայժմ նա հանգիստ խղճով «վատակամ ու բեռ թեթև»

«...գրանցում եմ, որ այսօր՝ 1937 թվականի հուլիսի 10-ին, առավոտյան ժամը 7-ին ու 20 րոպեին...»

Այստեղ պետք է կանգ առնենք:

1937...

Թվերը բառերից խոսուն են: Մենք չենք մտաբերում մեկ այլ օրինակ, երբ թվերով հնարավոր լինի այսքան վառ արտահայտչականությամբ պատկերել մարդկային հոգևփճակ ու ներքինաշխարհ, էլ չենք ասում հասարակական մթնոլորտ, որից հետո խոսքերն ավելորդ լինեն:

Այս մեծ մահերի թվականին... «ուրախությամբ»: Այս համատարած մահտարածամին... «հանրոգուտի ուրախությամբ»: Անպատկառ չէ՞ արդյոք: Մի՞թե սա ցինիզմ չէ:

Այստեղ և՛ ցինիզմ կա, և՛ ողբերգություն:

Բանն այն է, որ «1937» և «ուրախությամբ» հասկացողությունների համադրությունն իսկապես ցինիզմ է, իսկ «Տիշտակագրության» նախ «ուրախությամբ» այնուհետև «1937»-ի

հաջորդականությունը՝ ողբերգություն: Այս զուգարկիների տեղափոխությունից զուգարք զարմանալիորեն հակառակ բովանդակություն է ստանում: Դարաշրջանի ցինիզմ և անհատի, դիցուք թարգմանչի՝ դաժանությամբ կատարված ողբերգություն: Տենց այս երկու հասկացողությունների միավորումն է անսահմանորեն մեծացրել Ավիայրեզյանի կրած ողբերգությունը, որովհետև նա էր երկուսն էլ լիարուսն ճաշակելու: Միայն 1937-ն արդեն լիուլի բավարար էր միլիոնների նման ողբերգությունը վերապրելու համար, իսկ «հանրոգուտի ուրախությամբ» ու «1937»-ի կողք-կողքի հայտնվելը՝ նրան է, եզակի է բեռնից բեռն հասնող զգացողությունների դիապոզիտով: Տարիներ շարունակ վեր սլացող ուրախության զենիթը փաստորեն միմիայն մեծացրել է խորխորատ գահավիժման տարածությունը, նրան դատապարտելով սեփական մաշկի վրա զգալու հոգևփճակների ծայրից-ծայր սփռված տարածությունը:

Նրա ողբերգությունն անսահմանորեն բնդայնվել է տարածության մեջ:

Ողբերգություն է... տարածությամբ մեջ:

Ահա անհատի ողբերգությունը:

Իսկ ցինիզմը: Ահավասիկ:

«Կապիտալի» թարգմանիչ և... գնդակահարություն: «Կապիտալ»՝ իրենց գաղափարախոսության «երգ-երգոցի» պրոպագանդիստ և... մահապատիժ: Մեծագույն ծառայություն և պատժի առավելագույն չափ: Այսինքն պատժաչափ ուղիղ համեմատական է երախտիքին կամ պատժաչափ որոշվում է երախտիքի մեծությամբ: Այսպիսին է պատկերը: Որտեղից՞ որտեղ: Դարձյալ՝ բեռնից բեռն և դարձյալ... խոսք չկա:

Որքան էլ աղաղակող է երևույթը, կարևորն իրադարձության ցուցադրական ակցիան էր ասելու համար, որ ոչ մի ծառայություն, ոչ մի երախտիք արժեք չի ներկայացնում և չի պարտավորեցնում: Գնդակահարվել էր ամոթը:

Ահա դարաշրջանի ցինիզմը կամ ցինիզմի դարաշրջանը:

«Ցինիզմը խորհուրդների գլխավոր գաղափարախոսությունն է՝ ասել է Իոսիֆ Բրոդսկին:

«Մենք ուրիշ նյութից ենք թրծված» լոզունգն էր թևածում այդ օրերին: Ուրիշ, նորաբույժ մարդուկների դարաշրջան, որ ծնել էր իր հերոսներին «բատ յուրումն պատկերի»:

Տևաբրրրական է ևս մեկ դիտում:

¹⁰ Տե՛ս Ֆ.Մերինգ ու Ա.Լուրսենբուրգ, Կարլ Մարքսի «Կապիտալի» համառոտ շարադրանքը, Երևան, 1928, Առաջաբան, էջ 5:

Բոլոր մահերի կրք մեկն է, բայց յուրաքանչյուր բացառիկ է մահացողի հոգևփիճակով ու դրսևորած ռեակցիայով: Պարզվում է՝ մահապատիժներն էլ համրնդհանուր դաժանությամբ հանդերձ կարող են բարոյական նկարագիր ունենալ, նույնիսկ պատվարեր ու անպատվարեր՝ անգամ նվաստացուցիչ լինել: Ավելին՝ մահապարտի նկատմամբ դաժանությունն առավել կարող է խորացվել ոչ միայն ֆիզիկական խոշտանգումներով, այլև հոգևբանական ոչնչացմամբ: Որքան էլ արդյունք միևնույնը լինի, միևնույնը չեն կախադան հանվելն ու սոված շների կեր դառնալը կամ սեփական գնդակահարությունը հրամանակն, ինչպես ծովակալ Կոլչակը, կրք գնդակահարողը չի վրիպի, այլապես ինքը կգնդարվի: Բրիստոսի մահապատիժը՝ խաչվելով անարգվելուց բացի արտաճոցությամբ չլ՞ր դաժանացված ավագակների հետ միևնույն պատժին արժանանալով կամ մարդասպան Բարաբբայի հետ համահավասարուն փոխանակվելով: Ամենևին սոսկ գեղեցկախոսություն չէ, կրք ասում են՝ «*բնկերոջ հետ մահը՝ Լրջանկություն է*»՝ և որքան անխռով հպարտությամբ լեցուն կլինի զինակիցների կամ գաղափարակիցների հետ մահապատի դուրս գալն, ինչպես դեկարրիստների հնգյակը¹¹, կամ «Մարտի 1-ի»¹² խմբակն, իսկ որպիսի՞ն կլինեն «հանրօգուտի» գիտակցությամբ հպարտ մարդու և սովալույկ մանուկների սեփական սիրտ թափածով կերակրվել հանդուրժող խմբապետ Շավարշի հետ մահապատիժ կրելու անարգանքը:

Ըստ Վ.Ալազանի «Տառապանքի ուղիների»՝ հիշյալ խմբապետը ծաղրածու Ահարոնի դեր է ստանձնել բանտախցում «Կապիտալի» թարգմանչին ծաղրելու անհաջող փորձեր անելով: Նրանց միասին են գնդակահարել թլ՞ ոչ՝ չզիտենք, բայց նրանց միասին են բանտախցից դուրս տարել, որից հետո երկուսն էլ այլևս չեն վերադարձել: Կյանքի ծաղրը վեր է ածվել մահվան ծաղրի՝ մեծագործներն ու հանցագործները, վսեմն ու նսեմը արժանացել են միևնույն դատաստանին անխտրական մտադացի ամենակույ Լրախում:

Ահա ցինիզմի ապոթեոզը:

Տենց այդ պահին տեղի է ունենում մի նշանավոր դեպք, որ կարծես ի վերուստ նախատեսված լիներ:

Գնդակահարության Երեկոյին՝ դեկտեմբերի 27-ին, Երևանում, Կարլ Մարքսի անունը կրող պոլիտեխնիկական ինստիտուտի դահլիճում, բազմամարդ յարանի առջև պետք է հանդես գա գերագանցիկ ուսանող Մարտիկ Ավդալբեկյանը: Նա պետք է պատմի իր մասին՝ ի՞նչ համոզմունքներ ունի, ի՞նչ սկզբունքներով ու քաղաքական հայացքներով է առաջնորդվում կյանքում ևն:

Մարտիկը միակը և առաջինը չէր, որ հայտնվում էր այդպիսի դերում: Եղև էին շատերը և շատ արժանավոր մարդկանց, ինչպես պարզվեց, անարժան ժառանգներ:

Բայց Մարտիկը Լոզով միակը...

Ահա հերթական ժողովի, հերթական անգամը նախագահողը դիմում է.

- Բաղաբացի Ավդալբեկյան, դուք պետք է պատմեք ձեր հոր ժողովրդի դեմ գործունեության մասին և խոստովանեք, որ նա... *սրիկա է*:

Լարված սպասողական լռություն է տիրում հանդիսասարհում, որ խախտվում է Մարտիկի հանդարտ ու համոզված ձայնով:

- Թե՛ ռ՞վ է իմ հայրը, - պատասխանում է նա, - դատր ցույց կտա և բոլորը կիմանան, իսկ, որ *սրիկան դուք եք՝* վաղուց է հայտնի:

Դահլիճը քարանում է: Կայծակ ու որոտ արևոտ օրը: Այդ դժնդակ օրերին, ահ ու սարսափի մեջ հագիվ շնչելով, կրք առօրեական էին մատնություններն ու զրպարտությունները, կրք ժառանգները հրապարակավ խոստովանում և ուրանում էին ծնողներին, հանկարծ մեկը, որ ոչ միայն չուրացավ, այլ «*սրիկա*» խարազանեց այդ օրերի հերոսների ճակատներին: Դա կատարյալ սենսացիա էր, որ թեա՛նում էր ամբողջ քաղաքում տնից - տուն, բերնից - բերան: Բոլորի շուրթերին մի խոսք էր.

«*Թաղևոսի որդին չուրացավ հորը*»:

Մարտիկը Թաղևոսի միայն որդին չէր, այլև գաղափարակիցն ու գործընկերը: Տին Երևանցիները հետագայում հիշում էին, որ հայր և որդի Ավդալբեկյանները միասին փողոց դուրս գալիս կամ հասարակական վայրերում հայտնվելիս, համախոհ բնկերների տպավորություն էին թողնում շրջապատի վրա: Պահպանվել է այն փաստաթուղթը, որով պարզվում է, որ Մարտիկն էլ

¹¹ 1826թ. հուլիսի 13-ին կախադան հանված դեկարրիստներ Պ.Պետտեյի, Կ.Իլլենի, Պ.Կախովսկու, Օ.Մուրաֆով-Ապոստոլի և Մ.Լեատուժև-Այումինի հնգյակը

¹² Վերանորոգիչ ի պարի դեմ 1881թ. մարտի 1-ին (հ.տ.) մահափորձ կատարողների խմբակը, որի անդամներն էին Ա.Թեյպարովը, Ս.Պետրովկայանը, Ն.Կիրալշչը, Տ.Միկայրովը, Ն.Կիսակովը Կախադան են հանվել 1881թ. ապրիլի 3-ին:

Լեյլ «Կապիտալի» օտարալեզու քաղվածքները գրողը և այլ աշխատանքներ կատարողը: Պահպանվել է նաև այն նամակը, որ «Կապիտալի» առաջին հատորի լույս բնծայման կապակցությամբ հայրը գրել է որդուն:

«Միրևի Մարտիկս,

Շնորհավորում եմ «Կապիտալի» հայերեն թարգմանության հրատարակությունը: Այսուհետև ամեն անգամ երբ թերթում այդ գիրքը, միշտ պետք է հրճվանքով հիշեմ քո հաստատակամ ու բարևխիղճ աշխատակցությունը, որ այնքան հեշտացրեց գործս ու այնպես ապահովեց աջողակ ավարտումը: Տասնյակ հազար հայ ընթերցողներ մարքսիզմի ակունքից զուլալ ջուր խմելու համար պարտական եմ 16-17 տարեկան մի հայ պատանու, որ գիտակցարար լծվեց այդ գաղափարական գործին, և հետևանքը - «Կապիտալ»-ը հայերեն - ահա հրատարակի վրա է ...

Անցնե՛ս, տղաս, համբուրում եմ խոհուն ձակատդ: Հաջողություն և բեկ նաև «շինարարությանը»¹³ ասպարեզում:

Տալա՛ Տալա՛ մի հայրիկիդ հեռագրոջով՝ Մարտիկս ճանապարհորդում է Թուրքիա:

Տ.Գ. Մպաում եմ նամակիդ: Թ.Ա.

Մարտիկսը վերջինս Լեռնոյին գնդակահարությանը դատարարված հայրը շիմացավ բանտի պատից այն կողմ սիրատուն զավակի հերոսության մասին, որ թնդում էր ամբողջ քաղաքում, ինչպես և Մարտիկը Լեռնը՝ շիմացավ ժամեր անց բանտի լռին ներքնահարկում կատարված հրեշագործության մասին: Բայց այդ Լեռնու այդ խորհրդավոր գիշեր, նրանց Լեռնուսի հոգիները հանգիստ էին: Երկուստեք անտևոյակ որդի Ավդարբեկյանը հրատարակավ հավատարմության սրբազան երդում տվեց հորը և սրբությամբ կատարեց: Նա Լեռնու հոր առաջին առաքյալն ու վկան կենդանության օրոք՝ վերջին ժամերին:

Հայր Ավդարբեկյանի հոգին փառավորված էր:

Գեղարքի այսպիսի դարձմանալի հաջողակ անությունը բացահայտվեց այդ օրերից շատ ժամանակ անց, մոտ հիսուն տարի անց:

¹³ Մարտիկը հետագայում դարձավ ճարտարագետ, իսկ այդ տարիներին սկսել էր ինքնուրույն առաջին փորձեր անել այդ բնագավառում:

հետո: Մինչ այդ միայն մեկը գիտեր դրանց մասին՝ ամենատես Աստված:

Տեստագայում Հայրենական մեծ պատերազմի տարիներին գերմանացի զինվորների ու սպաների ռազմաճակատային նամակներից մեկում կարդում ենք.

«Ինչպես մյուս կողմացիները, հայերը նույնպիսի Լուսնոզվ էին ջանում ներգրավվել գերմանական զինված ուժերի կազմում: Մի ճամբարում, օրինակ, ծառայության զինակոչվելու ժամանակ *բացի մեկից*, բոլոր հայերը բնդունված հարցումներին «այո» են պատասխանել: *Այդ մեկը Հայաստանում Կարլ Մարքսի երկերի թարգմանողի որդին էր* (բնդգծումները մերն են: - Ա.Մ.)»¹⁴:

Եվ դարձյալ «բացի մեկից» և դարձյալ «այդ մեկը»:

Մարտիկի կերպարն այնպես է հրապուրել նույնիսկ թշնամուն, որ այսքան ստույգ տեղեկություններ են հայթայթել նրա ո՛վ լինելու մասին:

Ազգային հպարտության պատվանշան է տված թշնամու այս կարճատև խոսքի մեջ: Ի հայտ է գալիս քաջարի հայրենանվեր, տանիկ մտավորական, գաղափարական հերոս-հայրդու դիմանկար:

Մարտիկը գնահատականն անհամեմատ բարձր է և անաչառ՝ «գիտակցված մահ», որն, քստ Եդիշ պատմագրի անմահությունն է, քան յուրայինների՝ «պատանու մի փոքր միամիտ հերոսություն»¹⁵ մեկնաբանությունը, որ հերթական սրբապղծությունն է հերոսի գաղափարական գործի հասցեին:

«Մարտիկը մեկն էր և բոլորիցս գատ» ասում էին նրա ռազմաճակատային բնկերները, «Մարտիկը նմանը չունի» խոսքով էին հիշում դպրոցական և ուսանողական դասերի կերպերը:

Իրականում այդ մեկը գնդակահարված «ժողովրդի թշնամու» միակ որդին էր, որ, որպես այդպիսին, հայաժվել էր սկսած դպրոցական տարիքից մինչև ռազմաճակատային գերությունը: Դեռևս դպրոցական էր նա, երբ «Պիոներ կանչ» թերթում Ավետիս Դեբենց ստորագրությամբ հայտարարվում է, թե «թշնամին աշխատում է պատանիների մեջ» և հիշատակվում է Մարտիկ Ավդարբեկյանի անունը,¹⁶ որից հետո Մարտիկի լուսա-

¹⁴ *Էռնստ Մեյեր, Արա Բեբյան*՝ Տեղնոսի և Արարի միջև «Անդրապարհ» շաբաթաթերթ, 1990թ. սեպտեմբերի 14, №15, էջ3:

¹⁵ *Է. Տարայան*՝ Արարաթ, «Ավանդարդ», 1965, հունվարի 14, №6, էջ2:

¹⁶ *Ա. Դեբենց*՝ Խոսում են փաստերը, «Պիոներ կանչ», 1929, հուլիսի 7, №27, էջ1:

նկարն ի ցույց ամենքին կախվում է «ցուցադրական» կոչված դպրոցի պատի թևերում, ուսուցիչ Ավետիս (ևս մեկ Ավետիս: Ա.Մ.) ճուղուրյանի մեղադրական հողվածով¹⁷:

Բայց այժմ հայրենիքին վրեժխնդրորեն դավաճանելով ու հակառակորդին ծառայելով չէ նա լուծում իր արդարացի վրեժը ավելի զգրելի թշնամիներից: Ընդհակառակն՝ անօրինակ պահվածքով դառնալով համրնդհանուր հիացմունքի և հերոսականության տիպար, նա զինաթափ է արել դաժանությամբ սահման չունեցող թշնամուն, որոնք կատարված դեպքից հիպնոսված, ոչ միայն նրան չեն գնդակահարել, այլ նույնիսկ ձեռք չեն տվել: Գրանով իսկ բարոյական մահացու ապտակ է հասցվել յուրայիններին, որոնք Մարտիկին զենք չեն տվել, որպես ժողովրդի թշնամու որդու:

Զինվո՞ր... առանց զենքի...

Անզեն ու անպաշտպան անձր տրիումֆալ հաղթանակ է տարել բոլորի նկատմամբ, մնալով

“Տառապանքի մեջ վեհապանձ,
Եվ զերության մեջ տիրակալ”
(Մ. Կապուտիկյան):

Մարտիկը բազմաշնորհ, ճարտարապետների համամիութենական մրցույթի դափնեկիր, մեծ ապագա խոստացող երիտասարդ էր և սպասվում էր, որ նշանավոր ճարտարապետ կամ հասարակագետ կդառնա: Բայց եղավ այն, ինչպես կնքվել էր՝

Մարտի՛կ... ու նաև մարտիրո՞ս...

Ասում են հոգեկան խաղաղ անդորրությամբ Ավդալբեգյանն ընդունեց իր մահապատիժը: Նա ապավինել է իր անեղծ ու անկաշառ սկզբունքայնությանը:

“Եթե հերթն ինձ հասնի, ապա մտավորականներից ոչ-որ չի մնա”, ասելիս է եղել նա:

Այդպես է նկարագրում նրա վերջին օրերը բանտախցի բախտակից Լյուդվիգ Դեմիրճյանն իր գրած նամակում Թ. Ավդալբեգյանի այրուն:

“Տարգելի տիկ. Արաքսյա Ավդալբեգյան!”

...
Բանտերում և արսորավայրերում (1937-1954) ևս ծանոթացել եմ բազմաթիվ ու բազմերանգ քաղկալանավորներին



Նստած են Հայրապետ Բարեղանյան-Ավդալբեգյանը և Թադևոս Ավդալբեգյանը, կանգնած են՝ խաչատուր և Արաքսյա Ավդալբեգյանները


¹⁷ Արաքսյա Ավդալբեգյանի անձնական արխիվ, օրագրեր (ամսիպ) :



Թադեոս Ավդալբեգյանի ընտանեկան լուսանկարը: Նստած են՝ Թադեոս, Արևիկ, Արաքսյա, կանգնած են՝ Սեդա, Մարտիկ և Մայիս Ավդալբեգյանները 1926 թ. Երևան



Թադեոս և Մարտիկ Ավդալբեգյանները: Թարգմանվում է «Կապիտալը»



Թադեոս Ավդալբեգյան
1933 թ. հունվարի 26



Մարտիկ Ավդալբեգյան
1940 թ.



Սուրեն, Մարտիկ և Մայիս Ավդալբեգյանները
1935 թ. օգոստոսի 18, Մոսկվա

հետ. հայտնի վիրաբույժ պրոֆ. Միրզա-Ավագյանի («Quam rispubliam habemus»),¹⁸ հետ, որը դրսույն բանջարակեր, բանտում ծանր դիզինտերիայով տառապեց և միայն ամբողջ կամերայով հացադուլ հայտարարելով ստիպեցինք բանտի հիվանդանոցը տեղափոխել: «Ձախակողմյան» դաշնակ մտավորականներ՝ իրավաբան Մինաս Մակարյանի, բժկ. Արշակ Տոփակիմյանի և պարլամենտի անդամ Խանազդայան Երվանդի, որը գլխավորած էր մի խումբ հախուռն դաշմուխականներին. բանտում իսկ ստալինապաշտ *պարտիականների* հետ, որոնք բարոյապես ամենախղճալի մարդուկների տպավորությունն էին թողնում. վերջիններից Ալդր. Մատուրովի մասին հանդիպելիս կպատմեմ. և ն և ն

...
Ձեր մեծարգո ամուսնու ինձ վրա թողած տպավորությունը եզակի էր և անջնջելի. հիշեցնում էր անզկերն dreadnought բառը. երկու պատմական ղեմերը՝ հին հունաց փիլիսոփա Սոկրատը և անգլիացի պատմաբան-փիլիսոփա Թոմաս Բարլայը:

Ինչու՞ Սոկրատը. պատմությանը հայտնի է թե՛ այդ խոշորագույն փիլիսոփան ինչպիսի՞ հոգեկան անդորրությամբ քննադատեց մահացու բաժակը, համարյա կրկնելով իրմե դարեր հետո գալիք հայոց մեծ բանաստեղծի խոսքերը՝

“Եվ ևս վաստակած ու բեռս թեթև,
դանդաղ իջնում եմ իմ լեռան հետև”:
(Ն. Թումանյան):

Թ.Բարլայը - ֆրանսական Մեծ հեղափոխության պատմությունը «Կայծակի լույսի տակ» գրողը - յուր երիտասարդության մի անկյանի տուպիկային վիճակում ինքն իրեն ասել էր՝ «What art thou afraid of? What's the worst? Death? Let it come!»¹⁹. Անշուշտ, բոլորովին մի կողմ թողնելով նրա փիլիսոփայությունը, նա հաղթեց. ...

Dreadnought? Առաջին աշխարհամարտին ծովակալ Ֆոն Թիրփիցը պահանջում էր կայզերից կառուցել այնպիսի ռազմանավեր, որոնք կարողանան “կույ տալ” անգլիական զրևնոտների արձակած ահուկի արկերը. դառնալ անահ, անխոցելի:

Մեր բոլորին ակնածանքին, հիացման ու սիրո առարկա պրոֆ. Ավդալբեգյանը՝ մի բարոյական dreadnought-ի տպավորու-

¹⁸ «Թող հաղթանակի ընդհանուր գործը»:

¹⁹ “Ի՞նչն է քեզ վախեցնում: Ո՞րն է վատթարագույնը Մա՞հը՝ Կե՞ն է՛կ”:

թյուն էր թողնում մեզ վրա. իր եղերական ճակատագրի նախագագումով հանդերձ, նա՝ որպես մի պողպատակուծ անխոցելի կառուցվածք մնում էր աներե՛ր ու անսասա՛ն ...

Ո՞վ կարող է այդպես հանդարտ մահվան բաժակն ունակ. միայն նա, ով ապրել է անբիժ, աշխատել է տքնաջան, թողել է ապագա սերունդներին աննրկուն կամրի ուսանելի մի տիպար ու զինք անմահացնող պատմական երկեր Իրավամբ Ձեր ամուսնուն էլ է վերաբերում մեր եղերաբախտ հանճարի տղերք.

“Չնչին, ինչպես Արարատին նևտած քար՝
Դավերք սև մարդուկների այդ անկար -
Օ՛, չհասան քղանցքներին անգամ քո՝
Ինչպես անհաս Արարատին նևտած քար”:
(Ե. Չարենց)

...

Ահա թե՛ ի՞նչ փոթորիկներ են եկել ու անցել 1937 -ին:

„ ... հուլիսի 10-ին ... „

Ողբերգությունը խտացել էր ժամանակի մեջ ոչ միայն միննույն 1937-ին, այլև միննույն հուլիսին: Այն ամսին, որն րնտանիքում նշանավոր էր մի քանի ծնունդներով և ուրախաօթի ղևաբերով, այդ հուլիսին հատկապես նշանավորվելու էր ևս մեկ մեծագույն ուրախությամբ, բայց նաև շրջադարձային այնպիսի իրադարձությամբ, որ վերջնականապես մթազնկու էր հետագա բոլոր հուլիսների ուրախություններն րնտանիքում:

Տաջորդ օրը՝ հուլիսի 11-ը ավագ դատը՝ Սևդաշի ծննդյան օրն է, 15-ը՝ Մարտիկի, 17-ին Նոր Բայազդում սեպագիր արձանագրության հայտնաբերելու օրն է, որն րնտանիքում նշվում էր խանդավառությամբ, վերջապես ամսի 31-ը տիկնոջ՝ Արաքսյա Ավդալբեգյանի ծննդյան օրն է:

Այդ օրը՝ հուլիսի 10-ին նա գրում էր “հանրօգուտ մի նշանավոր նպատակակետի հասնողի ուրախությամբ”, որն րնդամենը միքանի օր անց ակնթարթորեն մարելու էր իրեն նևտելով վրահաս ողբերգության անթափանց աշխարհը: Տուլիսի 24-ին Ավդալբեգյանը ձերբակալվում է հանգստավայր Կիրովականում, ուր նա երկարատև տաժանբից ձերբագատված, հանգիստ խղճով

և բարձր տրամադրությամբ մեկնել էր հանգստի՝ րնտանյոր հանդերձ:

Ուղիղ երկու շաբաթ է միմյանցից բաժանում հաղթանակի ցնձությունն ու անդառնալի կործանումը: Ընդամենը երկու շաբաթ տևեց “*հասնողի ուրախությունը*”, որին հաջորդեց 5-ամսյա կայանքն ու գնդակահարությունը՝ դեկտեմբերի 28-ին: Ողբերգությունն, ինչպես ասել ենք, րնդայնվել էր տարածության մեջ, խտացել ժամանակի մեջ և բաժին րնկել մեկ հոգու կրելու այդ ամենը: Ծանրակրությունից բացի պետք էր դիմանալ խոշտանգիչ հարվածի սրությամբ: Նա հոգևրանորեն հակառակ բևեռում է գտնվել՝ և հանկարծ ... այդ ակնթարթին կարելի էր և՛ կարժածահար լինել, և՛ սրտի պայթյուն, կամ ճնշման ժայթքում վաստակել և ամեն ինչ...

Դա ինքը՝ մահն էր. առաջին մահը, որովհետև չէր կարելի չզիտակցել, որ եթե «Կապիտալի» թարգմանիչ լինելը չէր կանգնեցրել ձերբակալումից՝ չէր կանգնեցնի նաև գնդակահարությունից:

Ճակատագրի հրեշավոր խաղ է խաղացվել հետը՝ մի ակնթարթ համտևելու տալ աշխարհով մեկ երջանկության համն ու անմիջապես զգալ մոտալուտ մահվան հոտը:

Կարձև գեղարվեստական երկում արտահայտչամիջոցների թանձրացման եղանակով ստեղծված իրադրություն է, որ թափանցել է իրական կյանքի մեջ: Գեղարվեստական երկում նմանօրինակ իրադրությունն անբնական, նույնիսկ անիրական կարող է թվալ, բայց սա իրականություն է, որ անբնական է թվում:

Չարիուրելի է:

„ ... առավոտյան ժամը 7- ին ու 20 րոպեին... „

Նախ՝ աննշմարելի “*առավոտյանը*”:

Այն բնութագրական է թարգմանչի համար: Ավդալբեգյանի օրը միշտ սկսվել է առավոտյան ժամը 5-ին: Այդ սովորությունն արմատացել էր մանկուց Գեորգյան ձևմարանում ուսանելու տարիներից: Այդպես է եղել ողջ կյանքում, ինչպես նաև այդ օրը, կյանքի մեծագույն հաղթանակի օրը՝ 1937-ի հուլիսի 10-ին, օրն սկսվել է ժամը 5-ին և թարգմանությունն ավարտվել է “*առավոտյանը*”...

„ ... ժամը 7-ին ու 20 րոպեին ... „

Խոշոր պատմական անցքերի կապակցությամբ է կարևորվում ժամանակային ճշգրտությունը: «Տիշտակագրությունը» նշանավոր իրադարձության ազդարար է և դա է պարտավորեցրել գրանցել թարգմանության վերջակետը դնելու նույնիսկ րոպեին: Մա է աստեղային ժամը:

Գարձյալ հիշենք գլխավոր թեման՝ *“հանրօգուտ մի նշանավոր նպատակակետի հասնելու”*... րոպեին:

Տետագա տարիներին թարգմանչի կյանքի նվիրյալ ընկերը՝ Արարսյա Կանայան-Ավիայրեզյանն ամեն հուլիսի 10-ին, առավոտյան վաղ վեր էր կենում, լվացվում-հարդարվում և ժամը ուղիղ 7-ին ու 20 րոպեին գլխահակ կանգնում էր ամուսնու լուսանկարի աջ մտրում արտասանելով սույն «Տիշտակագրությունը»:

Նրա օրինակով այդպես են վարվում առ այսօր ժառանգներից ոմանք նվիրումը հավերժացնելով սուրբ լուսությամբ:

Լուսության րոպե՝...

„ ... թարգմանեցի պրծա ... „

Ուշադրություն՝ն. ոչ թե մյուս հիշատակագրությունների նման հանդարտ ու հավասարակշիռ *“ավարտեցի”* կամ *“վերջացրի”*, այլ *“պրծա”*: Տոգնածություն, մի քիչ ձանձրույթ, սահմանակետին հասածի ինտոնացիա է լսվում այս բառի մեջ: Մենք ասում ենք *“պրծում չկա”* կամ *“մազապուրծ եղա”*՝ բառացիորեն վերջին շնչում, վերջին ակնթարթում փրկության իմաստով: Թոթափման, ուսերից վայր գցելու թեթևություն է զգացվում և հատկապես շոշափելի է դառնում *“վերջին-ամենավերջին”* հաջորդականության կողքին:

...թարգմանեցի պրծա...

„ ... վերջին գրքի ամենավերջին երևար ... „

Բառերի գերադրական աստիճանի հաջորդական աճը՝ ծանրակիր երկարատևություն, հեռավորություն և հաղորդում պատկերին: *“վերջին... ամենավերջինը”* գնալով հեռացնում է ծայրակետն, ինչպես *“հնամյա-հազարամյա”* հաջորդականությունը հետ է տանում դեպի անցյալը: Բացի այդ մեծադանդաղ

ու դժվարին տևեց է լսվում ինտոնացիայում: Այդ պատճառով որքան էլ հասկանալի ու ըմբռնելի է *“ուրախությունը”*, նույնքան հասկանալի է ամենափրկիչ *“պրծան”*:

Վերին աստիճանի պատկերավոր, նույնիսկ զգայարաններով շոշափելի տեսարան է ստացվում: Երբ ասում ենք *“Կապիտալ”*՝ ծանրության զգացողություն է ներքուստ առաջանում, *“վերջին գրքի ամենավերջին երևար”*՝ երկարաձիգ, հալումաջ անող անվերջություն՝ վերջապես վրա է հասնում *“պրծա...ա...ա...ա...ն”*՝ շունչ բաշխու փրկություն է լսվում:

Իրականում էլ է այդպես եղել: Սույն «Տիշտակագրությունն» ավարտելուց հետո թարգմանիչը գրիչը *“ծանրությունից”*, կամ *“հոգնածությունից”* վայր շղնկով, ուժասպառ, ձևերեր տարածել է կողմերը, բազկատարած հետ ընկել աթոռի թիկնակին և մի խոր հոգոց հանելով՝ ասես ուսերից վայր է դրել տարիներում կուտակված հոգնության բեռը: Ընտանքի անդամների խանդավառ ճիչերի ներքո աջ կողմից կամացուկ նրան է մոտեցել կինը և համբույր դրոշմել ամուսնու գեղեցիկ ձակատին:

«Տիշտակագրության» այս առաջին պարբերությունն ամբողջությամբ վերաբերում է թարգմանությունն ավարտելու պահին: Մրան հաջորդում է կատարվածի ընդհանրական ամփոփումը:

„ ... Այսպիսով ահա, իմ համեստ ուժերով, ավարտված է Կարլ Մարքսի «Կապիտալի» բոլոր՝ I, II, III, ու III₂ հատորների ամբողջական (անդրանիկ:-Ա.Մ.) թարգմանությունը գերմաներեն բնագրից հայերեն... „

Նախ՝ այստեղ նկատելիորեն փոխված է խոսքի տոնը, որ նմանվում է պաշտոնական հաշվետվության:

Երկրորդ, մեկ էլ կարդանք նախադասությունն ու անդրադառնանք գրածին:

«Կապիտալ»... բոլոր հատորներ, ... ամբողջական թարգմանություն, ... գերմաներեն բնագրից, ...

...համեստ... ուժերով...

Զավեշտական է հնչում: Արտահայտվելու ընդունված այս ձևն ավելի է սրում կատարվածի մեծագործության գիտակցումն ազդակելով լրացուցիչ խորհրդածությունների:

«Կապիտալը» թարգմանված է աշխարհիս ավելի քան 50 լեզուներով: Ոչ մի ազգի ոչ մի թարգմանիչ այս խոսքը չի կարող կրկնել շվեդերեն թարգմանիչ Ռ.Մանդլերից բացի: Միայն այս երկու ազգերն ունեն

- ա) բնագրից կատարված,
- բ) ամբողջական՝ 3 հատոր (4 գիրք) «Կապիտալի»,
- գ) անդրանիկ թարգմանության,
- դ) միանձնյա թարգմանիչ:

Նշանակում է հայերեն «Կապիտալն» առայժմ եթև ոչ միակն, ապա ընդամենը երկուսից մեկն է աշխարհում, այսինքն հազվագյուտ է:

Բայց հայերեն «Կապիտալը» մի շարք առավելություններ ունի իր շվեդերեն երկվորյակի նկատմամբ: Վերջինիս թարգմանությունը կատարված է «Կապիտալի» ժողովրդական հրատարակությունից, ի տարբերություն հայերենի՝ գիտական հրատարակությունից կատարված թարգմանության: Բացի այդ, Ռ.Մանդլերը չի ստեղծել և շվեդերեն, ինչպես շատ ազգեր, որոնք օգտվում են համակարգակալան տերմիններից, առ այսօր չունեն մայրենի լեզվով տնտեսագիտական տերմինաբանություն, ի տարբերություն Թ.Ավդալբեգյանի ստեղծած հայերեն ընտիր տերմինաբանության:

Ահա այս լրացուցիչ պահանջներով հայերեն թարգմանությունն ու թարգմանիչը **եզակի են աշխարհում**:

Եզակի են աշխարհագրորեն, այսինքն...տարածության մեջ:

«...որ սկսել էի 1931 թվականի հոկտեմբեր - նոյեմբերից»:

Կարելի է ստանալ ժամանակագրական սահմաններ՝ 1931 հոկտեմբեր... 1937 հուլիսի 10-ին: Մոտավորապես 5 տարի ու 9 ամիս, եթև վերցնենք հոկտեմբերի 1-ից: Պակաս քան 2000 օրում, ավելի քան 2000 կյանոց տպագիր «Կապիտալ»: 2000 օրում ոչ թե 2000 կյանոց ու հանդարտ շարադրանք, այլ անհամար խոչընդոտներով ու արգելքներով լեփ-լեցուն մի գործ, որի նմանը չի ծագել հայ թարգմանչական գրականության հանդեպ, ինչպես իրավացիորեն գրել է Ավդալբեգյանը: հինգերորդ դարից սկսած: «Տի՛նգերորդ դարից», այսինքն հայերեն գրերի գյուտից սկսած 1500 տարում չի հաղթահարվել նման բարդու-

թյուն, ծավալ ու միգուցև նաև բարձունք միասին վերցրած, ինչպես այդ 2000 օրում:

Սա նույնպես բացառիկ է այս անգամ պատմականորեն, նշանակում է՝ ժամանակի մեջ:

Սակայն աշխարհում և հայոց դարավոր պատմության մեջ բացառիկ հայերեն «Կապիտալը» հույժ բացառիկ է, ավելի ճիշտ՝ առասպելական է մի անհավատալի փաստով ևս:

«Տիշտակագրության» սույն պարբերության մեջ մենք փակագծերում ավելացրել ենք մի բան միայն՝ «անդրանիկ», այժմ պետք է հայտնենք, որ «Կապիտալի» Ավդալբեգյանի կատարած թարգմանությունը ոչ միայն անդրանիկն է, այլև... *անսակաղի* է: Տնարավո՞ր է պատկերացնել

- ա) աշխարհում *միակ*,
- բ) պատմության մեջ *եզակի*,
- գ) բարդությամբ *անօրինակ*,
- դ) ծավալով *անուկի* «Կապիտալ»... առանց մի տող սևա-

գրություն: Սա ֆանտաստիկ է և ամենաֆանտաստիկը փաստն է՝ **«Կապիտալը» հայերեն է թարգմանված մեկ գրով, մաքրագիր:**

Սա նաև ցավալի փաստ է, որի իմաստը պետք է ի հայտ գար հետագայում: Սևագրված են միայն չափածոների թարգմանությունները:

Տարկ է նշել, որ «Կապիտալը» թարգմանչի միակ աշխատանքը չի եղել այս 2000 օրում: 1931-1937թթ. ժամանակամիջոցում սրան ուղեկցել են այնպիսի նշանավոր գործեր, որպիսիք են «Մոսկուս Խորենացու «Պատմության» լեզուն հունարան դպրոցի շրջանների կապակցությամբ» խորագրով anti-Մանանդյան փայլուն գեկուցումը, որ հզոր արձագանք ու մեծ տպավորություն է գործել ժամանակակիցների վրա: Այնուհետև «Ջրի կոփիր Տայաստանի մեջ IX դարում» հետմահու հրատարակված գեկուցումը, «Ռուս-հայերեն երկհատոր նոր բառարանի» հեղինակումն ու հանձնաժողովի նախագահումը, «Տոփանեն և Տոփանիսյան» մենագրությունն ու բանաստեղծի ժողովածուի կազմումը, վերոհիշյալ «Մեծալուրջ գործին աշալուրջ վերաբերումը» ու «Թեթև հայացքի մասին» պատասխան հողվածներն ու էլի մի շարք մեծարժեք գործեր: Բոլորը խիստ աշխատատար, մեծ ժամանակ բաժող գործեր են և, իբրև աշխատանքային տեմպի ցուցանիշ նկատենք, որ սրանց հետ զուգահեռաբար ամբողջական «Կապիտալի» թարգմանությունը 2000 օրում՝ չնչին ժամկետ է:

Արդարությունը պահանջում է ասել նաև, որ հայերեն «Կապիտալը» հայոց լեզվով կրթել գրված գրքերից լավագույններից է, եթե ոչ լավագույնը: Հայերեն «Կապիտալը»՝ հայերենի կապիտալ է: «Կապիտալ» նշանակում է դրամագլուխ: «Գրամագլուխը»՝ դարագլուխ է՝ հայերեն գիտական թարգմանության գլուխ-գործոցը, հոգևոր և գեղարվեստական գլուխ-գործոցներ Աստվածաշունչի և Շեքսպիրի հայերեն թարգմանությունների կողքին:

Աստվածաշունչ, Շեքսպիր և «Կապիտալ» - ահա հայերեն թարգմանական գլուխ-գործոցների եռապսակը:

Ահա այսպիսի հետևությունների և հանգեցնում մի անգլոլոգրեն թոցրած «համեստ ուժերով» խոսքը:

Որքան էլ գիտակցությանն անմատչելի են վերը թվարկած փաստերը, պետք է շարունակել և հայտնել, որ «Կապիտալի» հայերեն թարգմանիչ Թադևոս Ավդալբեկյանը՝ Պարսկաստանի Մակու քաղաքի դարբին հայրապետի որդին, գերմաներենը յուրացրել է լոկ Լջվիածնի հոգևոր ձևաբանում ուսանածն ինքնուրույնաբար կատարելագործելով և ողջ կյանքում Նրևանից համարյա դուրս եկած շիինելով, ինչպես հայերի մասին գրող փիլիսոփա Ի.Կանտն ամբողջ կյանքում Բյոնիքսբերգում ապրելով:

“Ե՛րբ Թադևոս սորվեցավ այդքա՛ն գերմաներեն”, - զարմացած գրում է աշխարհներ տեսած իմաստուն բանաստեղծն՝ Ավետիք Իսահակյանը «Կապիտալի» առաջին հատորը Փարիզում ստանալուց հետո:

“Ի՛նչ հոյակապ գործ,- շարունակում է Վարպետը,- կեցցե՛ Թ.Ավդալբեկյանը. ո՞նց հերոսաբար հաղթահարել է Մարքսի դժվարահաղթ լեզվին. ... զարմանալի մարդ է. հանձարեղ մարդ է Ավդալբեկյանը, հազար անգամ կեցցե՛”:

“Միրելիդ իմ Թադևոս’ս,-

գրում է հայ մտավորականության մեկ այլ ներկայացուցիչ Ստեփան Կանայանն Ավդալբեկյանին ուղղված նամակում:

...Իմ ուսուցիչ ու հայտնի գրականագետ, Մյունխենի համալսարանի ուսուցչապետ Միրայել Բերնույսը նոր հունարենի զարգացման նշան էր համարում Գյոթեի «Հերման և Դորոթեա» վեպի թարգմանությունը:

Արդ, եթե հարություն Պետրոսյանը²⁰ «Հերման և Դորոթեա» թարգմանությամբ վկայական տվավ մեր աշխարհաբառի գեղարվեստական հասունության, քո թարգմանությունը դարձավ գիտականի զարգացման մրցագիր-դիպլոմ:

Այս արտակարգ երևույթը ուրախություն և հրճվանք է պատճառում ինձ, իբրև երկուսից էլ գերմաներենի և պատմության ուսուցչի, քունն ավելի ևս հատկապես այն պատճառով, որ Հ.Պետրոսյանի աշխատանքին ևս գործուն մասնակցություն ևս ունեցել, մինչդեռ քունին անմասն ևս մնացել:

Ըն ձեր ուսուցիչ

Ստ. Կանայան

1 հունվարի 1934 ամի.
Նրևան”

Անձնավորության որպիսի՛ գերազանցություն շրջապատի նկատմամբ՝ Գերմանիայի, Սվրոպայի, Ռուսաստանի համալսարաններում տարիներ շարունակ կրթություն ստացած հայ փայլուն մտավորականության մի ստվար բանակի համեմատությամբ, որոնք այրբենական «Վարձու աշխատանք և կապիտալի» թարգմանությունն էին “քաջքում” ծուսերենից ու գերմաներենից կեղտաջուր լցնելով նախորդների վաստակին կամ մոտ մեկ տասնյակ թարգմանությունների 30-ամյա փորձառությունից հետո, «Կոմունիստական մանիֆեստն» էին նորից “չափում-ձևում” բավարար արդյունքի այդպես էլ շիսանելով: Բայց նաև նախանձի ու շարամիտ գործողությունների որպիսի՛ հուժկու խթան, որ դրսևորվելու էր տարիներ հետո:

Նույն “համեստ ուժերով” Ավդալբեկյանը ստեղծել է “Տնտեսական զարգացման թևորիա” նոր գիտակարգը, որ միավորող և բնդհանրական օղակ է քաղաքատնտեսության և պատմական մատերիալիզմի միջև, լրացրել է Մարքսի պարզ վերարտադրության սխեմաների թևորի մնացած այն հատվածը, որ հեղինակի մահվանից հետո դարձել էր համաշխարհային կեսդարյա ապարդյուն բանավեճերի առարկա, կազմել է շրջանառության և բնդյայնված վերարտադրության նորանոր սխեմաներ, վերհանել սրա գլխավոր օրենքը նև, և ն

²⁰ Հարություն Պետրոսյան (1882-1958) - բանասեր, թարգմանիչ, ուսուցիչ: Ավտորել է Լջվիածնի Գեորգյան ձևաբանը 1904թ., հետագայում հայոց լեզու և գրագրար է դասավանդել ուսումնական-կրթական հիմնարկներում:

“Ե՞րբ Թաղևոսը սորվեցավ այդբա՞ն...”

Ո՞րտեղից այսբա՞ն...

Օղից, “*համեստ ուժերով*”:

Գիտությունն իր խոսքը դեռևս չի ասել “Թաղևոս Ավդայրեզյան”, Լրևույթի մասին: Դեռ պետք է ասվի:

Կրկին դառնանք «Տիշատակագրությանը»:

„ *Исполнен долг !* „

Ի՞նչ խոսքեր են սրանք. ու՞մ խոսքերն են. ինչու՞ օտար լեզվով. չլ՞ր կարևի, արդյոք, պարզապես ասել “պարտքը կատարված է” և սպառել ասելիքը:

Այդպես չէ արվել՝ նշանակում է չլր կարևի:

Տնարավոր է նաև այսբանն է գրել, բայց արդյոք այսբա՞նն է ասել: Միզուցև «Տիշատակագրության» բնթևրցողին հուշարար մի ակնարկ է արել մատուցման այս Լղանակով, հրահրելով ինքնությունաբար հետամուտ լինել և կթահել ասվածի իսկական նշանակությունը: Արդյոք հոգևրանական դրդապատճառ չկա՞ այստեղ թարնված:

Փորձենք պարզել, թե որտեղի՞ց են բաղված այս խոսքերը, միզուցև այնժամ շատ բան ինքնրստիներյան հասկանալի կղառնա:

Միջանկյալ ասենք, որ Թ.Ավդայրեզյանը հաճախ է դիմել ցիտատների և գրական այլազան օրինակների տարբեր հեղինակների ստեղծագործություններից ու ժողովրդական բանահյուսություններից: Դա նրան բնորոշ է և կարող է առանձին հողվածի նյութ ծառայել:

Մեր կարծիքով մեկ այլ հիշատակագրությունից է վերցված “*Исполнен долг*” խոսքը՝ Տայր Պիմենի մենախոսությունից Ա.Պուշկինի «Բորիս Գոդունով» դրամայից:

«Еще одно, последнее сказанье

И летопись окончена моя

Исполнен долг завещанный от бога

Мне-грешному»

Ահա սկզբնաղբյուրը:

Սա մեզ փոխաղբում է ուրիշ աշխարհ, ուրիշ միջավայր՝ Չուղ մենաստանի անձուկ մթնոլորտն ու վեղարածածկ Տայր Պիմենի խորախորհուրդ կերպարի ներքնաշխարհը:

Արդյոք Թ.Ավդայրեզյանը չլ՞ թարնված Պիմենի դիմանկարի հետևում: Ինքը չլ՞ հանդես գալիս նրա խոսքով: Իրեն չլ՞ վերաբերում “завещанный от бога” - գերագույն պարտքի կատարումը: Ինքը չլ՞ “համեստ ուժերով” “грешный” կամ “от бога” հանձնառու բնորյալը:

- Ի՞նքն է:

Այդ է Լղել մտքինը, թե ոչ՝ չենք կարող ասել, բայց ինքն է այդ Պիմենը: Գերագույն պարտքի կատարման առումով Պիմենի և Թ.Ավդայրեզյանի կերպարները նմանվում են, բայց այդուհանդերձ չեն նույնանում: Ի տարբերություն летописец Պիմենի, Թ.Ավդայրեզյանը գաղափարականության կենսագործողն է: Նա գաղափարի հերոս է: Իր դարաշրջանի՝ XX դարի, իր հավատի ու հավատամքի՝ մարքսիզմի, միսիոներն ու անխոնջ ջատագովր հայ իրականության մեջ: Մեկ այլ, շատ ավելի մեծ ու նշանավոր պատմական գործչի, բնդ որում հայ գործչի հետ է նույնանում նրա կերպարը, բան Պուշկինի ստեղծած Լրևական հերոսն է: Նույնանում են անգամ անուն-ազգանվան սկզբնատառերը՝ Թ. Ա.: Ո՞վ է թարնված սրանց տակ: Բաց ենք անում կետերը ...Տայր Պիմենի խոսքն է կրկնում հայ մարքսիզմի... Թ.Ա.Բ.ՈՍ Ա.Ռ.Ա.ՅԱ.Ը:

Պատմությունը, սակայն իր խմբագրումն արեց մեր ստացած նկարագրի վրա, գաղափարի հերոսից վերակերտելով գաղափարական նահատակի կերպար: Նահատակությունն ու մահ հանուն գաղափարի, որով ստանում ենք նորագույն՝ XX դարի վկա, նորագույն մարտիրոսություն՝ Թ.Ա.Բ.ՈՍ ՆԱՏԱՏԱ:

Թ.Ավդայրեզյանի միջնակ դուստր Մայիսն, իր վերջին մենագրությունը «“Յայսմավորը” ժողովածուները» վերնագրով նվիրաբերել էր հորը, գրելով. “Նվիրում եմ հորս՝ Թաղևոս Ավդայրեզյանի անմար հիշատակին”: Իսկ հայսմավորըն ի՞նչ է:

- Նահատակի կյանք:

Պուշկինի խոսքի և Ավդայրեզյանի ճակատագրի մեջ, սակայն մի զուգադիպություն ևս կա: «Կապիտալն»՝ ի՞ր ժողն էր, «Տիշատակագրությունը»՝ Ե՛ще одно և последнее сказанье- ն Լղավ, քանի որ հաջորդող Լրկշարաթյա ազատության մեջ նա այլևս ոչինչ չգրեց: Դա նրա՝ դատապարտյալի, վերջին խոսքն էր, կարապի Լրգր, որովհետև քիչ ժամանակ անց ավարտվելու էր նաև կյանքի летопись-ը:

“*Исполнен долг*”-ն իր պատմական միսիան էր: Իրականում էլ էր մշակվել ու հասունացել այն համոզմունքը, որ միայն իրեն,

և ոչ այլ մեկին, պետք է հանձնվի «Կապիտալի» թարգմանությունը:

«Գու՛ր եք այն մարդը, որին հանձնարարելի է այդ գործը», - ասել էր Ադասի Խանջյանը գործն առաջարկելիս:

«Գուր ամենահարմար և ամենաձևոնհաս մարդն եք նման հոյակապ գործի համար» - նամակում գրել է Արշավիր Մևիթյանը²¹:

«Տիշատակագրության» վերջին պարբերության մեջ իշխում է Լմոցիոնայ մթնոլորտն ընդհանուր տերստի գործնական տոնից հետո: Դա թարգմանչի ինքնարոյս և անթարույց խոսքն է, ուղղված ներկա ու գալիք ընթերցողներին, այսինքն նրանց ում հասցեագրված է «Տիշատակագրությունը»:

„Լիահույս եմ, որ ոչ միայն նորահաս ու վերահաս սերունդներն, այլև հասուն ժամանակակիցներն ըստ արժանիության կգնահատեն իմ այս բոլորանվեր մասնակցությունն աշխատավոր մարդկության ազատագրման մեծ գործին:»

Այսպիսի լուսավոր սպասելիքներով նա գրիչը վայր դրեց բուռն ուրախության գեներում, հպարտ այն գիտակցությամբ, որ իր շնորհիվ մի ողջ ժողովուրդ՝ հայ ժողովուրդն իր բազմահազարանոց աշխատավորական բանակով գինվորագրվելու է առաջադեմ համայն մարդկության այն վեհ գաղափարին, որ կոչվում է «ազատություն»: Դա ի՛ր անձնական լուսման է մարդկության պատմության մեջ: Այդ մեծ գաղափարի կենսագործմանն էր ի սպաս դրել նա իր հզոր տաղանդն ու անձր և ինչպես պարզվեց, նույնիսկ կյանքը: «Բոլորանվեր» բառը հոսմանից է «անմնացորդին» և դա մարմնավորվեց այնպիսի շափերով ու բովանդակությամբ, որ ոչ միայն ինքն, այլև ոչ որ չէր կարող երևակայել:

«Տիշատակագրության» ընթերցողը, որի համար թարգմանչի ներկան ու կարճատև ապագան պատմական անցյալ է, վերջին պարբերությունն ընկալում է թարգմանչի նկատմամբ անհուն սրտացավության և ավստասանի դառն զգացողությամբ, մոտալուտ հուսակործանության վերջնակետից նայելով նրա միրամենքով հարուստ ապագային: «Լիահույսն» այստեղ փշուրփշուր է լինում ամեն բայլափոխի յուրաքանչյուր բառի հետ: Նա պետք է ընդմիջտ հրաժեշտ տար այդ լուսավոր հույսերին ու

սպասելիքներին իր հետ տանելով անհատակ վիրավորանք, թե ինչպե՛ս «*ըստ արժանիության գնահատեցին հասուն ժամանակակիցները*»:

Պայքարեց մարդկության ազատագրության համար՝ նահատակվեց ու մահկանացուն կնքեց բանտի մուրթ նկուղներում անխաչ ու անգերեզման:

Իսկ նորահաս ու վերահաս սերունդն է՞րբ:

«Մնացյալը լռություն է... կարելի էր կրկնել Դանեմարթայի թագաժառանգ Տամլետի վերջին խոսքը՝ բայց չի կարելի:

Այստեղ պետք է նոր էջ բացվեր պատմելու համար, թե ճակատագիրն ինչպես կենդանության օրոք, այնպես էլ հետմահու, ծայրաստիճան անողոր եղավ նրա նկատմամբ և ազգային հպարտության նմուշն իսպառ արժեզրկվեց հետագայում:

Մի վերջին հայացք նետենք «Տիշատակագրությանը»:

Ի՞նչ ենք տեսնում:

Մի մեծ հաշվեկտրություն: Ավղայրեզյանը հաշվետու է բոլորի առջև: Պարբերությունների բաժանելով՝ առաջինը հաշվեկտրություն է ժամանակակիցների առջև, երկրորդն՝ իր ժողովրդի առջև, «Исполнен долг»-ն՝ իր առջև, վերջապես վերջինը՝ պատմության:

Տամբնդհանուր զեկույց, նա պարզերես է բոլորի առջև:

«Տիշատակագրության» վերջում ստորագրությունն՝ «*Թադ. Ավղայրեզյան*», ամիս-ամսաթիվ՝ «1937թ». «*հուլիսի 10-ին*» և հասցե՝ «*Երևան*», ուր նա երկու շաբաթ անց մուտք էր գործելու պահակագործի ուղևորությամբ որպես կալանավոր և «*Լիբկնեխտի փ. №20*», որտեղ ծնվել էին նրա բազմաթիվ երկերը, բայց ուր նա այլևս չէր մտնելու:

Այսպիսին եղավ «*հանրօգուտ մի նշանավոր նպատակակետի հասնողի ուրախությունը*»:

Սա Գողգոթա է:

«Օ՛ բարբեր, օ՛ ժամանակներ»:

Նորահաս ու վերահաս սերունդներին է թողնված Կարլ Մարքսի «Կապիտալը» հայերեն

Գործն է անմահ:

²¹ ՀԱՍ. ֆ. 393, գ. 240, էջ 33-34

«Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան»

«Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան»

“Մարքսիստական տնտեսագիտության երկու մասերը - մարքսիստական քաղաքատնտեսությունն ու տնտեսական զարգացման մարքսիստական թևորիան - հավասարապես մշակված չեն մարքսիզմի հիմնադիրների կողմից: Մինչդեռ մարքսիստական քաղաքատնտեսությունը կարող է ցույց տալ այնպիսի մի նշանավոր կոթող, որպիսին է «Կապիտալը» սիստեմատիկ ու խոշոր հատորներով, տնտեսական զարգացման մարքսիստական թևորիան զուրկ է հիմնադիրներից հատկապես այս ասպարիզին նվիրված փոքրիկ գրքույկից էլ”¹:

Գնահատելու համար սույն քաղվածքի նշանակությունը, որով սկսվում է Ավդալբեգյանի ուսումնասիրությունն անհրաժեշտ է պատմական մոտեցում նշված հարցերին:

Ի՞նչ բան է տնտեսական զարգացման թևորիան՝ անհայտ է:

Դա գիտակարգ է, որ սփռված է Մարքսի ժառանգության մեջ, բայց չի շարադրված թղթի վրա: Գիտակարգ, որով գործել է Մարքսը, բայց չի սիստեմավորված ամբողջական կառույցի, թե տնտեսական զարգացումը բա՞նի հիմնական շրջանների պետք է բաժանել կամ բա՞նի հասարակական-արտադրական ֆորմացիաներ են գոյություն ունեցել մարդկության պատմության ընթացքում:

“Մարքսը ոչ մի տեղ ստույգ ու պարզորոշ չի շարադրել իր ըմբռնումը տնտեսական զարգացման մասին, - գրել է Ա.Աաուց-կին,- բայց նրա ասելիքը եզրակացնել հնարավոր է եթե մարդ հավաքի Մարքսի այս նյութի վերաբերմամբ արած ցաք ու ցրիվ դիտողությունները և արանցից բխող *մեթոդը կիրառի*

¹ *Թայ. Ավդալբեգյան* Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան, Ա տպ. Երևան 1925, էջ 5, Բ տպ. 1926, էջ 5:

տնտեսական պատմության հայտնի իրողությունների նկատմամբ” (րնդգծումը մերն է:- Ա. Մ.)²:

Մարքսից բացի ...

“Դժբախտաբար Մարքսի ու Լենգելսի ավագ աշակերտների՝ Ֆ.Մերինգի, Կ.Կաուցկու, Գ.Պլևխանովի և Ռ.Լյուբսևմբուրգի երկերում էլ,- գրում է Ավդայրեզյանը,- դժվար է մատնանշել տնտեսական զարգացման մարքսիստական թևորիային նմիրված մի հատուկ գրվածք, որ ժողովրդականացնելով հիմնադիրների ասածներն այս խնդրի մասին- փարատեր վարանումը կրտսերների ու հետնորդների բանակում և վերջ տար քայլամուտը պտույտներին ու պտրումներին անհարազատ ավերում”³:

Կարճ ասած՝ դա գիտակարգ է, որ կա միայն վերացականորեն կամ ավելի ճիշտ՝ դեռևս չկա:

Տնտեսական զարգացման թևորիայի կողքին “ի՞նչ բան է քաղաքատնտեսություն” հարցն այսօր ծիծաղելի կարող է թվալ իր միամտությամբ, իսկ այն ժամանակ, երբ գրվել է Ավդայրեզյանի գրքույկը, սույն հարցը հենց սուսկ “ի՞նչ բան է” հարցադրումով քննարկվել է վերին ատյաններում, դիցուք՝ Տամամիութենական կոմունիստական ակադեմիայում, որից հետո ծագել են քաղաքատնտեսության, այսպես կոչված, “լայն” կամ “նեղ” իմաստով հասկացությունները:

Ի՞նչ են նշանակում սրանք:

Այս հարցի պատասխանը գտնում ենք Թ.Ավդայրեզյանի ուսումնասիրության երկրորդ՝ 1926 թվականի, լրացված հրատարակության առաջին ծանոթագրության մեջ:

“Մեր այս տողերից կարելի է և անհրաժեշտ է կորակացնել, որ մենք չենք րնդունում քաղաքատնտեսության այն ըստ ամենայնի սխալ որոշումը, թե այս գիտական դիսցիպլինայի ուսումնասիրության առարկան «ապրանքային-կապիտալիստական» տնտեսությունն է միայն և ոչ թե նաև մյուս, մինչկապիտալիստական ու հետկապիտալիստական տնտեսությունները: Ըստ Լենգելսի, քաղաքատնտեսությունը պետք է ուսումնասիրել «այն պայմաններն ու ձևերը, որոնցում տարբեր մարդկային հասարակություններն արտադրել, փոխանակել և սրա համապատասխան էլ բաշխել են արդյունքները: Քաղաքատնտեսության զար-

գացած շինելու հետևանքով է, ասում է նա, որ մեր գիտելիքները սահմանափակվում են համարյա բացառապես արտադրության կապիտալիստական եղանակի ծագումով ու զարգացմամբ: Այնինչ պետք է հետազոտել մինչբուրժուական տնտեսություններն էլ, մի ասպարեզ, որտեղ մինչև այժմ միակ աշխատանք կատարող եղև է Մարքսը: Այսպիսի լայն ծավալով քաղաքատնտեսությունը դեռ պետք է ստեղծվի», -կտակել է Լենգելսն կախողներին⁴ (Փ.Энгельс, «Анти - Дюринг», М - Л, 1923, էջ 134 -135)” (րնդգծումը մերն է:- Ա.Մ.):

Այսպիսով մեկ հասարակարգի մեկուսի քաղաքատնտեսությունը “նեղ իմաստով” քաղաքատնտեսությունն է, այն դեպքում, երբ Լենգելսի մատնանշած “լայն ծավալով”, կամ “լայն իմաստով” ստեղծվելիք քաղաքատնտեսությունն րնդգրկելու է բոլոր հասարակարգերը: Յուրաքանչյուր հասարակարգ իր քաղաքատնտեսության «Կապիտալը» պետք է ունենա:

“Փոխանակ այս կտակի իրագործման մասին տրնելու ու ճգնելու,- շարունակում է Թ.Ավդայրեզյանը,-Մարքսի ու Լենգելսի անունով երդվող բազմաթիվ ներքինի իմաստակներ, օրինակ՝ Լ.Լյուբսևմով, Ի.Ռուբին ու նրանք, որոնց անունը լեզևոն է, քաղաքատնտեսության շրջանակները նեղացնում են սաստիկ և սահմանափակում «կապիտալիստական» ու կամ «ապրանքային-կապիտալիստական» (!?) տնտեսությամբ մինչկապիտալիստական ու հետկապիտալիստական տնտեսությունների նկատմամբ յուրօրինակ ազնոստիցիզմի ճանապարհի հարդարելով: Ուրախալի է, որ վերջին ժամանակներս ռուս մարքսիստական գրականության մեջ տնտեսագիտական ազնոստիկները դեմ խիզախ պայքար է սկսել հայտնի մարքսիստ տնտեսագետ Ի.Ստեպանովը: Տմմտ. И.Степанов «Что такое политическая экономия»- «Под знаменем марксизма» журнал, М.,1925г., №1-2, այլև «Вестник Коммунистической Академии», 1925, №11: Նույն մտքերն Ստեպանովը շարադրում է նաև այն առաջաբանում, որ կցել է յուր ու Ա.Բոգդանովի «Курс политической экономии» գրքի I հատորի 4-րդ հրատարակությանը (М - Л, 1925)”⁵:

Այս ծանոթագրությունը հզոր լուսարձակի լույս է սփռում իրականության վրա:

² Տե՛ս Բ.Сальволи, Капитализм в античном мире. Пер. Р. Гальперина, изд. 2-е Харьков, 1923, стр.4 - 6, Կաուցկու առաջաբանը

³ Տե՛ս Տյումենն, Ա.Մ. Աշխատանքի պատմությունը, թարգմ. Թ.Այ. Ավդայրեզյանի, Ա. տպ. Երևան, 1924, Բ տպ. Լենինական, 1925, Գ տպ. Երևան 1927, թարգմանքի առաջաբանը, էջ IV:

⁴ Տե՛ս Թ.Այ. Ավդայրեզյան, Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թևորիան, Երևան, 1926, Բ տպ. էջ 7-8, երկրորդ հրատարակության ծանոթագրությունը

⁵ Նույն տեղում:

Թ.Ավդալբեգյանի գրքույկի առաջին հրատարակության ավարտման պահին՝ 1924-ի դեկտեմբերին, հեղինակի մտքով մի-գուցե չի անցել, որ բնդամենը մեկ ամիս անց այդ ինքնրստինք-յան հասկանալի հարցի շուրջ ծավալվելու և այդքան բուռն՝ շա-րունակ երկու ամիս տևող (1925-ի հունվար-փետրվար), քննար-կում գիտության բարձրագույն և շեղունակում, որտեղ խորհրդա-յին գիտության վերնախավն ի վերջո հանգելու և բնդհանրապես բաղաբատնտեսության լիզվիդացիայի հակազիտական և ողոր-մելի եզրակացության⁶:

Ծանոթագրության՝ «ներքինի իմաստակներ» որակումով Ավդալբեգյանը ներկայացնում է երկու անուն բնդամենը: Նա չի հիշատակում «նեղ իմաստով» քաղաքատնտեսության տեսակետի պարագույն, «խոշորագույն ու մեծարժեք տեսաբան» (Լևին) Ն.Բուխարինին, որի հայտարարությամբ՝ «կապիտալիզմի վերա-ցումով կվերանա քաղաքատնտեսությունը»: Չի հիշատակում նաև Ա.Բոգդանովը, որ «լայն իմաստով» քաղաքատնտեսություն պաշտպանելով հանդերձ, «ես պետք է կտրականապես սահմա-նագատվեմ Ստեպանովից, որի հետ ինձ հաճախ շփոթում են, - խոսքով է սկսում, - և Իվան Իվանովիչի (Ստեպանովի:-Ա.Մ.) ու Նիկոլայ Իվանովիչի (Բուխարինի:-Ա.Մ.) վիճաբանության մեջ ինձ թույլ եմ տալիս չեզոք դիրք գրավել, իհարկե բացարձակա-պես չգիտեմ, ամենաանգն չեզոքություն», - հայտարարու-թյամբ ամենաանգն դիրքորոշումն է բնդունում Ի.Ստեպանովի վաղեմի գործընկերը: Առավել ևս չեն հիշատակում դեռևս 1903 թվականից «նեղ իմաստով» քաղաքատնտեսության կողմնակից-ներ Մ.Տուգան-Բարանովսկին, Վ.Չոմբարտը, Պ.Մարուզեն, Ա.Նիլսենից, ինչպես նաև վերոհիշյալ քննարկմանը մասնակից ակնավոր դեմքեր Շ.Մ.Բվոլայցկին, Ե.Ա.Պրեորթոնսկին, Վ.Վ.Օսինսկին, Մ.Ն.Պոկրովսկին, Դ.Մ.Մարեցկին, Ա.Ն.Սլեպ-կովը, Մ.Ի.Ռոզիտը, Ա.Ֆ.Կոնը, Յա.Ն.Ստենը, Ա.Մ.Կրիցմանը, Ն.Ի.Սմիրնովը, Ա.Ա.Սապոժնիկովը և նրանք, որոնց անունն իրոք լեզունն է («լեզունն է ... անունը, որովհետև շատ են» Մար-կոս, V:9): Բոլորը միաբերան մինչև 1930-ական թվականների կե-սերն ամրապնդել են «նեղ իմաստով» քաղաքատնտեսության սահմանափակ տեսակետը:

Այս մեծարժիվ լեզունի և կախումների համատարած շրջա-պատում Ի.Ստեպանովը բացառություն է: Նա բնդհանրապես

բացառիկ և խիստ թերագնահատված դեմք է ռուս մարքսիզմի պատմության մեջ: «Լայն իմաստով» քաղաքատնտեսության պիոները լինելուց ու «Կապիտալի» վերջին, լավագույն թարգ-մանության աշխատանքը գլխավորելուց բացի, Ի.Ստեպանովն առաջինն էր արտահայտել Մարքսի վերարտադրության սխեմա-ները սոցիալիստական տնտեսության մեջ կիրառելու ողջախոհ գաղափար⁷:

Բայց ավելի վաղ ու կատարյալ քան Ի.Ստեպանովն, ավելի լայնախոհ ու հեռատես քան Ն.Բուխարինն, ավելի աներկբա ու հաստատակամ քան Ա.Բոգդանովը, հայ մարքսիստ Թ.Ավդալ-բեգյանն ի սկզբանե դավանել է «լայն իմաստով» քաղաքա-տնտեսությունը և տեսակետներ արտահայտելուց բացի, ինչպես ոչ-ոք, առաջինն է գործնականորեն ստեղծել «Սոցիալիստական տնտեսության պարզ վերարտադրության ծավալուն աղյուսա-կը»⁸: Այդ պահին ծավալված բանավեճերի առթիվ նա, ինչպես տեսանք, մեծաբանակ ու հզոր լեզունի մեջ չէ, ողջախոհ փոքրա-մասնության մեջ էլ չէ, որը չկա, այլ հատուկենտ միայնակներից է և ոչ միայն չի թարցնում, այլև բացահայտ խանդավառությամբ ողջունում է Ի.Ստեպանովի «խիզախ պայքարը» տնտեսագիտա-կան ազնուստիկների դեմ:

Նվ այսպես՝ ոչ միայն գոյություն չունեցող տնտեսական զարգացման թևորիան, ինչպես Կառուցելու ժամանակ այնպես էլ այդ պահին, դեռ պետք է պեղվեր «ցար ու ցրիվ դիտողություններից», այլև «Կապիտալի» նման կոթող ունեցող քաղաքատնտ-եսություն գիտակարգ լիարժեք դառնալու համար, ինչպես Էն-գելսի, այնպես էլ այդ ժամանակ «դեռ պետք է ստեղծվեր»: Բայց եթե քաղաքատնտեսության մեջ արդեն կարելի էր տարբերել անմիջականորեն Մարքսի ստեղծածն ու նրա նախանշած մար-քսիստական ուղղությունը, որով գործել ու գործելու են հետև-վորդներն, ապա տնտեսական զարգացման թևորիայում նոր պետք է բացահայտվեր այն «մեթոդը, որ կիրառելի էր պատմու-թյան հայտնի իրողությունների նկատմամբ»:

Թ.Ավդալբեգյանը ձևովամուխ է լինում այդ թևորիայի կերտմանը մեկիկ-մեկիկ հավաքելով կմախքի ողերն ու ոսկոր-ները:

⁷ Լայն տեղում:

⁸ *Тод. Аудалбегян*, Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства, Эривань, 1932г.

Նախ՝ նա պարզաբանում է *տնտեսական զարգացման թևորիա* գիտակարգի էությունն ու դրա տարբերությունը *քաղաքատնտեսությունից* ու *տնտեսական զարգացման պատմությունից*: Բաղաբառնականությունն, ինչպես ասվեց, ուսումնասիրում է հասարակությունների արտադրական-տնտեսական հարաբերությունները՝ տնտեսական կատեգորիաներն ու սրանց ներքին օրինաչափություններն, իսկ տնտեսական զարգացման թևորիան՝ հասարակական տնտեսական ֆորմացիաների օրենքները, որը պետք է տարբերել առանձին երկրի կամ տերիտորիայի տնտեսական զարգացման ինքնուրույն պատմությունից: Հիշտ այնպես ինչպես հասարակագիտությունն ընդհանուր առարկան է տարբերվում որևէ երկրի մասնակի պատմությունից:

Այս երեք գիտակարգերի հստակ տարբերացումը միմյանցից ունի տեսաբանական կարևոր նշանակություն:

Այնուհետև Թ.Ավդալբեգյանը վեր է հանում տնտեսական զարգացման մարքսիստական թևորիայի առաջնային հատկանիշը՝ *բաժանման հիմունքը* (Fundamentum divisionis), որով Մարքսն ամբողջական տնտեսական զարգացումը շերտ-շերտ բաժանել է հասարակարգերի: Սրա որոշումը հիմունք լինելուց բացի, հնարավորություն է տալիս մարքսիստական թևորիան սահմանագատել մարքսիստի հավակնորդ հեղինակների բազմաթիվ թևորիաներից: Մեկ առ մեկ քննարկելով տնտեսագետ-տեսաբաններ Է.Վանդերվելդի, Է.Բերնշտեյնի, Կ.Կաուցկու, Ա.Բոգդանովի, Ա.Տյունենների, Բ.Տիդեբրանդի, Գ.Շմոլերի, Կ.Բյուխսերի, Պ.Մասլոփի, Ֆ.Լիստի, Մ.Պոկրոզկու, Ն.Ռոզկովի թևորիաները, Թ.Ավդալբեգյանն այս կույտի միջից մաղում է Մարքսի պարբերացման հիմունքի ոսկեհատիկը՝ *արտադրական հարաբերությունները*:

Բայց որպիսի՞ հարաբերությունները: Արդյո՞ք բոլորը պիտանի են հիմունք դառնալու համար:

Այս կետում օրինակներն այնու սպառվում են, բայց Թ.Ավդալբեգյանի վերլուծությունը շարունակվում է, հասցվում է այն կորահանգման, որ պարբերացման հիմունք կարող են լինել միմիայն արտադրամիջոցների բաշխումից ստացվող *հակադիր* արտադրական հարաբերություններն, այլ կերպ՝ *արտադրական-զույրային հարաբերությունները*:

Ահա բաժանարարը:

Այժմ պետք է փորձ անել հետևել տնտեսական զարգացման բուն պարբերացմանը, որ անց է կացրել Մարքսը: Նթև հի-

մունքը որոշելիս, ինչպես տեսանք, անհրաժեշտ էր ընդարձակվել տասնյակ հեղինակների թևորիաների մեջ՝ առանձնացնելու համար մարքսիստականն, ապա Մարքսի բուն պարբերացումն ուրվագծելու համար Ավդալբեգյանը թափանցում է նրա վիթխարի ժառանգության “ծակ ու ծուկերն” օգտվելով իրեն մատչելի լեզուներով հրատարակված ողջ զրականությունից, ընդհուպ մինչև նամակագրությունն ու զեկուցումները:

Նարցն անհամեմատ բարդանում է նրանով, որ պարզվում է Մարքսի տնտեսական զարգացման թևորիան մեկ անգամ ընդմիջտ սահմանված չի եղել, այլ ձևավորվել է ամբողջ կյանքի ընթացքում երկար տարիներ և ունեցել է իր զարգացման և տապները հետ գնալով դեպի պատմական անցյալը: Սկզբում ընդունվել է 4 հասարակարգ՝ *անտիկ* (ստրկատիրական), *ֆեոդալական*, *բուրժուական* (կապիտալիստական) ու *սոցիալիստական*, այնուհետև Լվոյուցիայի որոշակի փուլում Ավդալբեգյանը Մարքսի աշխարհայացքի մեջ նշմարում է նրա հակումը ստրկատիրական տնտեսությանը նախորդած մի ուրույն կացութաձևի նկատմամբ, որտեղ գլխավոր արտադրամիջոցի՝ *հողի մասնավոր սեփականությունը չկա, իսկ անմիջական արտադրողն, ի տարբերություն այլ ֆորմացիաների, համայնքի ազատ անդամն է՝ համայնիկը*:

Սա միանգամայն նորություն էր:

Մարդկության զարգացման օրրանում, հասարակական հակամարտ շերտեր պարունակող տնտեսակարգերից առաջ՝ անհայտ ու անանուն մի կացութաձև, որտեղ հողը համապետական է, իսկ արտադրողը ոչ ստրուկ է, ոչ ճորտ, ոչ էլ ազատավարձու բանվոր, որ արտադրակազմակերպող հատկացվի հայտնի տնտեսակարգերից որևէ մեկին, այլ մի նոր՝ չորրորդ ձևն է:

Ավդալբեգյանն այս կացութաձևն առանձնացնում է որպես ինքնուրույն ֆորմացիա, և առաջարկում է “ասիական” անվանումը:

* Ի տարբերություն ասիական արտադրակազմակերպության վերաբերյալ Թ.Ավդալբեգյանի մասնանշած հատկանիշների հստակ ձևակերպմանը խորհրդային ժամանակաշրջանում տասնյակ տարիներ ընտրվելու էր այդ հասարակարգի սակ լինելը ինչն էլու հարցը ամեն բալլալիտի նույնպես կամ նմանեցվելով նախնադարյան կրմուխի կամ սկրիտական ֆեոդալիզմի հետ: Տե՛ս E. Воргс Об азнатском способе производства, «Очерки по проблемам полнэкономии капитализма», М., 1964, стр. 358-382; Л.В.Данилова Становление марксистского направления в советской историографии эпохи феодализма. «Исторические записки», т.76 М., 1965; Ю.М.Гарушица Об азнатском способе производства. «Вопросы истории», 1966, №2

Մարգարեական կանխատեսությամբ և՛ նշված հատկանիշները, և՛ նույնիսկ «ասիական» անվանումը փառավորապես հաստատվեցին Մարքսի անտիպ մնացած «1857 - 1861թթ. տնտեսական ձևագրերի» լույս աշխարհ գալուց հետո՝ 1939 թվականին, այսինքն Թ.Ավդալբեգյանի գրքույկից 15 տարի անց, երբ հեղինակն արդեն չկար:

«Ասիական» ֆորմացիայի կապակցությամբ ուշագրավ են մարքսիզմի հիմնադիրներ Մարքսի և Էնգելսի միջև եղած տարաձայնություններն այնքան արմատական հարցի շուրջ, որպիսին է ֆորմացիաների թիվը: Ըստ Ավդալբեգյանի մարքսիզմի հիմնադիրներից յուրաքանչյուրն ունեցել է տնտեսական զարգացման իր թևորհան՝ Մարքսն ընդունել է տնտեսական-հասարակական 6 ֆորմացիա, ներառյալ ասիականն՝ Էնգելսը 5, բացառյալ վերջինս¹⁰:

Սա դարձյալ նորություն էր՝ Մարքսին ու Էնգելսին համատարած լուսանկարչական պատճեններ տեսնելու նախապաշարմանը հակառակ¹¹: Ավելին, մի առանձին գլուխ է հատկացվում տարբեր տեսակետներ ունեցող մարքսիստներ Ֆ.Էնգելսի, Գ.Պլեխանովի, Ա.Լյուքսեմբուրգի ու Վ.Լենինի արձագանքներին պիլիպան տնտեսակարգի վերաբերյալ, որով ի հայտ են գալիս այն տարբերությունները, որ գոյություն ունեին և պետք է ունենան անմիջականորեն Մարքսի և ընդհանուր մարքսիզմի ուսմունքի ներկայացուցիչների միջև:

Մարքսիստական կլասիկ գրականության ահա այսպիսի անմխիթարական ֆոնի վրա, որտեղ ասիական տնտեսակարգի մասին լուրջ թուղցիկ արձագանքներից կամ անհամաձայնելի ձևակերպումներից բացի ոչինչ չկար, Ավդալբեգյանը բացահայտում է սրա գլխավոր հատկանիշները՝ արտադրամիջոցների պատկանելիությունն ու անմիջական արտադրողի ով լինելը, հասարակարգի գոյության հարաբերությունները, արտադրության եղանակը, վերջապես տնտեսության բնույթը:

¹⁰ *Տրամեն, Ա.Բ.* նշված աշխատության թարգմանչի առաջարկը, էջ 14:

¹¹ Խորհրդային հասարակարգի ստեղծման մեջ Ավդալբեգյանի ուսումնասիրությունից 5-6 տարի անց ընկալումներ սկսվեցին ասիական ֆորմացիայի շուրջ, որոնք հանդեսովն զրա միտման տեսակետին 70-ական թվականների կեսերից կրկին հետաքրքրություն է նշմարվում դրա նկատմամբ, բայց դարձյալ հին ձևով՝ Մարքսի ու Էնգելսի հայացքների նույնությամբ: Այդպիսիններից իշտատակելի են. Качановский, Ю.В. «Рабовладение, феодализм или азиатский способ производства», М., 1971; Никифоров, В.Н. «К.Маркс и Ф.Энгельс об азиатском способе производства», (в кн.: «Проблемы докапиталистических обществ в странах Востока», М., 1971); Тер-Акопян Н.Б. «К.Маркс и Ф.Энгельс об азиатском способе производства», (Народы Азии и Африки 1965, №2, стр.75, и в кн. «Из истории марксизма и международного рабочего движения», М. 1973.) и т.д.

Մարքսի տնտեսական զարգացման թևորհայի վերջնական ձևավորումն ավարտվում է նախնադարյան կոմունիստական ֆորմացիայի մուծումով, որ նույնպես ի հայտ է գալիս հիմնադիրների և վոյուցիոն զարգացման ընթացքին հետևելու շնորհիվ և ամբողջությամբ ստացվում են 4 դասակարգային և 2 անդասակարգ տնտեսություններ, որոնց մասին հարցերն ու պատասխաններն Ավդալբեգյանը պատկերում է աղյուսակի ձևով:

(Տե՛ս էջ 144)

Ավդալբեգյանի գրքույկի 1926թ. երկրորդ, լրացված հրատարակությունն ունի ինքնուրույն գիտական արժեք, որտեղ տնտեսական զարգացումը բնված է դիալեկտիկայի օրենքների կիրառումով՝ ժամանակի և տարածության մեջ, աստիճանական և թռիչքներով զարգացումը, առաջնությամբ ու հետոնությամբ հնարավորությունը և այլն, ինչպես նաև թևորհայի, մասնավորապես ասիական ֆորմացիայի նշանակությունը Տալստանի տնտեսական զարգացման պատմության ուսումնասիրման համար:

Վերջում անհրաժեշտ է նշել, որ ստեղծված լինելով 20-ական թվականների կեսերին՝ 1924-1926 թվականներին, հայ ընթերցողների համար նախատեսված ուսումնասիրությունը մեծ առաջխաղացում էր, կարելի է ասել՝ նշանավոր թռիչք էր, որն այսօր էլ իր քննարկած հարցերի ընդգրկումով, մշակվածության աստիճանով, ինֆորմատիվ հարստությամբ, կանխատեսումներով ու գիտական մակարդակով ավարտուն և ակտուալ խոսք է: Այսօր էլ են տեղի ունենում հասարակական այն տեղատվություններին ու ֆորմացիաների առաջնությամբ ու հետոնությամբ պրոցեսները, որոնք տեսականորեն հիմնավորված են

Թ ա դ ե ո ս Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն ի

«Կարլ Մարքսի

տնտեսական զարգացման թևորհայում»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՐԳԵՆՍԱՅԻՆ ԱՆՄՈՒՄԸ (ՊԵՐԲՈՒԳՅԱՅՔԱՆՆՆ) ՀՈՏ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ

մեկուկն - արձագ	Տեսանալի անունը	ԱՐՎԻՆԵՆ արտադրող միջոցառվող	ԱՐՎԻՆԵՆ արտադրող սահմանափակ առևտրային ընկերություն	ՈՐՎԻՆԵՆ արտադրող սահմանափակ առևտրային ընկերություն	Կապիտալի հարաբերակցություններ	Բնակիչի և արտադրողի արտադրանք	Տեսանալի ընկերություն
I	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՄԱՆՎԱՅՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	ՏՈՒՄԻՆ մյուս անձր համայնքին կամ համայնքին, արդատ շինականին	ՏՈՒՄԻՆ (դեմոկրատական սահմանափակ առևտրային ընկերություն)	ՏՈՒՄԻՆ (համայնքին) կամ արդատ շինականը	ՏՈՒՄԻՆ	ՏՈՒՄԻՆ	Մարտիկայի Ստեփանյան
II	ԱՍՏԻՂԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Սարգսյան մյուս անձր համայնքին կամ համայնքին, արդատ շինականին	Սարգսյան (դեմոկրատական սահմանափակ առևտրային ընկերություն)	Սարգսյան (համայնքին) կամ արդատ շինականը	Սարգսյան	Սարգսյան	Սարգսյան
III	ԱՍՏԻՂԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Սարգսյան (միջոցառվող կամ արդատ շինականը)	Սարգսյան	Սարգսյան	Սարգսյան	Սարգսյան	Սարգսյան
IV	ՖԻՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Հարստություն	Հարստություն	Հարստություն	Հարստություն	Հարստություն	Հարստություն
V	ԲՆԱԿԻՇՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Կապիտալիտական	Կապիտալիտական	Կապիտալիտական	Կապիտալիտական	Կապիտալիտական	Կապիտալիտական
VI	ՍԵՐՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ	Սերյանյան արտադրող կամ արտադրող հաստատություն	Սերյանյան (արտադրողի սահմանափակ առևտրային ընկերություն)	Սերյանյան (արտադրողի սահմանափակ առևտրային ընկերություն)	Սերյանյան	Սերյանյան	Սերյանյան

Հավելված

Հայերեն «Կապիտալի»
ձեռագրերի գրոհուս

Խորհրդակցություն կուսիքատում

1) ա) Հավելյալ արժեքի փոխարեն *հավելարժեք*:

(խմբագրության մակագրությունը «կապիտալի» I հատորի հայերեն թարգմանության վերջին բաժիններում. տերմինը մտցրել ենք «Ռուս-հայերեն նոր բառարանի» մեջ):

բ) ածական կազմելու առավելությունը. *հավելարժեքային* (համամասնություն են):

գ) բարդ բառերի հարմարություն.

Mehrwertsrate = հավելարժեքնորմա,

Mehrwertsteil = հավելարժեքմաս.

Ռուսերեն норма прибавочной стоимости = 25 տան

часть = ..

հայերեն = 14 և 12 տան

2) ա) Überarbeit – գերաշխատանք,

Überzeit – գերժամանակ,

Überprodukt – գերարդյունք,

Überwert – գերարժեք,

Überarbeitung – գերաշխատակցում,

Überstunde – գերժամ

(Ռուսերենը՝ дополнительный, добавочный, сверхурочный են)

Գեր-ը միշտ չի նշանակում գերազանց, օրինակ՝ *գերմարդ*, այլ՝ հաճախ նշանակում է նաև *ավելի*. օրինակ՝ *գերարտադրություն*, *գերակատարում*, *գերակշռել* են:

բ) ածական կազմելու առավելությունը. *գերաշխատանքային*, *գերարժեքային* են

3) Kosten der Produktion – արտադրության ծախսեր,

Produktionskosten – արտադրածախսեր,

Selbstkostenpreis – ինքնածախսագին

ա) Խնդրի ձևական, ոճական կողմը. Մարքսը տալիս է երկը ձև, թարգմանիչը պետք է տա նույնպես երկը ձև: Ռուսերեն թարգմանությունն ամենուրեք տալիս է մի ձև – издержки производства.

բ) Խնդրի գիտական կողմը. կարելի՞ է սրբագրել հեղինակի տերմինաբանությունը. կարծում եմ՝ ո՛չ: Տերմինաբանության գտումը ոչ թե թարգմանիչ գործն է, այլ ուսումնասիրողի: Եթե Մարքսը մի բարդ տերմին է տալիս Preis = *գին* բաղադրամասով, թարգմանիչը պետք է նույնն անի: Հակառակ դեպքում նա թևորհապես ավելի է մատուցում, քան հանձնված է իրեն:

4) Kostpreis – ծախսագինը = C + V, որ արժեքից բիչ է:

Wertpreis – արժեքգինը = C + V + M, մի գին, որ հավասար է արժեքին:

5) Zirkulirendes Kapital – շրջանառու կապիտալ

flüssigen Kapital – հոսուն կապիտալ

Ըստ Լույթան սրանք նույնն են, բայց բանի, որ Մարքսը նույն գաղափարի համար գործ է ածում երկու տարբեր արտահայտություն թարգմանիչը պետք է նույն կերպ վարվի: Ռուսերենն սկզբում ու բազմաթիվ անգամ գործ է ածում հատկապես II հատորում оборотный капитал երկու արտահայտության փոխարեն էլ, հետո գիծը շտկում է: Հայերենը հենց զլխից տալիս է տարբերացված տերմինաբանությամբ:

6) fixieren – սեւեռել, սեւեռացնել,

fixieren sich – սեւեռացվել,

fixierung – սեւեռում, սեւեռացում, բայց

fixes Kapital – հիմնական կապիտալ: Գերմաներենում ստացվում է *համանուն* բառերի շղթա. օրինակ,

«Die Arbeitsmittel fixieren sich als fixes Kapital».

Ռուսերենում ու հայերենում ստացվում են տարբեր բառեր:

«Средства производства фиксируются как основной капитал».

«Աշխատամիջոցները սեւեռացվում են իբրև հիմնական կապիտալ»: Ռուսերենը նախադասության կոլորիտը պահպանելու համար երբեմն отсебятина է մտցնում, օրինակ, մի տեղ տեքստում փոխազծի մեջ է դրել (fixes – неподвижный):

Հայերենը հնարավորություն ունի այս դրությունից դուրս գալու, բայց առայժմ՝ ոչ: Մենք կարող էինք ասել

“սենտուն կապիտալ”, որով բոլոր ղեկավարում կլուծվին դժվարությունները:

Փաստորեն “հիմնական – основной” արտահայտությունը տվյալ ղեկավարում սխալ է. *հիմնականը* հակադրվում է *զուգրնթացին*, *երկրորդականին*, այնինչ այստեղ հակադրությունը պետք է լինի “շրջանաժու” զաղափարի վերաբերմամբ:

Որքան հեշտ էր “մշտական կապիտալ” վտարելով ասել “հաստատուն կապիտալ”, այնքան դժվար է “հիմնական կապիտալ” սխալ արտահայտության փոխարեն ասել “սենտուն կապիտալ”, որ համակրողական գործածություն ունի:

Տերմինաբանական այս ռեֆորմն ազագայի գործ է :

Թաղ. Ավդալբեգյան

1935թ. նոյեմբերի 25- ին,
Երևան

Կուսիրատի թարգմանիչների 1936 թվականի մարտի 27–ի ժամի 7–ին գումարված խորհրդակցությանը կարդացած զեկուցման

Առաջաբանը¹

I

1) «Կապիտալի» հայերեն թարգմանության ու տերմինաբանության մասին գումարված այս խորհրդակցությունը ժամանակաբանորեն երկրորդն է:

2) Առաջին խորհրդակցությունը հրավիրվել է Մարքսիզմ–Լենինիզմի ինստիտուտում, 1932թ. առաջին կիսամյակի վերջերին, երբ տպագրության էի հանձնում «Կապիտալի» հայերեն թարգմանության առաջին հատորը:

3) Խորհրդակցությանն այն ժամանակ մասնակցում էին Ինստիտուտի նախագահությունը, Պետհրատ–Կուսիրատի վարիչը կամ վարիչները, հրավիրված էին տնտեսագետ ու լեզվաբան մասնագետներ, առաջնակարգ թարգմանիչները, որոնց շարքում հատկապես «Ռուս–հայերեն նոր բառարանի» հանձնաժողովի անդամները²:

4) Խորհրդակցությունը, ինչպես հայտնի է, հավանություն տվեց, «Կապիտալի» հայերեն տերմինաբանությանն ընդհանուր առմամբ ու համապատասխան կարգադրություն ուղարկվեց նույնիսկ տպարանին էլ:

5) Ի՞նչ խնդիրներ կային այն ժամանակ դրված օրակարգում:

¹ Խորհրդակցությանը ներկա են եղել և մտքերի փոխանակությանը մասնակցել են Ն.Մոսկովանյանը, Մ.Արևելյանը, Ս.Կանայանը, Ս.Մյուսուպյանը, Լ.Տոնյանը, Ե.Տեր–Մինասյանը, Գ.Մրակչ Ավդալբեգյանի տուն զեկուցման նյութերը գրքում դասակարգված են ոչ թե՛ ժամանակագրական, այլ՝ գլխավոր, ապա բաղկացուցիչ մասերի ներկայացնելու սկզբունքով:

² Ռուս–հայերեն նոր բառարանի հանձնաժողովի նախագահն էր Թ.Ավդալբեգյանը, անդամներն էին Պ.Մոսկովյանը, Ե.Տեր–Մինասյանը, Լ.Փոթևյանը: Ռուս–հայերեն նոր բառարան, հհ. 1,11: Երևան, 1933–1935թթ:

Ինչպես ամեն մի տերմինաբանության բննության ժամանակ, «Կապիտալի» տերմինաբանությանն էլ պետք է մոտենալ Լրեր տեսակետով.

ա) թևորիական, Լրեր տերմինը բննվում է տվյալ մասնագիտության պահանջների, իմաստի ճշտության տեսակետից

բ) լեզվա-քաղաքական, Լրեր տերմինը բննվում է տերմինաբանությունը Լրերապահանջներու կամ թև հայացներու տեսանկյունով, ու

գ) քերականական-հայերենագիտական տեսակետից, Լրեր այն բննվում է լեզվի բառակազմության օրենքների տեսակետից:

6) Թևորիական տեսակետից բննվող տերմինները քիչ էին. սրա պատճառը մեր տնտեսագիտական տերմինաբանության մեծ առաջադիմությունն էր 1921-1931 տասնամյակում. օրինակ արդեն վճռված ու բնդունված էին հետևյալ տարբերացումները.

- 1) *արտադրական* - *արտադրողական*,
- 2) *իդեալական* ու *իդեալան* (գին, շափ),
- 3) *արժևք* ու *արժույթ*,
- 4) *յրացուցիչ*, *հավելյալ*, *ավելադիր*,
- 5) *հաստատուն կապիտալ* փոխանակ *մշտական կապիտալի*,
- 6) *փոփոխուն կապիտալ*,
- 7) *շահ* ու *շահույթ*,
- 8) *փող* - *դրամ* ու *ստակ*,
- 9) *ըրջանառություն*, *ըրջապտույտ*, *պտույտ*,
- 10) *իրացում* - *իրականացում* են:

Մնում էր լուծելու *բանվորական* թև, *աշխատանքային* սերիան (ուժ, ժամանակ, օր, շաբաթ, արդյունք) և լուծվեց հոգուտ *աշխատանքային*: Սրանով մեր տերմինաբանությունն անցնում էր գերմաներեն տերմինաբանության ուղիսի վրա:

Տաստատվեց Լրերորդ կարևոր նորությունը, հետևյալ տարբերացումը.

Պահանջ - Forderung - Anspruch - требование,
պահանջումը - Bedürfnis - потребность ու
պահանջարկ - Nachfrage - Angebot - предложение.

7) Լեզվա - քաղաքական տեսակետից

ա) հայացումներ - *արդյունք*, *արդյունարևություն*, *համարժևք*, *իրացում*

բ) Լրերապահանջումներ - *կապիտալ* են ու հատկապես *ուժնտա* (փոխանակ *դրամագլխի* են ու *հասի* կամ *հողահասի*, որ առաջարկում էր Կասյանը):

8) Քերականական տեսակետից աշխատանքային սերիայից *աշխատանքային ուժ*, թև, բարդ բառով. Լրեր այդ, *աշխատանք*, թև, *աշխատուժ*: Անցավ վերջինս:

Տնմտ. բազմամյա, ոչ թև, բազմա - ամյա,

նորևկ,	..	նորա - ևկ,
վայրլջր,	..	վայրա - ևջր,
թոշնորս,	..	թոշնա - որս,
հյուրրնկալ,	..	հյուրա - բնկալ,
հանրօգուտ,	..	հանրա - օգուտ են:

II

1) Առաջին խորհրդակցությունը վերաբերում էր «Կապիտալի» մեկ հատորին՝ I-ին:

2) Այս խորհրդակցությունը վերաբերում է հաջորդ Լրերու գրքերին - II հատորին, որի թարգմանությունը վերջանալու վրա է, ու III, հատորին, որի թարգմանությունը հանձնված է անցյալ տարվա սկիզբներին - 1935թ. փետր.

3) Մինչև առաջին խորհրդակցության ժամանակ տերմինաբանությունը նյութ էր տալիս Լրեր տեսակետից բննելու համար, այս խորհրդակցությանն առաջարկվող տերմինաբանությունը էր տալիս Լրերու տեսակետից բննելու համար միայն՝ թևորիական-մասնագիտական ու քերականական-հայերենագիտական: Լեզվի քաղաքականության վիճելի հարցեր չկան, որով հետև այս տերմինաբանությունը արդեն քաղաքացիություն ստացած հայերեն բառերի խումբ է ներկայացնում:

4) Մեր բննարկման գլխավոր նյութը

ա) թևորիական բննարկման ենթակա տերմինաբանությունն են ու
բ) հայերենի բառաբարդման տեղեկացի վերհանումը «Կապիտալի» տերմինաբանության կապակցությամբ:

5) Անցնենք տերմինաբանության, որոնք դասավորված են քաղաքատնտեսության նյութի շարադրանքի պահանջած կարգով - սկսելով *արժևք* - ից ու վերջացրած նրա ձևերով՝ *շահույթ* - ով, *տոկոս* - ով և այլն:

«Կապիտալի»

II ու III, հատորների հայերեն թարգմանության
ու տերմինաբանության հարցերից

I

Verwertung, Selbstverwertung.

- | | |
|--|---|
| <p>1) «Արժեքավորում» ու «ինքնարժեքավորում» – սխալ է թևորիական ու բառակազմական տևաակնունդից</p> <p>2) Ռուսերենը թարգմանում է – «увеличение стоимости», «возрастание стоимости», «самоувеличение стоимости», որոնք ճիշտ են:</p> <p>3) Հայերենը թարգմանում է «արժեքի աճում», «արժեքի ինքնաճում», «արժեմեմացում», «արժեքի ինքնամեմացում» (բայց ոչ «ինքնարժեմեմացում»):</p> | <p>հմմտ. 1) արատավորել
զուլավորել
թունավորել
լուսավորել
պարենավորել</p> <p>2) պեկորել
զլիտավորել
դիմավորել
սպասավորել</p> |
|--|---|

II

Überzeit, Überarbeit, Überarbeitung, Überprodukt, Überwert.

- | | |
|---|---|
| <p>1) Mehr-ի և über-ի տարբերությունները թևորիական տևաակնունդից</p> <p>2) Ռուսերենը թարգմանում է տարբեր ու մոտավոր իմաստներով – «добавочный», «дополнительный», «сверхурочный» ամականներով</p> <p>3) Հայերենը թարգմանում է միշտ «գեր»-ով – «գերժամանակ», «գերաշխատանք», «գերարդյունք», «գերարժեք» (վերջինս բոլորովին տարբեր է ռուսերեն «сверх-стоимость»-ից):</p> <p>4) «Գեր»-ով թարգմանում ենք նաև (Überprofit) surplusprofit-ը = «գերշահույթ», որ բոլորովին նույնն է, ինչ որ է Extra-profit = <i>արտակարգ շահույթ</i>։ Մրանով հայերենն ազգի հետևողական տերմինաշարք է ունենում, քան ռուսերենն ու գերմաներենը հմմտ. сверх-стоимость ու сверх-прибыль և surplusarbeit ու surplusprofit.</p> | <p>հմմտ. ոչ թե գերմարդ, այլ
գերարտադրել
գերազնահատել
գերավճարել
գերալքել
գերարտադրություն և ն</p> |
|---|---|

Հ.Ա.Խ.Յ. ՄԱՐՔՍԻՉՄԻ-ԼԵՆԻՆԻՉՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴՊՈՒՑԱՐՆԵՐ ԾՈՒՈՐ ԶԵՐԿՈՒՄԻ, ՄՈՒՑԵՐ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ԿԱՊԻՏԱԼ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ �ՐՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՑՈՐ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԹ

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՑԵՍԸ

ԳԵՐԱՆՏԵՆՆՈՑ ՔԱՂԱՔԱՏ
ՔԱՂ. ԱՎԴԱԼԵՆԳՅԱՆ


Հ.ԳՅՈՒՄԵՆԵՎՈՅԵՆՆԱՆ ԵՄԱՐՔՍԻ ԹԻՆԿԱՏՆԱԾԱՆԻ
ԽՄԵԱԳՐՈՒԹՅԱՄԹ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ * 1933



Ավանդակներ վերարտադրության թերիայից



«Կապիտալի» հրատարակության հայտարարությունը, որտեղ բացակայում է թարգմանչի անունը: «Լենինյան ուղիով» 1933 թ. N 4-5

"Կոչեքոյի" I-ի կարգի կարգի
հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1933 թվականի հունիսի 3-ի ժողով-
քի մեծ 1-ի: Քան. Արմ. Արմ. Արմ.

"Կոչեքոյի" II-ի կարգի կարգի
հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1936 թ. ապրիլի 2-ի
և ժողովի մեծ 3-ի: Քան. Արմ. Արմ.,
և այլն:

Քան. Արմ. Արմ. Արմ.

2/11 1936

Կոչեքոյի:

~. II. ~

"Կոչեքոյի" III-ի կարգի կարգի
հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1935 թ. հունիսի 19-ի. ժողովի
մեծ 6-ի: Քան. Արմ. Արմ., այդպես էլ կարգի
հասցիները որոշեցի և արձանագրեցի
այդպիսի փոփոխության և այլն:
2/11 Քան. Արմ. Արմ. Արմ. Արմ.:

Գիշատակություններ

"Կոչեքոյի" կարգի կարգի կարգի

Հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1937 թ. հունիսի 10-ի. ժողովի
մեծ 20-ի: Քան. Արմ. Արմ., այդպիսի
և այլն:

Հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1931 թ. ապրիլի 2-ի
և այլն:

"Ներսիս զուհի!"

Հասցիները որոշեցի և արձանագրեցի
ապրիլի 1937 թ. հունիսի 10-ի. ժողովի
մեծ 20-ի: Քան. Արմ. Արմ., այդպիսի
և այլն:

Քան. Արմ. Արմ. Արմ.

1937 թ. հունիսի 10-ի.

Կոչեքոյի,
Կոչեքոյի փոփոխություններ:

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

4 4

ԿԱՊԻՏԱԼ


խոշորագույն արտադրության փնտռանքները

ԿՈՄՄՈՆԻՅԱՆ

Գերմանիայի քաղաքացիական
ԹԱՂ. ԱՎՂԱԿԵՑՅԱՆ

2
1933 ————— 31 դեկտեմբեր
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ձևավորումները Մարտիկ Ավիաբեգյանի



Գրությունը և փոստը ընդհանուր
համարները

Կապիտալիստական
արտադրության
փնտռանքները
Կ. Մարքս

ԿԱՊԻՏԱԼ
I

(Մարքս)

Մակագրված է «Շարի. այս ձևավորման համաձայն ենք». ստորագրել են
«Կապիտալի» խմբագիրներ՝ Ն. Մակինցը, Ն. Գյուլիբեկյանը և
Ն. Ստեփանյանը

Handwritten text in Armenian script on aged paper. At the top right, the number "3" is written. The main text includes:

„Կապիտալի” առաջին հարթորի
 հայերեն թարգմանության անգլերենի հրատարակումը
 Երևան Ե Կրտսեր

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ - 12-րդ հոկտեմբեր
 Նահանգն Երևանի
 1883 $\frac{IV}{III}$ 1933
 արթիվ

Below this, there are several lines of text, some crossed out with red ink, and a signature. At the bottom, there is a vertical list of names or terms, also with some red markings.

III

Fixiertes Kapital, fixes Kapital, Grundkapital.

- 1) Ռուսերենն առաջին թարգմանում է „фиксированный капитал”, կամ “закреплённый капитал”, իսկ Լրկրորդն ու Լրրորդը՝ “основной капитал”.
- 2) Հայերենը զիջելով ռուսերենի համեմատ ձևված ու արդեն արմատացած տերմինաբանությանը՝ “հիմնական կապիտալ- բառերով թարգմանում է թվ. “fixes Kapital”-ն ու թվ. “Grundkapital”-ը:
- 3) Թևորհապես անխոցելի թարգմանությունը կլիներ “սեռնացված կապիտալ”, “սեռնուն կապիտալ” ու “հիմնական կապիտալ”, որոնք իրարից բոլորովին տարբեր իմաստներ ունեն: Հիմնական = գլխավոր օրինակ, “մեր ներդրումների հիմնական մասը”, “բառի հիմնական = բուն իմաստը”: Հիմնականը հակադրվում է Լրկրորդականին, այնինչ սեռնունը հակադրվում է թափառու նին, շրջանառուին

